# ԷՋՄԻԱԾԻՆ

1987

Ա.

Ане.146



ԽԴ
ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս

1987

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# Խմբագրական

## Ի ՍԵՐ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԻ

1. Խմբագրությունս անցյալ հոկտեմբերին հրատարակեց մի խմբագրական՝ «Ի սեր Եկեղեցու միության» խորագրով, պաշտպանելով մեր Մայր Եկեղեցին մի կազմական կանոնադրությամբ օժտելու անհրաժեշտությունը, այն համոզմամբ, թե նման մի կանոնադրությամբ ամրապնդված կլինի ներքին միությունը Եկեղեցու, ճշտված՝ իրավասության սահմանները մեր նվիրապետական Աթոռների և սկզբնավորված ներդաշնակ գործակցությունը նրանց միջև:

Ըստ երևույթին, սակայն, արտասահմանյան որոշ թերթեր ծուռ հայելու մեջ են տեսնում Մայր Աթոռիս ճիգերը այդ ուղղությամբ և երևակայական արտառոց պատկերացումներով ձգտում են շփոթեցնել իրենց բարեմիտ ընթերցողներին:

Վերջերս ստացանք նման խմբագրականների մի նոր շարք՝ Միացյալ Նահանգներում լույս տեսնող նույն «Հայրենիք» օրաթերթում, նույն արտառոց վերագրումներով Մայր Աթոռիս և հատկապես կանոնադրության նախագիծը մշակող Հանձնաժողովի անդամների հասցեին: Խմբագիրը մի կողմից՝ չափազանցված ժխտական ձևով ներկայացնում է այժմյան սփյուռքյան եկեղեցական ու ազգային կյանքի պատկերը, իբրև անկազմակերպ ու անկարգ, և մյուս կողմից՝ մոլեգնորեն հարձակվում է եկեղեցական մի ներքին կանոնադրության մշակման գաղափարի վրա, որի հիմնական նպատակն է հենց՝ կարգ ու կանոն և ներդաշնակ մթնոլորտ ստեղծել Սփյուռքում, գեթ եկեղեցական կյանքի մակարդակի վրա:

Ահա մի մեջբերում «Հայրենիք» օրաթերթից (22 նոյեմբեր 1986 թ.):

«Բառին նոյնիսկ սահմանափակ իմաստով ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ գոյութիւն չունի սփիւռքեան ժողովուրդի լայն խաւերուն մէջ, ինչ որ դուռ կը բանայ եւ ճամբայ կը հարթէ անհակակշիռ կեանքի, **կամայական գործունէութեանց, սանձարձակ անիշխանութեան, կարգ-կանոնի եւ պատասխանատուութեան զգացումի** չգոյութեան, լճացումի, հետեւաբար նաեւ... ճահճացումի. բարքերու եւ սովորութեանց՝ որոնք կ'ամլացնեն ժողովուրդի կենսունակութիւնը եւ զայն կը վերածեն փակ ականջներով եւ կոյր աչքերով օրուան հոսանքին յանձնուած հաւաքականութեան»:

«Ախտանշելի իրողութիւններէն մէկն է ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՒԱՆԴԱԳԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ»:

2. Խմբագրի սույն ախտորոշումը թեև խիստ չափազանցված է, բայց որոշ չափով ճշմարտություն պարունակում է: Ճշմարտություն կա հատկապես եկեղեցական կյանքի տեսակետից, որովհետև ազգային-հասարակական կյանքի մակարդակի վրա բնական պետք է նկատել կարգ ու կանոնի չգոյությունը: Սփյուռք նշանակում է ցրվածություն, հետևաբար բազմազանության խառնարան, հետևաբար անհամերաշխություն: Սակայն այդ խառնարանի մեջ եթե կա մի կազմակերպություն, որ կարող է և անհրաժեշտ է որ միավորող գործոն հանդիսանա, դա Հայ Եկեղեցին է: Եվ պատմականորեն էլ մեր Եկեղեցին այդ առաքելությունը ունեցել է և այն կատարել է պատվով: Դրա համար էլ նա կոչվում է ազգային Եկեղեցի, համազգային Եկեղեցի: Խմբագիրը, սակայն, ի վիճակի չէ անդրադառնալու, թե հենց այդ խառնակ կացությունը դարմանելն է, կարգ ու կանոն ստեղծելն է Մայր Աթոռիս նպատակը, Սփյուռքի եկեղեցական կյանքի մակարդակի վրա, համերաշխ գործակցությամբը մեր նվիրապետական Աթոռների, հատկապես Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և Տանն Կիլիկիո Աթոռի միջև:

«Հայրենիք»-ի խմբագիրը պարզապես զոհ է գնում իր խանգարված երևակայության և փորձում է պղտորել սփյուռքահայ կյանքի ջրերը, չգիտես ի՞նչ նպատակով, համենայն դեպս ո՛չ հոգուտ Հայ Եկեղեցու, ո՛չ հոգուտ հայ հավատացյալ ժողովրդի և ո՛չ էլ հոգուտ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հեղինակության: Եվ անշուշտ ո՛չ էլ հոգուտ Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին: Սակայն նման մտահոգություն չունի խմբագիրը, գի հայտնի չէ, թե ո՞րն է «Հայրենիք»-ի հայրենիքը:

3. «Հայրենիք»-ի խմբագիրը, մեղադրելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, թեմերի և եկեղեցիների ժողովրդավարական կարգ ու կանոնի կապակցությամբ միգուցե ի նկատի ունի Հարավային Ամերիկայի հայոց թեմական—եկեղեցական կյանքի և կամ Ֆրանսիայի հայոց թեմական վերակազմակերպումի պարագաները:

Ճշմարտությունը այն է, որ Մայր Աթոռս տարիներից ի վեր բազմիցս պաշտոնապես պատկան եկեղեցական մարմիններին հայտնել է այդ մասին իր մտահոգություններն ու թելադրանքները՝ տվյալ շրջանները օժտելու թեմական-եկեղեցական կառույց ունեցող կանոնադրություններով, հիմնված եկեղեցական կարգ ու կանոնի և ժողովրդավարական սկզբունքների վրա: Թեև պետք է ասել նաև, որ վերոհիշյալ թեմական շրջաններում էլ եկեղեցին ղեկավարվում է ժողովական դրությամբ, առավելապես աշխարհական անձերով, որտեղ կղերապետության հետքն իսկ գոյություն չունի:

Մենք վստահ ենք, թե վերոհիշյալ շրջանները ևս, տեղի եկեղեցական վարչությունների սրտցավ աջակցությամբ, մոտ ապագայում կօժտվեն թեմական-եկեղեցական կառույց ունեցող կանոնադրություններով՝ ժողովրդավարական սկզբունքների համաձայն:

4. Եկեղեցու ղեկավարման ժողովրդավար սկզբունքները իրականում վաղուց կյանքի են կոչված Մայր Աթոռիս բոլոր թեմերում, բոլոր համայնքներում, թե՛ Սփյուռքի տարածքի վրա և թե՛ մեր մայր երկրում: Ինչպես հայտնի է, մեր հայրենի ներքին թեմերում, Եկեղեցու ղեկավար Գործադիր մարմինները (հոգաբարձությունները), թեմական խորհուրդները և վերատուգիչ հանձնաժողովները ընտրված են համայնքների հավատացյալների կողմից, որոնց անդամակցում են թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք, ժողովրդավարա-

կան սկզբունքներով, Հայ Եկեղեցու ավանդական կանոնների և մեր երկրի օրենքներով նախատեսված կարգի համաձայն: Միայն վանական միավորները՝ Ս. Էջմիածնի Մայրավանքը, Վաղարշապատի չորս վանքերը, Ս. Գեղարդն ու Ս. Խորվիրապը գտնվում են ուղղակի Հայրապետական իշխանության ներքև, ըստ ավանդական կարգի: Ս. Էջմիածնի թեմերում, Հայաստանում թե Սփյուռքում, չկա ո՛չ կղերապետություն և ո՛չ էլ կուսակցապետություն:

5. Ճշմարիտ է, որ Հայ Եկեղեցու պատմական ընթացքում, իբրև հետևանք քաղաքական դժնդակ պայմանների, միջին դարերում, բարբարոսների արշավանքների ժամանակաշրջանում, ապա նաև պարսկական և օսմանյան տիրապետության ժամանակ, հաճախ տիրել է անկազմակերպ ու անկարգ վիճակ մինչև 19-րդ դարի կեսերը: Եղել են, այո՛, կանոնական խախտումներ նվիրապետական Աթոռների միջև, ստեղծվել են հակաթոռ կաթողիկոսություններ, տեղի են ունեցել զեղծումներ, չարաշահումներ կալվածական գործարքներում անարժան հոգևորականների և աշխարհական գործիչների մեղքով: Սակայն այդ անկարգ վիճակներին վերջ են տրվել կյանքի կոչվելով եկեղեցական երկու կանոնադրությունների, Արևելահայաստանում՝ 1836-ից, իսկ Արևմտահայաստանում՝ 1863-ից սկսած:

Արևելահայաստանում 1836-ին կյանքի կոչված կանոնադրությունը՝ «Պոլոժենիան» (Status), մի եկեղեցական կանոնադրություն էր՝ հաստատված ցարական իշխանության կողմից, իսկ Արևմտահայաստանում՝ «Ազգային Սահմանադրություն»-ը (Էրմենի պատրիկլիի նիզամատը), մի ազգային-եկեղեցական կանոնադրություն էր՝ հաստատված օսմանյան իշխանությանց կողմից: Այս երկու կանոնադրություններն էլ իրենց ժամանակին բարերար դեր են կատարել ոչ միայն զուտ կրոնական-եկեղեցական տեսակետից, այլև բախտորոշ նպաստ են հանդիսացել անցյալ դարի հայոց ազգային, կրթական, մշակութային և քաղաքական զարթոնքի ճանապարհի վրա:

Այո, հայոց եկեղեցական ու ազգային կյանքում բարերար դեր կատարեց «Պոլոժենիան» Արևելահայաստանում, որի հիման վրա կազմակերպվեց Հայ Եկեղեցու վարչական, կրթական ու տնտեսա-ֆինանսական կյանքը: Բավական է հիշել միայն Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսեսյան վարժարանի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, ինչպես նաև Երևանի, Նոր Նախիջևանի, Աստրախանի թեմական դպրոցների պատմական դերը հայոց ազգային-մշակութային, քաղաքական կյանքում: 19-րդ դարի գրեթե բոլոր գրական և քաղաքական ծանոթ դեմքերը, որոնք արևելահայոց վերածնունդը կերտեցին, եղել են շրջանավարտները վերոհիշյալ կրթական մեծ հաստատությունների, որոնք գոյություն էին առել և գործել ցարական Ռուսաստանի օրոք, «Պոլոժենիայի» եկեղեցական կանոնադրության օրինական հիմքերի վրա: Պատահական չէ, որ հայ ազատագրական շարժումը կազմակերպված ձև է ստացել առավելապես արևելահայոց ղեկավարությամբ:

6. Տարբեր պայմաններում, նույն դերն է վիճակվել արևմտահայության կյանքում «Ազգային Սահմանադրության», որ հաստատվել էր օսմանյան իշխանության կողմից 1863-ին, և արդյունքն էր հայ եկեղեցական և հայ մտավորական լուսամիտ գործիչների երազանքների ու երկարամյա պայքարի: Իր ժամանակին, 1863-ի «Ազգային Սահմանադրություն»-ը հանդիսացել է թրքահայոց ազատամիտ առաջադեմ սերունդների հաղթանակը հայ եկեղեցական ու ազգային-հասարակական կյանքում, թեև, ավաղ, այն տեվապես չի գործադրվել, վերածվել է «քառակուսի անիվի» (Խրիմյան Հայ-

րիկի ծանոթ բանաձևումով), և երբեմն նույնիսկ կախակայվել է, իսկ Սսի Կիլիկյան Աթոռը ճանաչում իսկ չի տվել «Ազգային Սահմանադրության» ու մերժել է գործադրության դնել այն:

Բնական է, թե՛ «Պոլոժենիան» և թե՛ «Ազգային Սահմանադրություն»-ը պատկանում են հեռավոր անցյալին, լինելով դրսևորումները անցյալ դարի հայոց կյանքի պայմանների, և որոնք մեր օրերին գոյության ո՛չ իրավական հիմք ունեն և ո՛չ էլ համապատասխանում են մեր ժողովրդի եկեղեցական ու ազգային կյանքի պայմաններին, մայր երկրում թե արտասահմանում:

7. Այս բոլոր պատմական տվյալներից և «Հայրենիք»-ի աղմկարարությունից՝ հստակ մի բան է պարզվում, այն, որ Հայ Եկեղեցին մի ներքին կազմական կանոնադրությամբ օժտելը անհրաժեշտ և օգտակար է, վերջ դնելու համար վերջին տասնամյակներում մեր Եկեղեցու ծոցում հաջառացած անկարգ արարքներին, կանոնազանցություններին, ներքին տագնապներին, կամայականություններին և չարաշահումներին, որոնցից գանգատվում է հենց ինքը խմբագիրը:

Այո, ի սեր կարգ ու կանոնի անհրաժեշտ է կյանքի կոչել մի կազմական կանոնադրություն մեր Եկեղեցու կյանքում, իբրև փրկարար լաստ:

Մեր կարծիքով նման մի կանոնադրությամբ կարող են իրականանալ հետևյալ ցանկալի առաջադրանքները՝

ա. Հոչակել միությունը և մեկությունը Հայ Առաքելական Եկեղեցու և միասնությունը հայ հավատացյալ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, զուտ կրոնական կյանքի մակարդակի վրա, առանց քաղաքական կուսակցական միջամտությունների ոչ մի կողմից: Եկեղեցին ու նրա ծառայողները, հոգևորականներ թե աշխարհականներ, պետք է վեր մնան ու անկախ՝ կուսակցություններից և քաղաքական գաղափարախոսական հոսանքներից: Այո, հարկավոր է հանգիստ թողնել Եկեղեցուն, որպեսզի նա կարողանա վերագտնել իր ներքին միությունը և կարգ ու կանոն հաստատել իր տան մեջ:

Եվ անբնական ու անկարգ երևույթ չէ՞ միթե, որ առավելապես Եկեղեցուն վերաբերող կենսական հարցերի մասին՝ մի կուսակցության պաշտոնաթերթ աղմկում է հրապարակը անվերջանալի խմբագրականներով, իբր թե ի պաշտպանություն Տանն Կիլիկիո Աթոռի, մինչ ինքը Կիլիկյան Աթոռը լուռ է մնում և հավանաբար տրտում:

բ. Հոչակել կանոնական միությունը Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների և հատկապես հոգևոր գործակցությունը և միասնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միջև, իրավասությանց սահմանների ճշտումով:

գ. Նվիրագործել ներդաշնակ գործակցությունը հոգևորականաց դասի և աշխարհական հավատացյալների միջև հավասար իրավասություններով՝ եկեղեցական, վարչական և ֆինանսական կազմակերպության մակարդակի վրա, առանց գերակշիռ դեր վերապահելու մեկին կամ մյուսին:

դ. Հստակորեն հաստատել ժողովրդավարական և ժողովական ղեկավարման դրությունը Եկեղեցու կյանքում, համայնքային և թեմական կազմակերպությանց մակարդակների վրա:

ե. Դավանական, եկեղեցա-կանոնական, հոգևորականաց կարգապահության, կրոնական, ծիսական բարեկարգությանց հարցերի քննարկումը և լուծումը վստահել եպիսկոպոսաց իրավասության և կաթողիկոսական կանոնական հաստատման:

8. Նոր տարվա սեմին, այս խոհերով և սպասումներով, խմբագրությունս մաղթում է իր ընթերցողներին արևշատ խաղաղ օրեր, բարի գործերի հաջողությամբ, համայն աշխարհի խաղաղ գոյակցության պայմաններում:

Թող մեր Վեհափառ Հայրապետի աղոթքը խնկի նման ուղիղ դեպի երկինք բարձրանա՝ «Թող բարին Աստված քաղցրությամբ ընդունի մեր և ձեր աղոթքները, և Սուրբ Ծննդյան շնորհները թող առատապես իջնեն մեր Մայր Եկեղեցու, մեր հավատավոր ազգի բոլոր զավակների վրա, այլև համայն մարդկության վրա». ամեն:

Շնորհավոր Նոր տարի և Ս. Ծնունդ:



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1987 թ.)

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հավատացյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Սուրբգրական Արարատյան Հայոց աշխարհից, Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի բարձունքից վերստին բերում ենք ձեզ բոլորիդ մեծ ավետիսը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան:

Այո, այսօր տոն է Սուրբ Ծննդյան՝ ավետիս:

Ծնվեց Քրիստոս Փրկիչ արքան՝ ավետիս:

Երկինք երկիր հաշտվեցին՝ ավետիս:

Հնչեց ձայնը խաղաղության՝ ավետիս:

Պատմության հարափոփոխ ժամանակների ու ճանապարհների վրա, մարդկային բազմությունների մշտատև երազանքն ու աղերսն է եղել աշխարհում տեսնել խաղաղության և մարդկանց միջև բարի կամեցողության թագավորումը:

Ու երկու հազար տարիներ առաջ, Աստվածորդու Ծնունդը խաղաղության սպասման շեփորումով, հանդիսացել է երկնքի սպասախանը, խաղաղության և բարի կամեցողության ծարավի մարդկանց ու ազգություններին: Պատգամ, որ ինչքան ժամանակները եկել ու անցել են, այն-

քան առավել հրամայական է դարձել, ի խնդիր մարդկային կյանքի ու քաղաքակրթության գոյատևման երկրի վրա:

Այսօր, Սուրբ Ծննդյան տոնի առավոտյան, մեր Մայր Եկեղեցին և Մենք՝ առաջին սպասավորը նրա, փառաբանում ենք լուսաբացը Քրիստոսի փրկչագործ կյանքի, որը սկիզբ է առել խաղաղության և ի մարդիկ հաճության աստվածառաք պատգամով:

Քրիստոսի ծնունդով, պատմության հորիզոնի վրա ճառագայթել է, այո՛, խաղաղության փրկարար գաղափարը, և մահախուճապ սերունդներ, մանավանդ խոնարհ ու ճնշված մարդկային զանգվածներ, երկու հազար տարիներ շարունակ երազել են, տքնել ու մարտնչել են, վերջապես աշխարհի վրա կյանքի կոչված տեսնելու համար թագավորումը խաղաղության գաղափարի:

Մեր օրերին էլ շարունակվում է այդ սրբազան մարտնչումը, և մանավանդ մեր օրերին, երբ մարդիկ ձեռք են բերել պատերազմելու ահարկու միջոցներ, մարդկային կյանքի գոյատևմանը սպառնացող զենքեր:

Ի՞նչ ողբերգություն, ի՞նչ ողբերգական ճակատագիր այսօր, երբ մարդկային իմացական հանճարը հայտնաբերել է նյութի ցարդ անծանոթ անչափելի ուժերը, որոնք կոչված են երջանկաբեր դառնալու մարդկային կյանքի համար, նույն այդ հրաշագործ ուժերը կարծեք վերածվելու են երկրի վրա կյանքը բնաջնջող դժոխային մեքենաների:

Ատոմական ուժերը ծառայեցնել մարդկության բնաջնջման, արդյոք չի՞ նմանվում Բաբելոնի աշտարակը կառուցող խելագարներին, որոնք երկինք բարձրանալու, տիեզերքը նվաճելու աշխարհակալ գոռոզ մտածումով հետամտում էին Աստծուն հասնել ու նրա ստեղծագործությունը կործանել: Մեր օրերին էլ, հյուլեի ուժերը սանձազերծել՝ պատերազմական, մարդասպան նպատակներով, նույնպես խելագար ժխտումն է Քրիստոսի ծննդյամբ շեփորված խաղաղության ավետիսի:

Մեր քրիստոնեական խիղճը, մեր բարոյական գիտակցությունը թելադրում են մեզ հպատակվել Աստուծո խաղաղարար պատգամին և ընդդիմանալ պատերազմին, ընդդիմանալ ամեն տեսակի սպառազինություններին: Եվ հոգեկան մխիթարություն է Մեզ համար, որ ազգությունների խաղաղ գոյակցության հրամայականը հետզհետե առավել թափով համաշխարհային ծավալ է ստանում ամեն տեղ մեր երկրագնդի վրա, և բազմաթիվ պետությունների պատասխանատու ղեկավարներ հանդես են գալիս ի պաշտպանություն խաղաղության մարդասիրական քաղաքականության, որոնց շարքին առաջին գծի վրա է գտնվում Սովետական Միության կառավարությունը, այնքան վճռական հետևողականությամբ ու լավատեսությամբ:

Մենք աղոթում ենք տիվ և գիշեր, որ Աստված զորավիգ ու մարտակից լինի խաղաղարար պետություններին, որ դադարեցվեն ամեն տեսակի սպառազինումները, որ սկիզբ առնի ընդհանուր և ամբողջական զինաթափում, որ միլիոնավոր մարդկանց արյունով ներկված քսաներորդ դարը, հաջորդող դարին փոխանցի մի մարդկային նոր աշխարհ առանց հրի և սրի:

Մեր այս աղոթքը բխում է նաև Հայ Եկեղեցու և նրա հավատացյալ ժողովրդի խղճից, մի Եկեղեցի ու մի ժողովուրդ, որ դարեր ու դարեր շարունակ ճնշվել է և նահատակվել այլազգի պատերազմող աշխարհակալների ամբակների տակ, մի Եկեղեցի ու մի ժողովուրդ, որի մեկ երրորդը, մոտ երկու միլիոն խաղաղ ազգաբնակչություն, բնաջնջվել է իր

պատմական հայրենի հողի վրա իսկ, առաջին համաշխարհային պատերազմի 1915 և 1916 թվականներին, մի Եկեղեցի ու մի ժողովուրդ, որ ահա մոտ յոթ տասնամյակներից ի վեր հասել է իր ազգային կյանքի խաղաղության նավահանգստին ու ապրում և զարգանում է ապահով ու անվտանգ պայմաններում՝ վերածնված իր հայրենի արդի պետության հովանու ներքև, սովետական բազմազգ հանրապետությունների մեծ ընտանիքում:

Մեր Եկեղեցու և ժողովրդի բոլոր արդար իղձերի, բոլոր լույս երազանքների իրականացումը պայմանավորված է համայն աշխարհի ու մեր վերածնված հայրենիքի խաղաղության և անվտանգության պահպանմամբ: Հայ ժողովրդի արդար իտեալների հետապնդումը, լավատեսությամբ է դրոշմվում մեր մայր երկրի արդի պայծառ իրականությամբ:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ Մեր աղոթքը, ահավասիկ Մեր խոհերը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան այս լուսաշող առավոտյան:

Թող բարին Աստված քաղցրությամբ ընդունի Մեր և ձեր աղոթքները, և Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնության շնորհները թող առատապես իջնեն մեր Մայր Եկեղեցու, մեր հավատավոր ազգի բոլոր զավակների վրա, այլև համայն մարդկության վրա: Այդ շնորհներով լուսավորված ու գոտեպնդված՝ աշխարհի բոլոր մեծ ու փոքր պետությունները թող գտնեն խաղաղ կյանքի ու համերաշխ գործակցության ճանապարհները, միասնական ճիգերով՝ համբերությամբ ու լավատեսությամբ:

Եկեք միսիթարվենք այսօր այն հավատքով, թե երկնառաք խաղաղության գաղափարը հաղթությամբ է պսակվելու, զի նա է հանդիսանում հզորագույն զենքը: Եվ ով արդար է, թող վերցնի խաղաղության զենքը, զենքը աստվածսիրության, զենքը մարդասիրության, զենքը իրավ հաղթության:

Եվ հայնժամ պիտի իրականանա տեսիլքը մեծ սաղմոսերգուի՝ «Արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. ՁՁ 11):

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ»: Ամեն:



## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն**
**ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ** (Հռոմ),
**Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ** (Ստամբուլ),
**Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ՊԻՄԵՆԻՆ** (Մոսկվա),
**Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԴԻՈԴՈՐՈՍԻՆ** (Երուսաղեմ),
**Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱՄԲԱԲ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ** (Կահիրե),
**Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ** (Ադիս Աբեբա),
**Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ** (Քոթայամ),
**Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն**
**ԻԼԻԱ Բ-ԻՆ** (Թբիլիսի),
**Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԹԵՈԿՏԻՍՏԻՆ** (Բուխարեստ),
**Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ՄԱՔՍԻՄԻՆ** (Սոֆիա),
**Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԱՔԱ Ա ԻՎԱՍԻՆ** (Դամասկոս),

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈԹԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Կերկե),
Նորին Ամենապատվություն կարդինալ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Դոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈՒԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՏՐԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷԴԳԱՐ ՀԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտի ընդհանուր քարտուղար Հայր ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա).

Երջանիկ ենք Սուրբ Էջմիածնից Ձերդ Սրբության հղել մեր շնորհավորանքը և եղբայրական ողջույնը մեր Տիրոջ և Փրկչի Սուրբ Ծննդյան սքանչելի տոնի առթիվ՝ մաղթանքով, որ երկնառաք պատգամը «խաղաղության և ի մարդիկ հաճության» դառնա փրկարար ճանապարհը մեր օրերի

տագնապահար մարդկության ի լրումն սաղմոսերգուի մարգարեության՝ «ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»:

Մեր աղոթքն է նաև, որ Տերը միշտ անսասան ու ծաղկյալ պահպանի ձեր պատմական մեծ Եկեղեցին ու Ձերդ Սրբության շնորհի երջանիկ հովվապետության բազում տարիներ խաղաղած մի աշխարհի մեջ:

Շնորհք Ս. Ծննդյան և Աստվածահայտնության Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ: Ամեն:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից նոր ոգեշնչումով հղում ենք Ձեզ մեծ ավետիսը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի հրաշալի Ծննդյան ու Աստվածահայտնության, աղոթքով արտաբուխ, որ Սուրբ Ծննդյան պատգամը՝ խաղաղության ու ի մարդիկ հաճության, հզորապես հնչի մեր օրերի աշխարհի վրա ի լրումն սաղմոսերգուի մարգարեության՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»:

Մեր աղոթքն է նաև, որ խաղաղած մի աշխարհի երկնքի տակ, անվընտանգ ու խաղաղ գոյատևի և շինարար վերելք ապրի մեր Մայր Եկեղեցին ու մեր հավատավոր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, կերտելով առավել պայծառ իր ապագան, միշտ խանդավառ ու լավատես, վերածնված մեր Մայր Հայրենիքի արդի ծաղկումով:

Մաղթում ենք ջերմապես, որ Տերը անսասան պահի ձեր պատմական Սուրբ Աթոռը և Ձերդ սրբության պարգևի քաջառողջություն երջանիկ հովվապետությամբ, մշտապես լուսաատ պահպանելով ձեր եկեղեցիներն ու կրթական և մշակութային հաստատությունները:

Շնորհք Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, այժմ և միշտ. ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար;



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Երևան

Հանուն Հայ Առաքելական մեր Եկեղեցու և անձամբ Մեր անունից հաճեցեք ընդունել Մեր և մեր հավատացյալ ժողովրդի շնորհավորանքը և բարի մաղթանքները Նոր տարվա ուրախ առիթով:

Մեր մշտատև աղոթքն է նաև, որ 1987 տարին իր հետ բերի առավել ամրապնդումը աշխարհի խաղաղության և ազգությունների համերաշխության և իրագործումը մեր հայրենիքի բոլոր շինարար, ժողովրդանվեր ծրագրերի:

Խորին հարգանքով՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

---

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին ուրախ սրտով Ձեզ ենք ներկայացնում Հայոց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր շնորհավորանքի խոսքը ու նաև ամենաբարի մաղթանքները Ձեր քաջառողջության և Ձեր հայրենաշեն գործունեության մշտատև հաջողությանց համար:

Թող նոր տարին լինի խաղաղ կյանքի տարի համայն աշխարհի համար և շինարար իրագործումների բարի տարի մեր հայրենիքի համար:

Խորին հարգանքով՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

---

## ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԻՆ

Մոսկվա

Նոր տարվո սեմին հանուն Հայ Առաքելական Եկեղեցու ու հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, Ձեզ ենք ներկայացնում Մեր ամենաբարի մաղթանքները Ձեր քաջառողջության և Ձեր հայրենանվեր գործոց հաջողության համար:

Սովետական ժողովուրդների համար նոր տարին թող լինի նորանոր նվաճումների և համայն աշխարհի համար խաղաղության տարի:

Խորին հարգանոք՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Երևան

Մեր Մայր Եկեղեցու և մեր հավատացյալ ժողովրդի անունից ուրախ ենք շնորհավորելու Ձեր Նոր տարին և մաղթելու Ձեզ մշտատև քաջառողջություն և հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության ճանապարհին:

Մեր մաղթանքն է նաև, որ նոր տարին լինի խաղաղության տարի աշխարհի բոլոր ազգությունների համար և վերելքի ու ծաղկումի տարի մեր վերածնած հայրենիքի համար:

Խորին հարգանոք՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

---

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ամանորի ուրախ առիթով շնորհավորանքներ և բարի մաղթանքներ եմ հղում Ձեզ: Թող բացվող 1987 թվականն էլ մեր հայրենիքի համար երջանկություն և նորանոր ձեռքբերումների տարի լինի: Թող հավերժ շարունակվի բանականության հաղթարշավը, և խաղաղությունը թևածի ամենուրեք: Ձեզ մաղթում եմ արևշատություն և նոր հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման Ձեր հայրենասիրական գործունեության մեջ:

**ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆ**
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

---

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքները Նոր՝ 1987 տարվա առթիվ: Ի սրտե Ձեզ մաղթում եմ երկար տարիների քաջառողջություն, երջանկություն, նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական ու խաղաղասիրական գործունեությունում:

Թող 1987 թվականը բերի խաղաղություն աշխարհի բոլոր ժողովուրդներին, նորանոր հաջողություններ և բարգավաճում մեր սովետական հայրենիքին:

**ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

---

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք սրտագին շնորհավորանքներ և լավագույն ցանկություններ Նոր տարվա առթիվ:

**ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎ**
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

---

Академия наук Армянской ССР Фундаментальная библиотека

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Նոր տարվա առթիվ հղում եմ Ձեզ ջերմագին շնորհավորանքներ և լավագույն մաղթանքներ: Թող նոր՝ 1987 թվականը լինի խաղաղության, ժողովուրդների բարեկամության, մեր հայրենիքի հետագա բարգավաճման տարի: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նոր հաջողություններ Ձեր խաղաղասիրական և հայրենանվեր գործունեությունում:

**ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան





## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հունվարի 5-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր տարվա առթիվ այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով:

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ տիար Հրաչիկ Վարդանյանը:



## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Հունվարի 5-ին, երկուշաբթի.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում հանդիսավորությամբ կատարվում է Ճրագալույցի արարողությունը:

Արարողության ընթացքում հոգևոր հայրերն ու ճեմարանի ուսանողությունը ընթերցում են Ս. Գրքի համապատասխան հատվածներ, որից հետո սկսվում է Ճրագալույցի ս. պատարագը: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագիչ սրբազան հայրը «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ: Հովիվքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի» (Շարական) բնաբանով (տես էջ 39):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նախագահեց Ս. Ծննդյան նախատոնակի արարողությանը:

Նախատոնակից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, ուր և ընդունեց Մայր Աթոռի միաբանության շնորհավորանքները:

**Հունվարի 6-ին, երեքշաբթի.—Տօն Ծընընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր, առավոտյան, տոնական ժամերգությունից հետո, օրվա մեծ տոնի առթիվ, Ամենայն Հայոց Հայրապետը ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա: Պատարագիչ Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Տ. Զավեն աբդ. Խաչատրյանը և Տ. Պարգև աբդ. Մարտիրոսյանը, ինչպես նաև Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Մայր Աթոռի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո հնչում է Փրկչի Ծննդյան մեծ ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը բովանդակալից քարոզ է խոսում՝ շնորհավորելով հայրենաբնակ ու Սփյուռքում գտնվող ողջ հայությանը Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ (տես էջ 8):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Ավագ խորանի վրա կատարում է Ջրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Հորդանան գետում Քրիստոսի մկրտության Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Պատարագից հետո Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, Մայր Աթոռի բաժինների ղեկավարներ և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթին մասնակցում էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը և տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը պաշտոնապես շնորհավորեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ տիար Գրիգոր Խանջյանի և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիար Պիոն Հակոբյանի 60-ամյա հոբելյանները: Ներկաները ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր ասացին:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՇԽՈՒՄ Է ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏԳԱՄԸ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԹԻՎ

(6 հունվարի 1987 թ., Ս. Էջմիածնի Մայր տաճար)

ՄԻ ՊԱՀ ՋՐՕՐՀՆԵՔԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
(6 հունվարի 1987 թ., Ս. Էջմիածնի Մայր տաճար)

АКАДЕМІЯ НАУК УКРАЇНСЬКОЇ РСР
Центральна бібліотека



## ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոր տարվա սեմին յուրաքանչյուր մարդ մի պահ մտածում է մարդկային բանականությամբ միայն մասնատված անսահման ժամանակի խորհուրդի մասին, մեկ անգամ ևս անդրադառնում մարդկային հասարակության մեջ իր գոյության դերին ու նշանակությանը, խորհում անցնող տարվա ընթացքում իր կատարած աշխատանքների, ձեռքբերումների ու կորուստների մասին և նոր ծրագրեր է կազմում՝ սկսվելիք տարին ավելի արդյունավետ անցկացնելու և բարի գործեր կատարելու: Այս է պատճառը, որ նոր տարվա սեմին մարդ իրեն ավելի երիտասարդ, կայտառ ու ժիր է զգում, մտածում նորովի ու էլ ավելի հետաքրքիր կերպով արժեքավորելու ժամանակի այս նոր միավորի յուրաքանչյուր պահն ու ակնթարթը:

1986 թվականի վերջին օրն է՝ դեկտեմբերի 31-ը: Ծքեղորեն զարդարված Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տոնական ուրախ խանդավառություն է տիրում: Պատմական Ղազարապատի միաբանական սեղանատան կամարների ներքո հավաքվել էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը, ինչպես նաև Մայրավանքի պաշտոնեությունը՝ Մայր Աթոռի հյուրընկալ հարկի ներքո Ամենայն Հայոց Հայրապետի հետ հրաժեշտ տալու անցնող տարվան և դիմավորելու նոր տարին:

Երեկոյան ժամը 20-ին ներկաները ծափահարություններով դիմավորեցին Վեհափառ Հայրապետի մուտքը սեղանատուն:

Ամանորի երեկոն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս պրն. Կոմիտաս Քեշիշյանի, կատարեց «Ճեմարանի քայլերգը»:

Հոգևոր ճեմարանի տեսչության անունից Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված իմաստալից խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի քարտուղար Տ. Հուսիկ քհն. Լազարյանը.

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգարժան անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ:

Մայր Աթոռի կյանքում գեղեցիկ ավանդություն է դարձել ամեն տարի դեկտեմբերի 31-ին, երեկոյան, Ձերդ Սրբության գլխավորությամբ հավաքվել Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, հայրենական բարիքներով ծանրաբեռնված սեղանների շուրջ, միասնաբար, ինչպես մի մեծ ընտանիք, դիմավորելու Նոր տարին: Տարեմուտի գիշերը հաշվետվության գիշեր է, անցնող ու նոր եկող տարվա ճամփաբա-

ժան: Մեզանից յուրաքանչյուրը, կանգնած այդ ճամփաբաժանին, խորհում է, թե ինչ է սպասում նոր ճանապարհին: Եվ քանի որ մարդուն միշտ հատուկ է լավատեսությունը, նա միշտ ուրախ հոգով է ճանապարհ ելնում: Երբեմն անբացատրելի է, թե մարդիկ տարեմուտի գիշերն ինչու են ուրախանում. անցնող տարվա, թե եկող տարվա համար: Կարծում եմ՝ Նոր տարվա համար, քանի որ Նոր տարին իր մեջ ունի հավետ վերականգնվող կյանքի խորհուրդը: Հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսներն ու սաները նույնպես՝ կանգնած այդ ճամփաբաժանին, խորհում են կատարած և կատարվելիք աշխատանքների մասին, գնահատում անցյալ տարվա գործունեությունը և աշխատում նոր ճանապարհը մտնել՝ ձերբազատված հին ճանապարհի փոշուց: 1986 թ. ճեմարանն ունեցավ իր շրջանավարտները, ավարտեցին յոթ սարկավագներ, որոնցից հինգը վերջերս պաշտպանեցին իրենց ավարտաճառերը: Մեկ շաբաթ առաջ հոգևոր ճեմարանի յոթ սաներ ձեռնադրվեցին սարկավագ և իրենց նոր ճանապարհը սկսում են իրենց կոչման գիտակցությամբ:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության ավելի քան երեսուն տարիների ընթացքում Մայր Աթոռը դարձավ ստեղծագործ եռուն աշխատանքով ապրող ու շնչող բազմանդամ մի ընտանիք, որտեղ բոլորը զգում են Ձերդ Սրբության հայրական հոգատարությունը: Այդ ընտանիքում իր ուրույն տեղն ունի հոգևոր ճեմարանը, որն, ինչպես ընդունված է ասել, հոգևոր սպասավորների պատրաստման դարբնոց է, և որպես այդպիսին դարձել է Մայր Աթոռի կենդանի զարկերակը: Այդ տեսակետից մեծ է հոգևոր ճեմարանի դասախոսների պատասխանատվությունը, մանավանդ որ նոր պայմաններում ավելի ու ավելի հրամայական է դառնում քրիստոնեական բարոյականությամբ ներթափանցված, գաղափարական բարձր մղումներով և տեսիլք ունեցող երիտասարդ հոգևոր սպասավորներ ունենալու անհրաժեշտությունը: Մենք այսուհետև էլ ջանք ու եռանդ չենք խնայելու, որպեսզի այդ ուղղությամբ Ձերդ Սրբության ու մեր սպասումները իրականանան և ապագայում էլ մեր Եկեղեցին ունենա նվիրյալ, լուսամիտ, իրենց հավատքի մեջ ամրապինդ, հայրենասեր ու մարդասեր, Ձերդ Սրբությանը արժանի հետևորդներ:

Այս տոնական ուրախ առիթով, թույլ տվեք, Վեհափառ Տեր, հանուն հոգևոր ճեմարանի ու դասախոսական կազմի շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և մաղթել, որ դեռ բազում երկար ու ձիգ տարիներ ծաղկուն մնա հովվապետական գավազանը Ձեր բարի ու գործունյա ձեռքերի մեջ, որպեսզի Ձեր իմաստուն ղեկավարության և հայրական հոգատարության ներքո աճի ու զորանա երկհազարամյա մեր Մայր Եկեղեցին, որպեսզի Աստվածաշնչական վեհաշուք լեռան փեշերին, հայրենական ջերմ արևի տակ միշտ ծաղկի ու պայծառանա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խաղաղ ու բարգավաճ պայմաններում՝ ի մխիթարություն Ձերդ Սրբության և հուրախություն հավատացյալ Ձեր զավակների, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, այս բաժակով շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին, ցանկալ արևշատություն և երկար բեղմնավոր տարիներ»:

Տեր հոր խոսքից հետո ներկաները հոտընկալս երգեցին «Հայրապետական մաղթանքը»: Ապա հոգևոր ճեմարանի Դ. լսարանի ուսանող Արամայիս Հունանյանը արտասանեց Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: Որից հետո ճեմարանի սաները կատարեցին Մելիք Մավիսակալյանի «Ձան Հայաստան» երգը:

Մայր Աթոռի միաբանության անունից խոսք ասաց Տ. Կոմիտաս աբեղա Հովհաննիսյանը.

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան հայրեր, հարգարժան Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, սիրելի ուսանողներ և ներկաներ:

Ինձ համար այսօր, անշուշտ, ամենահուզիչ պահերից մեկն է, որովհետև չկա Նոր տարվա շեմին կանգնած մի անձնավորություն, որը մի պահ հետադարձ հայացք չնետի ոչ միայն անցած տարվա, այլ նաև որոշ տարիներին, որոնք արդեն ունի իր ետևում:

Մեր ներսում կրելով ապագայի ջահը՝ կանգնած ենք Նոր տարվա շեմին, ապագայի անորոշության, բայց գաղափարի և գիտակցության վստահությամբ: Յուրաքանչյուրիս համար, անշուշտ, Նոր տարի հասկացությունը կապված է նոր հույսերի հետ: Կյանքը այլ բան չէ, եթե ոչ՝ ձգտում դեպի բարձունք: Եվ այսօր վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կանգնած է հենց այդ ճանապարհին, ճանապարհ, որը մեզ պիտի առաջնորդի դեպի ճշմարիտ հայրենասիրություն, հայասիրություն և եկեղեցասիրություն:

Իմ խոսքի մեջ ուզում եմ միացնել մեր այն միաբանակից եղբայրների զգացումներն ու խոսքերը, որոնք այսօր, պաշտոնի բերումով, թողած Մայր Աթոռը, ծառայում են Սիյոնի թեմերում: Ո՞վ գիտե ձեզա-

նից, թե նրանցից յուրաքանչյուրը Ամանորը ինչպես է դիմավորում. միայնակ, հեռուստացույցի առաջ, թե բարեկամների շրջանակում: Բայց վստահ եմ, որ նրանք հոգով ու զգացումներով գտնվում են այստեղ, այս ամրակուռ օջախում, որը մեզ տվել է ամեն ինչ. զգացում, հայրենասիրություն և, ամենակարևորը, ծառայության վեհ գաղափարը: Այս պահից օգտվելով, ես կուզենայի մաղթել մեզանից յուրաքանչյուրին մեկ բան. որ նա իր կյանքը կարողանա ապրել իբրև գիտակից հոգևորական, և իր կյանքի ուղին լինի այնքան երկար, ինչպես այսօր մեր ամենահին միաբաններից մեկը, որ մեկ դարի կենդանի պատմություն ունի իր ուսերին՝ մեր շատ սիրելի Հայր Պողոս վարդապետը: Եվ այս պահին, Վեհափառ Տեր, թույլ տվեք, հանուն միաբանության, այս պահը համարել նաև երդումի պահ, ուխտի պահ, որ մենք եկել ենք խոնարհելու մեր անձերը Ձեր առաջ: Եթե մեկ տարի կարողացանք սխալներով, թերություններով, մեղքերով կամ շիտակությամբ ծառայել Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն, վստահ եղեք, որ այս տարի, այս 1987 թվականը, հույսի և լույսի թվական պիտի լինի մեզանից յուրաքանչյուրի համար, մեր անձը առավել ևս պիտի ծառայեցնենք հանուն մեր ժողովրդի և հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Աստծու օրհնությունը Ձեզ՝ Վեհափառ, որպեսզի Դուք Ձեր օրհնությունը պարգևեք մեզ՝ Ձեր զավակներին»:

Ապա ճեմարանի Բ լսարանի ուսանող Արթուր Պողոսյանը արտասանեց Գեղամ Սարյանի «Խաղաղություն աշխարհին» բանաստեղծությունը: Որից հետո հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց «Տեսեք աղավնին» ժողովրդական երգը:

Ի դիմաց ուսանողության՝ Վեհափառ Հայրապետի, տեսչական-դասախոսական կազմի, միաբանության անդամների Նոր տարին շնորհավորեց Ե լսարանի ուսանող Վազգեն սարկավագ Պերպերյանը.

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգարժան անդամներ Գերագույն Հոգևոր Խորհրդի, հարգելի դասախոսներ, սիրելի ուսանող եղբայրներ և ներկաներ:

Սրբազան ավանդությունը քրիստոնեական Եկեղեցու գոյատևման գլխավոր նախապայմաններից մեկն է: Այն մեծավ մասամբ համայնական կենցաղավարությանն է վերաբերում:

Այսօր էլ, քրիստոնեական սկզբնավորումից շուրջ երկու հազարամյակ անց, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ամենևին չի կտրվել իր սկզբնական որդեգրած դիրքերից: Դեռ ավելին, հեռանալով մոտեցել է, քանզի հեռացումը դեռևս բաժանում չէ և առավել բորբոքում է անցյալի սերն ու հուշերը:

Ահա, այս սերն ու հուշերն էլ ավանդության աղբյուր են ծառայում, որի ջահակիրը դարեր ի վեր եղել է Սուրբ Էջմիածինը: Ինչպե՞ս կարելի է պատկերացնել Սուրբ Էջմիածինը առանց Միածնի Իշման սրբազան տեսիլքի: Տեսիլք, որն ավանդություն է, և ավանդություն, որն իրականություն է մեզ համար: Ահա, այսպես ժամանակային առումով հեռանալով ավանդական անցյալից, հոգեկան առումով ընդհուպ մոտենում ենք նրան:

Ապագան անցյալով է իմաստավորվում: Այսօրվա մեր տոնական հավաքույթը նույնպես ավանդության արդյունք է՝ վերասընթացումը Վերջին ընթրիքի և նախնական քրիստոնեական սիրո ճաշերի: Գործք Առաքելոցում կարդում ենք. «Ամենայն հաւատացեալք էին ի միասին և ունէին զամենայն ինչ հասարակաց»:

Ամանորյա այս տոնախմբությանը, Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ, բոլորս միատեղ ենք և ամեն ինչ համայնական է: Կերպերն ու ժամանակներն են փոխվել, բայց սիրո ճաշերն իրենց բուն էությունը պահպանել են:

Սիրելի ներկաներ, 1986 թվականը անցյալի գիրկն է անցնում, սակայն այն ապագա սերունդների համար ավանդության պահպանման մի վառ օրինակ կարող է հանդիսանալ:

Օգտվելով ներկա պահի ինձ ընձեռված հնարավորությունից, ցանկանում եմ ուսանողության անունից մեր խորին երախտագիտությունը հայտնել Վեհափառ Հայրապետին: Երեսուն տարիներ ի վեր Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Պետրոս ու Հովհաննես առաքյալների նման, գլխավորում է Ամանորյա սիրո ճաշերը: Ահա թե ինչու մեր համեստ դիրքը այս սուրբ հաստատության հովանու ներքո առավել պարտավորեցնող է, քանի որ հոգատար վերաբերմունքը ակնկալում է նվիրական փոխհատուցում:

Վեհափառ Տեր, գտնվելով 1987 թվականի շեմին, ցանկանում եմ ուսանողության անունից կոչել շրթամբք Ձերովք. «Թողլ տուք մանկտուդ գալ առ իս, և մի արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ», և ստանալ Ձեր հայրական օրհնությունը»:

Այնուհետև ճեմարանի Գ լսարանի ուսանող Գարսևան Երանյանը արտասանեց

Վահան Տերյանի «Որպես լեռն է մեր...», իսկ Դ լսարանի ուսանող Էլբեկ Քարամյանը՝ Համո Սահյանի «Երգ Հայաստանի» բանաստեղծությունները: Որից հետո ճեմարանի երգչախմբի կատարմամբ երգվեց «Փրկչի ծնունդը» Ծննդյան տաղը: Երգեցողությունից հետո Գ լսարանի ուսանող Ալվանդ Զարգարյանը արտասանեց Վաչագան Հովհաննիսյանի «Խաղաղություն» բանաստեղծությունը: Այնուհետև հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող-սարկավագները երգեցին Ծննդյան մի շարական, իսկ նույն լսարանի ուսանող Վազգեն Պերպերյանը արտասանեց Հովհաննես Շիրազի «Իմ սուրբ հայրենիք» բանաստեղծությունը:

Ավանդություն դարձած սրամիտ կաղանդչեքերի ընթերցումը թարմացրեց բոլոր ներկաների ուրախությունը, և նույն տրամադրությամբ էլ շարունակվեց նոր տարվա նվերների վիճակահանությունը:

Ապա հրավիրվեց Վեհափառ Հայրապետը՝ Իր օրհնությունն ու պատգամը տալու բոլոր ներկաներին՝ Նոր տարվա ուրախ առիթով.

**«Այս շատ ուրախ մթնոլորտի մեջ ես էլ ձեզ հետ ուրախանում եմ բնականաբար: Ինչպես ամեն տարի, մեր Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը մեզ շնորհում է այս ուրախության պահը՝ արտասանություններով, երգերով և զվարճալի խոսքերով: Այսօր, իմ կարծիքով, հոգևոր ճեմարանի պատրաստած ծրագիրը հաջողագույն ծրագիրներից մեկն էր, և՛ լավ կատարումով, և՛ լավ կազմված ծրագրով:**

**Ես պետք է շնորհակալություն հայտնեմ նաև բարի մաղթանքների համար, որոնք ուղղեցին ինձ, լինի տեսչության կողմից՝ Տեր Հուսիկի իմաստալից և հավասարակշռված խոսքով, մեր Կոմիտաս աբեղային, խանդավառ ճառով: Կամենում եմ նաև մասնավոր գնահատանքով ընդգծել կատարումը այստեղ շարականների, որ քիչ առաջ լսեցինք: Ինչքան հիշում եմ, առաջին անգամն է, որ նման առիթով շարական է երգվում: Ես գտնում եմ սա շատ լավ միտք, և պիտի ցանկայի, որ հետ այսու հոգևոր ճեմարանը ինչ հանդիսություններ էլ կազմակերպի, անպայման մեկ-երկու շարական երգվի: Պետք է մի քիչ տխրությամբ խոստովանեմ, որ մեր ժողովուրդը, մեր Եկեղեցին նույնիսկ, շարականների մասին հստակ և ամբողջական գաղափար չունեն: Շատերի համար շարականը պարզապես մի եկեղեցական երգ է: Շարականը սորվելու ատեն, անհրաժեշտ է, որ երգողը անդրադառնա շարականի խոսքերի իմաստին, դրանց բանաստեղծական գեղեցկության: Եվ ոչ միայն այդքան, ավելին, շարականները իրենց մեջ պարունակում են Հայաստանյայց Եկեղեցվո Աստվածաբանական ամբողջ մտածողությունը, որ դրժբախտաբար, գիտականորեն, սիստեմատիկ կերպով ուսումնասիրված չէ մինչև հիմա: Կմնա նոր սերունդներին մտածել այդ մասին, մեր գիտնականներին և Աստվածաբանության մեր դասախոսներին:**

**Շարականը, ուրեմն, և՛ երաժշտություն է, և՛ բանաստեղծություն, և՛ Աստվածաբանական մտածողություն: Հետևաբար, եկեք որոշենք հետ այսու միշտ լսել նաև այսպիսի առիթներով՝ մեր եկեղեցում երգված սքանչելի շարականները:**

**Սուրբ Հովհաննես Ոսկեբերան իր բազմաթիվ քարոզներից մեկում մարդու և մարդու ճակատագրի մասին հետևյալ պատկերավոր ձևով ներկայացնում է իր միտքը ասելով՝ «Մարդիկ իրենց կյանքի ընթացքում նմանվում են դերասանների, որոնք կյանքի բեմի վրա մի դեր են կատարում, իրենց դեմքին դրած դիմակներ: Այստեղ փակագծի մեջ ասեմ, որ այդ ժամանակներում, անտիկ շրջանում, հին Հունաստանում, ուր թատերական արվեստը զարգացած էր, թատերական ներկայացումներին, իբրև ընդունված կանոն, դերասանները կրում էին դիմակ: Ամեն մեկ դերասան մի դիմակ ուներ: Դիմակը համապատասխանում էր այդ դերասանի կատարած դերին. կամ ուրախության պատկեր կար դիմակի վրա, կամ տխրության, կամ զայրույթի, կամ վախի և այլն: Հովհաննես Ոսկեբերան այդ պատկերը առնելով հունական թատերգությունից, ասում է, որ բոլոր մարդիկ, որոնք ապրում են՝ մի դեր են կատարում իրենց կյանքի ճանապարհին, մի դիմակ կրելով իրենց դեմքի վրա: Այդ դիմակով նրանց ճանաչում են նրանց շրջապատի մարդիկ: Բայց, երբ վերջին պահը հնչում է, երբ մարդ հեռանում է այս աշխարհից, այն ատեն վարագույրը իջնում է և դիմակը ընկնում: Այն ատեն հայտնի է լինում, թե այդ մարդը իր իսկական դեմքով ինչպիսին էր և ի՞նչ դեր կատարեց իր կյանքի ընթացքում: Ես շատ իմաստալից եմ գտնում այս պատկերավոր արտահայտությունը և այսօր ուզում եմ օգտագործել հետևյալ մեկնաբանությամբ: Այսօր մեր կյանքի ընթացքը չի վերջանում, բայց տարին վերջանում է, մի անտրակտ է լինում, մի ընդմիջում: Ինչպես ընդմիջումին դերասանները գնում են հանգստանալու մի քիչ, հանում են իրենց դիմակները: Մենք նմանվում ենք այդ դերասաններին, որ երկու տարիների միջև գտնվող այդ ընդմիջումին հանում ենք մեր դիմակները մի պահ և մեր գիտակցության, մեր հոգու**

հայելու մեջ տեսնել մեր դեմքը այնպես, ինչպես կա, առանց դիմակի, այսինքն՝ անկեղծությամբ, իսկությամբ, հարազատությամբ, տեսնելու, թե ինչպես ապրեցինք մենք անցյալ տարվա ընթացքում, ի՞նչ հաջողություններ ունեցանք, ի՞նչ երազանքներ, նաև ի՞նչ թերություններ, ի՞նչ տկարություններ, ի՞նչ մոռացումներ և, հետևաբար, անկեղծորեն, ճանաչենք մենք զմեզ, առանց դիմակի, առանց ուրիշներին խաբելու և այդ ձևով ավելի պատրաստ լինելու մեր հետագա կյանքը վարելու առավել կատարելությամբ, որովհետև երբ մարդ ինքզինքը իսկապես ճանաչում է՝ իր բոլոր առավելություններով և թերություններով, այդ անկեղծ ինքնաճանաչումը արդեն առաջին քայլն է դեպի ինքնաքննադատություն և դեպի ինքնակատարելագործում:

Ես աղոթում եմ, մեր երիտասարդներին մանավանդ, որ այս փորձառությունը իրենք էլ ապրեն և այսօր, և վաղը անդրադառնան այդ բոլորին, և աշխատեն դառնալ ավելի կատարյալ այնպես, ինչպես ուսուցանում է մեզ Հիսուս Քրիստոս իր Սուրբ Ավետարանով:

Ահավասիկ, այս մաղթանքով և այս թելադրանքով ես մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, արևշատ երկար տարիներ, ձեր աշխատանքի մեջ հաջողություններ:

Ավելի լույս, ավելի խաղաղություն և օրհնություն Նոր սկսվող տարուն»:

Ամանորի ուրախ երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայրավանքի զանգերի խորհրդավոր ղողանջները ազդարարեցին հին տարվա ավարտը և նոր՝ 1987-րդ տարվա գալուստը:

ԹՂԹԱԿԻՑ



# ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«...Բայց կրթեա զանձն քո յաստուածպաշտութիւն. Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի զարդիս եւ զհանդերձելոցն»:

(Ա. Տիմոթ. Դ. 7—9)

Քրիստոնեական Եկեղեցու ամենամեծ Սրբերից է Ստեփանոս նախավկան՝ հանուն քրիստոնեական հավատքի նահատակված առաջին մարտիրոսը: Քրիստոնեական Եկեղեցու դարավոր պատմության ճանապարհին Ս. Ստեփանոսի անմահ հիշատակը դարձավ հույսի այն ուղեցույց աստղը, որ առաջնորդեց քրիստոսապաշտ մարդկությանը Աստվածային ճշմարիտ ճանապարհով:

Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին Ս. Ստեփանոսին դասել է իր երանելի սրբերի դասին և յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը սահմանել որպես այդ մեծ սրբի հիշատակի հավերժացման օր, որը նշվում է ավագ տոների հետ: Եթե դեկտեմբերի 25-ը պահոց կամ կիրակի օր է լինում, ապա նշվում է հաջորդ օրը:

Ինչպես միշտ, այս տարի ևս Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում նշվեց մեծ շուքով:

**Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի.—Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:**

Այսօր, օրվա մեծ տոնի առթիվ, Մայր տաճարի Ս. Ստեփանոսի խորանի վրա, սուրբ և անմահ պատարագ մատուցվեց: Պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած ես...» պահը, որից հետո ընծայյալ սարկավագները ծնրադիր առաջնորդվեցին դեպի Ս. Ստեփանոսի խորանը, ուր Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը նրանց շնորհեց սարկավագական աստիճան՝ «ընթեռնուլ զաւետարանս», «խնկարկել և բուրել հոտ անուշութեան»:

Խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Մայր տաճարի լուսարար Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

Նորընծա սարկավագները կիսասարկավագության աստիճան ստացել էին դեկտեմբերի 13-ին, հավարտ երեկոյան ժամերգության, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

«Հայր մեր»-ից առաջ սարկավագներին ուղղված խորհրդատ և ոգեշունչ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի սարկավագաց դասը, առաջնորդությամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, առաջնորդվեց Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը, շնորհավորելով սարկավագներին, մաղթեց, որ նրանք իրենց առաքինի կյանքով ու վարքով օրինակ հանդիսացան հավատացյալ ժողովրդին, ամենուր բարձր պահելով սարկավագի անունը, ինչպես նաև՝ իրենց ծառայությամբ նպաստեն մեր Եկեղեցու բարգավաճմանն ու ծաղկմանը՝ ի մխիթարություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի:

Մի պահ սարկավագական ձեռնադրությունից

**Գևորգ սրկ. Աջապահյան.**—Ծնվել է 1963 թ. դեկտեմբերի 27-ին, Լենինական քաղաքում: 1971—1981 թթ. սովորել և ավարտել է տեղի Գաբրիել Սունդուկյանի անվան № 20 անգլերեն լեզվի թեքումով միջնակարգ դպրոցը: Նույն տարին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1982—84 թթ. ծառայել է սովետական բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

**Կամո սրկ. Աբրահամյան.**—Ծնվել է 1962 թ. մարտի 21-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղում: 1969—79 թթ. սովորել և ավարտել

է տեղի միջնակարգ դպրոցը: 1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1981—83 թթ. ծառայել է սովետական բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

**Վազգեն սրկ. Պերպերյան.**—Ծնվել է 1967 թ. հոկտեմբերի 28-ին, Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է Վահան Թեքեյան վարժարանում: 1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

**Գառնիկ սրկ. Կարապետյան.**—Ծնվել է 1961 թ. փետրվարի 26-ին, Իրանի Թավրիզ քաղաքում: Հաճախել է տեղի Հայկազյան-Թամարյան դպրոց: 1973 թ. ընտանիքով ներգաղթել են հայրենիք և բնակություն հաստատել Երևանում: Ուսումը շարունակել է Երևանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան № 21 միջնակարգ դպրոցում և ավարտել 1979 թ.: 1980—82 թթ. ծառայել է սովետական բանակում: 1982 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

**Վաչե սրկ. Զիրեկյանց.**—Ծնվել է 1961 թ. սեպտեմբերի 16-ին, Երևանում: 1968—78 թթ. սովորել և ավարտել է Երևանի Եղիշե Չարենցի անվան միջնակարգ դպրոցը: 1982 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

**Արծվի սրկ. Գևորգյան.**—Ծնվել է 1950 թ. հոկտեմբերի 17-ին, Բաքու քաղաքում: 1959—69 թթ. սովորել և ավարտել է տեղի № 15 ռուսական միջնակարգ դպրոցը: 1970—72 թթ. ծառայել է սովետական բանակում: 1975—77 թթ. սովորել և ավարտել է Բաքվի պլանա-տնտեսագիտական տեխնիկումը: 1984 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

**Սամվել սրկ. Հովհաննիսյան.**—Ծնվել է 1955 թ. մայիսի 9-ին, Երևանում, 1962—71 թթ. սովորել և ավարտել է Երևանի № 114 միջնակարգ դպրոցը: 1970—75 թթ. սովորել և ավարտել է Երևանի Ս. Խաչատրյանի անվան Երաժշտական ուսումնարանը: 1975 թ. ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը և ավարտել 1980 թ.: 1980—83 թթ. աշխատել է ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջանի Խնձորուտ գյուղի միջնակարգ դպրոցում որպես երգ-երաժշտության ուսուցիչ: 1983—84 թթ. աշխատել է Էջմիածնի շրջանի Գայ գյուղի երաժշտական դպրոցում որպես դաշնամուրի դասատու: 1984 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա սարկավագներին և մաղթում, որ նրանք լինեն նվիրյալ սպասավորները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայ ժողովրդի:



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳԱՑ ԴԱՍԸ ՄԻԱԾՆԱԷՋ Ս. ԽՈՐԱՆԻ ԱՌԱՋ
(25 դեկտեմբերի 1987 թ., Ս. Էջմիածնի Մայր տաճար)

Академия наук Армянской ССР
Научно-контрольная библиотека



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գեղեցիկ ավանդություն է դարձել, որ յուրաքանչյուր տարվա առաջին օրը, Նոր տարվա ուրախ առիթով մատուցված ս. պատարագից հետո, ժամը 14-ին, Մայր Աթոռի ողջ միաբանությունը ներկայանում է Վեհարան՝ շնորհավորելու Հայոց Հայրապետի Ամանորը:

Հունվարի 1-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատագ մատուցեց Տ. Պարգև աբղ. Մարտիրոսյանը և հավարտ ս. պատարագի քարոզ խոսեց՝ «Գնեցէք զժամանակս զի աւուրքս չարութեան են: Վասն այնորիկ մի լինիք անմիտք, այլ իմացարուք զինչ են կամք Տեառնն» (Եփես. Ե 16—17) բնաբանով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանքի հանդիսավոր արարողությունը:

Պատարագից հետո Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը առաջնորդվեցին Վեհարան՝ շնորհավորելու Նորին Սրբությանը Ամանորի առիթով և ստանալու նրա հայրական օրհնությունը:

Ներկաների անունից Վեհափառ Հայրապետի Նոր տարին շնորհավորեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ Ամենայն Հայոց Հայրապետին մաղթելով քաջառողջություն, երկարամյա եկեղեցաշեն և աթոռաշեն գահակալության սրտագին բարեմաղթություններով:

Նորին Սուրբ Օծությունը սիրով ընդունեց ներկա հոգևոր հայրերի սրտաբուխ բարեմաղթությունները, շնորհավորեց նրանց Նոր տարին՝ տալով հայրապետական իր օրհնությունն ու պատգամը:

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առիթով, գրավոր միջնորդությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, նույն օրը Վեհափառ Հայրապետն իր ուշադրությանն արժանացրեց Մայր Աթոռի և Ս. Գայանե վանքի երեք քահանա հայրերի նվիրյալ ծառայությունները և կատարեց պարգևատրում՝ արժանացնելով Ավագ քահանայության պատվի տվչության:

**Ավագ քահանայության պատվի տվչության արժանացան.**

1. Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե քահանա Բաղրամյանը:
2. Ս. Գայանե վանքի վանահայր Տ. Գուրգեն քահանա Աշուրյանը:
3. Մայր Աթոռի մկրտարանի տեսուչ Տ. Արտակ քահանա Սիմոնյանը:

Երկարամյա եկեղեցանվեր գործունեության համար Վեհափառ Հայրապետը օրհնության կոնդակ տվեց Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ծիսակատար Տ. Վաղարշակ քհն. Բալումյանին՝ ծննդյան 70 և քահանայագործության 42 ամյակի առիթով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայրապետական ուշադրության և գնահատանքի արժանացած քահանա հայրերին, այն համոզումով, որ նրանք եկեղեցականի իրենց հետագա ծառայություններով կարդարացնեն Հայոց Հայրապետի վստահությունն ու գնահատանքը:

ԹՂԹԱԿԻՑ



## ՄԵԼՔՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սուլն թվականի հոկտեմբերին տասնօրյա այցով Մայր Հայրենիքում էր գտնվում Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության պատվիրակությունը՝ մասնակցելու համար այդ բազմարդյուն կրթական օջախի 60-ամյակի տոնակատարության: Բարձր գնահատելով դպրոցի բազմամյա հայրենանվեր գործունեությունը, Խորհրդային Հայաստանը ծնողի հոգատարությամբ և գոհունակության խինդով տոնեց վարժարանի 60-ամյակը Հայաստանի Գրողների միության դահլիճում՝ կազմակերպությամբ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի: Հանդեսը վարեց կոմիտեի նախագահ տիար Կ. Դալլաքյանը: Հանդեսին իրենց մասնակցությունը բերեցին հայրենաբնակ նախկին մելքոնյանցիները, Հայաստանի բուհերում սովորող մելքոնյանցիները և հայրենի մտավորականությունը: Ճոխ ծրագրով նախապատրաստված հանդեսին զեկուցումով հանդես եկավ Մելքոնյան վարժարանի տնօրենուհի, պատմական գիտությունների դոկտոր տիկին Ագապի Նասիբյանը: Օրվա ոգին ու զարդն էր Մելքոնյան կրթօջախի վաթսուն հոգիանոց քառաձայն երգչախումբը՝ շնորհաշատ խմբավար Սեպուհ Աբգարյանի գլխավորությամբ:

Հոկտեմբերի 26-ին Մայր տաճարում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ՝ նվիրված Մելքոնյան կրթական հաստատության բարերարներ Գրիգոր և Կարապետ Մելքոնյան եղբայրների հիշատակին: Եկմալյան պատարագի երգեցողությունը կատարեց Մելքոնյանի երգչախումբը: Դարավոր կամարների տակ հայրենիքի գոյությամբ խանդավառ աստանդական հայի զգացողությամբ երգեցին սաներն ու սանուհիները՝ ջերմեռանդ հավատքով և անխառն ոգևորությամբ: «Հայր մեր»-ից առաջ կարդացվեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Մելքոնյան վարժարանի վաթսունամյակին:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը ընդունեց դպրոցի պատվիրակներին և նկարվեց նրանց հետ:

Հոկտեմբերի 23-ին, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի ցանկությանը, տիկին Ագապի Նասիբյանը իր «Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը 1915—23 թթ.» գրքի մասին Մայր Աթոռիս միաբանության և ճեմարանի ուսանողության առաջ հանդես եկավ ծավալուն գիտական զեկուցումով, որտեղ ի միջի այլոց ասաց.

«Պատմության գիտական ուսումնասիրությունը անհրաժեշտություն մըն է: Անհրաժեշտություն մըն է մեր ժողովուրդը ներկայացնելու համար օտարներուն: Բայց անհրաժեշտություն մըն է նաև մեզի համար, որովհետև պետք է օգտվինք մեր անցյալի փորձառություններեն, որպեսզի կարենանք ավելի լավ կերպով կողմնորոշվիլ ապագային:

Գիրքս, որ կկոչվի «Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ.», նպատակ ունի պարզել Անգլիոր կեցվածքը Հայ-

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մեծամորի ցեղասպան գործարանի բանվորները Ազգային Դպրոցի բակում ելույթ ունենալիս։

կական հարցի նկատմամբ իր զույգ երեսներով. դիվանագիտական-քաղաքական և մարդասիրական:

Օսմանյան պետության աստիճանական տկարացումը և Ռուսիո առաջխաղացումը դեպի Միջերկրական, դեպի տաք ջուրերը, և Ռուսիո հաղթանակները Օսմանյան կայսրության վրա 1828—29, 1855—56 և 1877—78 թվականներուն պատճառ եղան, որ Անգլիա շահագրգռվի Հայաստանով իր ռազմական դիրքին համար: Ռազմական դիրք մը, որ կգտնվեր Հնդկաստանի ճամփուն վրա, և Հնդկաստանը 19-րդ դարուն Անգլիական կայսրության մեծագույն հարստությունը կնկատվեր: Անգլիա 1877—78-ի ռուս-թուրքական պատերազմեն հետո վճռեց երաշխավորել Թուրքիո ամբողջականությունը: Սան-Ստեֆանոյի դաշինքով Ռուսիան ձգտեցավ նպաստավոր կարգադրություններ ընել քրիստոնյա, այսինքն հայ ժողովուրդին նկատմամբ: Բայց Անգլիա չթույլատրեց ասիկա: Եվ Սան-Ստեֆանոն վերաքննվեցավ Կիպրոսի համաձայնությամբ և Բեռլինի վեհաժողովով: Կիպրոսի համաձայնությամբ Անգլիա խոստացավ նեցուկ կանգնել Թուրքիա և չթույլատրել Ռուսական հառաջխաղացում թրքական սահմաններեն ներս, և փոխարեն Անգլիան ստացավ Կիպրոսը՝ որպես առժամյա գաղթավայր մը: Ուրեմն Անգլիո համար կենսական էր պահել Թուրքիո հողերուն ամբողջականությունը: Եվ Անգլիա հետաքրքրվեցավ շատ ավելի Հայաստանի աշխարհագրական դիրքով, քան հայ ժողովուրդով: Եվ լքեց հայ ժողովուրդը իր ճակատագրին, որպեսզի ձգե Հայաստանի բարձրավանդակը թրքական տիրապետության տակ: Անգլիական դեսպաններե հասած թրքական խժդժություններու, թրքական անգթություններու նկատմամբ լուրերը Անգլիան միշտ ծածկել ուզեց կամ անտեսեց: Եվ, օրինակի համար, 1908-ին արտաքին գործոց նախարարությունը արտաքոց գաղափարը հղացավ փոխանակ լուծումը գտնելու, հայերը զանգվածաբար փոխադրելու Աֆրիկե: 1913-ին երբ դոկտոր Գեյց նամակով արտաքին գործոց նախարարության կգուշացներ, որ հայերու ջարդեր պիտի ըլլան, նախարարությունը ուզեց ծածկել. «Հավանաբար ճիշտ են դոկտոր Գեյցին գրածները: Հայաստանը ազատելու միակ միջոցը Ռուսական գրավումը պիտի ըլլար, բայց այն ալ բաղձալի չէ տարբեր նկատումներե տարված»:

Այս թվականներուն շարունակվեցավ Թուրքիո անկումը: Թուրքիան 19-րդ դարեն սկսյալ կորսնցուց Բոսնիան, Բուլգարիան, Հերցեգովինան, Քիփրոսին, Մակեդոնիան և մասնավոր կերպով, ուրեմն, ուզեց կառչիլ Արևմտահայաստանին: Կես միլիոն քառակուսի մղոնի տարածությամբ հողամաս մը կորսնցուցած էր: Եվ Թրքական կայսրության այս քայքայումը, այս անկումը ինքնավստահության, ինքնահարգանքի պակաս մը բերավ թուրք առաջնորդներուն մեջ, նվաստացումի զգացում մը բերավ: Եվ Երիտասարդ թուրքեր հանձինս Թեքին Ալփի և ուրիշ առաջնորդներու, երազեցին Կովկասի և բոլոր թրքական ցեղերու միացումը: Հայաստանը, հայ ժողովուրդը կը խանգարեր այդ միացումը: 1908-են սկսյալ, Թուրքիո առաջնորդները թեքեցան, հարեցան դեպի Գերմանիա, որ տարված Անգլիո նկատմամբ իր ունեցած մրցակցութենեն, խոստումներ տվավ Թուրքիո առաջնորդներուն: Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Գերմանիա և Թուրքիա համաձայնություն մը գոյացուցին. եթե Թուրքիա պատերազմի մտներ Գերմանիո կողքին, Թուրքիա պիտի վարձատրվեր արևելյան սահմաններուն իրեն ի նպաստ սրբագրությամբը՝ այսինքն, Թուրքիայի հողերը արևելքեն պիտի ընդարձակվեին: Հայաստան երբեք գոյություն պիտի չունենար այլևս: Թուրքիա հարեցավ Գերմանիո և թշնամի եղավ Անգլիո, Անգլիա, տարված միայն ու միայն իր ազգային շահերեն, ուզեց աշխարհի հանրային կարծիքը լարել Գերմանիո և Թուրքիո դեմ: 1915-ին տեղի ունեցավ, ինչպես լավ գիտեք, Մեծ եղեռնը: Այս տարվա սկզբնական ամիսներուն Անգլիո արտաքին գործոց նախարարությունը գրեթե լուռ մնաց: Բայց անմիջապես վերջը անդրադարձավ, որ եղեռնը կրնա գործածել, շահագործել իր ազգային նպատակներուն համար: Եվ արտաքին գործոց նախարարության էջերեն մեկուն վրա նամակի մը վարի մասին վրա գրված է. «Հայկական ջարդերը օգտագործել Ամերիկայի համար»: Երբ որ հետևեցա, անդրադարձա, որ Անգլիա հայկական ջարդերը 1916 սեպտեմբերեն սկսյալ կանոնավոր կերպով օգտագործեց իրեն ի նպաստ շահելու Ամերիկայի հանրային կարծիքը և, ինչու չէ, ապահովելու Ամերիկայի մասնակցությունը պատերազմին մեջ ընդդեմ Գերմանիո և Թուրքիո: Ասիկա նորություն մը չէր, որ աշխատանքներուս ընթացքին գտա, և որևէ պատմաբան չէ անդրադարձած տակավին այս եղելության: 1916-ին Անգլիական կառավարությունը, արտաքին գործոց նախարարությունը հրահանգ տվավ մեծ մարդասեր Լորդ Բրայսին, որ պատրաստե այսպես կոչված BLUE BOOK՝ Կապույտ Գիրք մը: Ան հավաքած է բոլոր կոտորածներուն վավերաթուղթերը:

Մերձնչյան կրթական հաստատության եպիսկոպոսը Մայր Աթոռում (խմբապետ՝ Սեպուհ Սրբազան)

Այս գիրքը ներկայացվեցավ խորհրդարան 1916 նոյեմբեր 23-ին. նպատակն էր աշխարհի հանրային կարծիքը դուրս բերել ընդդեմ Թուրքիո և մասնավորապես ընդդեմ Թուրքիո դաշնակիցին՝ Գերմանիո: Կապույտ Գիրքին հրատարակությունը կհետապնդեր նպատակ մը ևս: Անգլիան կկուվեր մահմեդական Թուրքիո դեմ, բայց ուներ միլիոնավոր հպատակներ մահմեդական Հնդկաստանի մեջ: Ի՞նչ քաղաքականություն պիտի մղեր, որ Հնդկաստանի մահմեդականները կուվեին մահմեդական Թուրքիո դեմ: Ուրեմն, հայկական խժդժությունները բացահայտող այդ գիրքով Անգլիան կրկնեց ու կրկնեց, թե ինքը կկուվեր ոչ թե մահմեդական կրոնքի դեմ, այլ անգութ ու բարբարոս պետության մը դեմ: Այսպիսով ապահովեց իր մահմեդական հպատակներուն զինվորագրությունը և անկեղծ կուվի մասնակցությունը պատերազմի ընթացքին: **Անգլիան միշտ ալ ղեկավարվեցավ իր ազգային շահերեն:** 1916-ի վերջավորության հայերը կաքսորվեին, կկոտորվեին և Ռուսիո արտաքին գործոց նախարար Սազոնով խնդրանք մը ներկայացուց արտաքին գործոց նախարարությունն և առաջարկեց, որ 20.000 անգլիական ոսկիի մասնակցություն մը՝ օգնություն մը Անգլիան ըներ, 20.000 անգլիական ոսկիի օգնություն մըն ալ ռուսական կառավարությունը ըներ, և այս հավաքական գումարը տրամադրվեր Ամերիկացի միսիոներներու (որպեսզի հայ որբերը հավաքեին և պետք եղած օգնությունը տային), բայց այս օգնությունը ըլլար գաղտնի կերպով, Թուրքիան ավելի չգրգռելու, չկատղեցնելու նպատակով: Զարմանալիորեն Անգլիո արտաքին գործոց նախարարությունը մերժեց օժանդակել, մերժեց տալ 20.000 ոսկիի գումարը: Գրությունները հետևյալ ձևով են. «Եթե պիտի չհրապարակենք մեր օգնությունը, ի՞նչ շահ, ինչո՞ւ տանք»: Եվ չտրվեցավ այդ գումարը: Անգլիո արտաքին գործոց նախարարությունը մտածեց հետևվաբար արևելքի մեջ, ինչպես նաև Կիլիկիո մեջ օգտագործել հայ մարդուժը: Եվ շատ մեծ պրոպագանդայով աշխատեցավ հայկական զորախումբեր պատրաստել: Բայց այս ընելու համար պետք է խանդավառեր հայ ժողովուրդը: Եվ այս թվականներուն է, որ Անգլիան և իր արտաքին գործոց նախարարությունը սկսավ ընել իր խոստումները Հայաստանի ազատագրության մասին: Շոնդալից հայտարարություններ, մեծ խոստումներ, թե պատերազմը կմղվեր փոքր ազգերը ազատելու համար բարբարոս լուծերե, և վարչապետ Լլոյդ Ջորջ հրապարակավ երկու անգամ անդրադարձավ Հայաստանին և կոչեց զայն երկիր մը՝ ծածկված արյունովը անմեղներու: Եվ սակայն, անմիջապես վերջ, նախարարական խորհուրդի մը ընթացքին կտեսնենք, թե ինքը կառաջարկե, որ Բաքուն հանձնվի թուրքերուն, և ոչ թե ռուսներուն, և կպատճառաբանե. «Թուրքը Անգլիո մրրցակից չի կրնար ըլլալ, բայց ռուսը պիտի ըլլա»: Եվ ասիկա, երբ տակավին պատերազմը չէր վերջացած, ասիկա՝ երբ Անգլիա կուզեր գործածել հայ ժողովուրդի բանակները ընդդեմ թուրքին, որպեսզի հաղթեր զայն: Անգլիա ամբողջ այս տևողության առաջնորդվեցավ միայն իր նեղ ազգային շահերով: 1918-ի հոկտեմբերին, տեղի ունեցավ Մուդրոսի զինադադարը՝ առավելապես Անգլիո և Թուրքիո դաշնակիցներուն միջև: Այս թվականներուն Անգլիո մեծագույն մտահոգությունն էր իրեն համար ապահովել Սև ծովի գերակայությունը՝ ընդդեմ հեղափոխական Ռուսիո: Այդ պատճառով զինադադարին պայմաններուն մեջ հայկական վեց նահանգները ձգվեցան թրքական իշխանության տակ: Ոչ ալ Թուրքիա զինաթափվեցավ, մինչ դաշնակիցները պահանջեցին Ավստրիո և Գերմանիո զինաթափումը: Հայ որբեր և այրիներ երբեք չկրցան վերադառնալ հետևաբար իրենց հորենական տուները: Անգլիա և Ֆրանսա գաղտնի համաձայնություններով իրենց համար ապահովեցին ինչ որ կցանկանային: Ֆրանսա ունեցավ գերակայություն Սուրիո և Լիբանանի վրա, իսկ Անգլիա ապահովեց իրեն համար քարյուղով հարուստ Միջագետքի շրջանը և գերակայություն՝ Պարսից ծոցի մեջ: Հայկական բարձրավանդակը Անգլիո համար կորսնցուցեր էր իր ամբողջ հետաքրքրությունը: 1919-ին Անգլիո նախկին վարչապետներեն մեկը՝ Բալֆուր, հայտարարեց. «Անգլիո համար ոչինչ կմնա Հայաստանի մեջ, բացի իր մարդասիրական հետաքրքրասիրությունը»: Անգլիա ինքզինք գտավ, ուրեմն, մեծ երկընտրանքներու առջև: Պատերազմի ընթացքին Հայաստանի ազատագրության համար ըրեր էր մեծ, շռնդալից խոստումներ և հայտարարություններ: Քանի անգամ ըսեր էր, թե միջազգային բարոյականության սիրույն Թուրքիո ենթակա հողամասերը պետք չէ վերադարձվեին թուրքի և թվեր էր անունները Արաբիո, Միջագետքի, Հայաստանի, Սուրիո և Լիբանանի: Այս հիշված երկիրները բոլոր ազատեցան Թուրքիո լուծեն, բացի Հայաստանը: Անգլիա ինչպե՞ս պիտի հաշտեցներ իր ըրած խոստումները և 1918-են վերջ իր չկամությունը: Լուծումը գտնվեցավ Սևրի դաշինքին մեջ: Հիմա նշանավոր դարձած Սևրի դաշինքին հայկական հող-

վածները գրվեցան միայն ու միայն գոհացում տալու համար հանրային կարծիքին: Հայերու նպաստավոր հոդվածները Սևրի մեջ Անգլիո տուրք եղան իր ըրած խոստումներուն փոխարեն և գոհացնելու համար Անգլիո ազատական հանրային կարծիքը: Ուրեմն, Հայաստան խոստացվեցավ, բայց արյունաքամ հայ ժողովուրդին ոչ մեկ գործնական օժանդակություն ցույց տրվեցավ: Սևրը ստորագրվեցավ Սուլթանական Թուրքիո կողմե, և Սևրը քրքրեց ու կատղեցուց Քեմալականները և պատճառներեն մեկը եղավ ազգայնական Թուրքիո՝ Հայաստանի վրա հարձակման: 1920 հունիսին Ամերիկայի ծերակուտը մերժեց Հայաստանը առնել իր հովանավորության տակ:. 1920 օգոստոսին Թուրքիա ընդունեց, որ Ամերիկայի նախագահ Վիլսոն գծե Հայաստանի սահմանները: 1920 նոյեմբերին է, որ Վիլսոն հանձնեց իր գծած սահմանները, բայց թրքական բանակները հասեր էին Երևանի սահմանները: Շատ շուտով Անգլիո արտաքին գործոց նախարարությունը արձանագրություն մը ըրավ, որով կարտահայտեր այն միտքը, թե Վիլսոնյան սահմանները տալ Հայաստանին, պիտի նշանակեր ռուսական ազդեցությունը մոտեցնել Պոլսո: Բան մը, զոր ոչ Թուրքիա կուզեր, և ոչ ալ Անգլիա:

Գիրքիս հինգերորդ գլուխը կընդգրկե 1920-են 1923-ի ժամանակաշրջանը: Անգլիա այս շրջանին պատրանքներ ունեցավ, թե ինքը կրնար Կովկասը կառավարել, մինչդեռ պատերազմեն դուրս ելեր էր ան տկարացած և տնտեսական դժվարություններու մեջ: Բայց և միշտ ալ ձգտեցավ առաջնորդություն տալ Կովկասի հանրապետություններուն, և Հայաստանին՝ առանց զինվորական օգնության, առանց որևէ գործնական օգնության: Անգլիա միշտ արգելեց, որ 1918-ին կազմված Հայաստանի հանրապետությունը բանակցեր Խորհրդային Ռուսիո հետ: Այսպես, Շանթի պատվիրակությունը, երբ որ Մոսկվա գնաց 1920-ի ամռան, չկրցավ համաձայնության մը գալ Խորհրդային Ռուսիո հետ, հակառակ, որ Խորհրդային Ռուսիան Հայաստանին խոստացավ ապահովել 1914-ի սահմանները, ինչպես նաև Զանգեզուրը և Նախիջևանը: Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Բեգզադյանը Թիֆլիսի մեջ քանի անգամ հեռագրեց Անգլիո արտաքին գործոց նախարարություն, թե Խորհրդային Ռուսիա կխոստանար Հայաստանի հանրապետության համար ապահովել 1914-ի սահմանները, ներառյալ Կարսը և Սուրմալուն, պայմանով, որ Հայաստանի հանրապետությունը դուրս գար դաշնակիցներու, և մանավանդ Անգլիո ազդեցությենեն, չընդառնար Անգլիո գործիքը: Ըստ հեռագիրներու, այն օրը, երբ Խատիսյան պիտի ստորագրեր Աղեքսանդրապոլի դաշինքը, տեսնված է Անգլիո ներկայացուցիչ Սթոքսի հետ Թիֆլիսի մեջ և հարցուցած անոր, թե ի՞նչ ըներ հայ ժողովուրդը: Հայաստանի հանրապետությունը ինքզինք կգտներ, այսպես կոչված, «մշուշի մը մեջ». Հայաստան ընդունե՞ր ռուսներու առաջարկը և ունենա՞ր 1914-ի սահմանները, թե Թուրքիո հետ բանակցեր: Անգլիո արտաքին գործոց նախարար Լորդ Քըրզոն հետևողական կերպով խորհուրդ տվավ Հայաստանի հանրապետության, որ նախընտրեր թուրքերու հետ բանակցիլ, քան թե Խորհրդային Ռուսիո հետ. Անգլիո Թիֆլիսի ներկայացուցիչը հեռագիր ղրկած է Անգլիո արտաքին գործոց նախարարություն. «Շատ լավ պիտի ըլլար, եթե Կովկասի հանրապետությունները քաջալերեինք խոսքերով, որպեսզի չբանակցեին Խորհրդային Միության հետ»: **«Քաջալերեինք խոսքերով»**, այսինքն, որևէ ծախս պիտի չենթադրեր ասիկա Անգլիո համար: Նոյեմբերի վերջը Սիմոն Վրացյան՝ տեսակցություն մը ունեցած է Սթոքսի հետ, և դարձյալ կրկնած, թե Խորհրդային Ռուսիա պիտի ապահովեր հայերու համար 1914-ի սահմանները, և կհարցներ՝ Թուրքիո՞ հետ բանակցիլ, թե Ռուսիո հետ: Հայաստանի հանրապետության անհետատես վարիչները միշտ ալ հետևեցան Անգլիո ուղղության և ուզեցին բանակցիլ Թուրքիո հետ: Անոնք կուրորեն հավատացին հեռավոր դաշնակիցներու և հեռավոր Անգլիո կողմե խոստացված Սևրի ընդարձակ սահմաններուն, որոնք դատապարտված էին մնալու թուղթի վրա, և չընդունեցին մոտ դրացի Խորհրդային Ռուսիո կողմե առաջարկված 1914-ի սահմանները: Մեծ պատմաբան Առնոլդ Թոյնբի հետևյալ արձանագրությունը անբարոյական նկատած է դաշնակիցներու և Անգլիո քաղաքականությունը Հայաստանի հանրապետության նկատմամբ. «Դաշնակիցները և Անգլիա ուղղություն տվին, բայց ոչ մեկ գործնական պաշտպանություն ցուցաբերեցին Հայաստանի նկատմամբ»:

Գիրքս երկու գլուխներ ունի Անգլիո հայանպաստ մարդասերներուն և անոնց ընկերություններուն մասին, հիմնված նոր հայտնաբերված վավերաթուղթերու վրա: Ինչպես Գլադստոն, Լորդ Բրայս, եկեղեցականներ՝ Հարոլդ Բաթստը և ուրիշներ: Այս հայասերները իրապես որ շատ մեծ գործ կատարեցին իրենց կարելի միջոցներով, ճնշում բանեցուցին Անգլիո վրա, որ չանտեսեր հայ ժողովուրդը: Նաև սնունդ և

մեծ չափով նյութական օգնություն ղրկեցին: Սակայն այս մարդասերներուն հայանըպաստ շարժումն ալ իր անպատեհությունները ունեցավ անուղղակիորեն. հայ ժողովուրդը կարծեց, թե զորավոր բարեկամներ ուներ արևմուտքի մեջ և իր քաղաքական հույսերը դրավ հեռավոր երկիրներու վրա, ուրկե դրական կամ գործնական օգնություն չեր կրնար գալ: Որպես եզրակացություն կարելի է ըսել, թե Անգլիա միշտ հետևեցավ իր շահերը հետապնդող նեղ քաղաքականության: Ան հետեվողական մնաց 19-րդ դարուն այն տեսության, թե Անգլիո համար չկան դաշնակիցներ և թշնամիներ, այլ միայն կան ազգային շահեր: Իսկ մեզի համար կարևոր է կըրկնել, թե պատմության գիտական ուսումնասիրություն մը անհրաժեշտություն է, որպեսզի օգտվինք անցյալի փորձառություններեն և կարենանք ապագային ավելի ճըշգրիտ կերպով կողմնորոշվիլ»:

Զեկուցումից հետո Վեհափառ Հայրապետը շատ բարձր գնահատեց անվանի գիտնականի կատարած աշխատանքը և մաղթեց նորանոր հաջողություններ ուսումնական և գիտական գործերում:

ԹՂԹԱԿԻՑ





ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԻՋՈՐ ԳՅՈՒՂԻ «ՄՈՐՈՒՍ Ի ԲՈՒՌՆ» ԿՈՉՎՈՂ
ԱՆՏԱՌՈՒՄ 1903 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ՝
Ի ՀԻՇԱՏԱԿ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՍՈՒՐԲ ՏԱԹԵՎ ՎԱՆՔ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ

ия наук Армении
Центральная библ.




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**«Հունվարի 4-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խաղաղութիւն ամենեցուն և ամենուր» (Ժամագիրք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Լենինգրադի հոգևոր ակադեմիայի դասախոս հայր Բորիս Բեզունովն ու մի խումբ ուսանողներ:

*
* *

**Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն հանգուցելոց»:

*
* *

**Հունվարի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ահաւասիկ Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի» (Հովհ. Ա. 29) բնաբանով:

*
* *

**Հունվարի 13-ին, երկուշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

**Հունվարի 14-ին, չորեքշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական երեկո, որի ընթացքում պարսկահայ ուսուցչուհի Լիդա Պերպերյանը ներկայացրեց Վասպուրականի միջնադարման մի վիպերգ և բնութագրեց շարականների զարգացման ընթացքն ու գրական-գեղարվեստական արժանիքները, որպես ապացույց ունկնդիրներին ներկայացնելով վիպերգի և շարականների երաժշտական կատարումներ պարս-

կահայ երաժիշտների ձայնագրություններով:

Երեկոյին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունվարի 15-ին, հինգշաբթի.—Տօն ծընընդեան Ս. Յովհաննու Կարապետին:**

Այսօր Ս. Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռում. ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավագ քհն. Սիմոնյանը:

*
* *

**Հունվարի 18-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից» (Մատթ. Գ 17) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ նորոգ հանգուցյալներ՝ ֆրանսահայ մեծ ազգասեր, Մայր Աթոռի բարերար տիար Արշամ Պապյանի և լիբանանահայ գրական, ազգային-հասարակական գործիչ տիար Գառնիկ Ադդարյանի հիշատակին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

*
* *

**Հունվարի 21-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

**Հունվարի 25-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ներկայացնելով Ս. Վահան Գողթնեցու կյանքն ու գործը (տես էջ 41):

*
* *

**Հունվարի 28-ին, չորեքշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական երեկո, որի ընթացքում հանրաճանաչ ասմունքող Վերա Հակոբյանը ունկնդիրներին ներկայացրեց հայ բանաստեղծների ստեղծագործություններից:

Երեկոյին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

## ՎՃԻՌ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մայր Աթոռիս նյութական կարևոր վնաս հասցնելու կանխամտածված արարքի համար, Վեհափառ Հայրապետի 5 հունվար 1987 թվականի վճռով, Մաշտոց և Պսակ աբեղաները հեռացված են միաբանության շարքերից և զրկված իրենց եկեղեցական կարգից, դասվելով աշխարհական դասում Մեսրոպ Խաչիկյան և Ստեփան Կարապետյան անուններով:

Ս. Էջմիածին,
14 հունվար 1987 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ

# ՔԱՐՈԶ
(Մայր տաճար, 5 հունվարի 1987 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ: Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի» (Շարական):

Սիրելի հավատացյալներ, Ճրագալույցի այս երեկոյան մենք խմբվել ենք Սուրբ Տաճարի կամարների տակ, միասնաբար ստանալու ողջույնը և ավետիսը Քրիստոսի Ծննդյան: Ինչպես սրանից 2000 տարիներ առաջ Բեթղեհեմ քաղաքի շրջակայքում իրենց հոտին պահպանություն անող հովիվներ պարզ ու խոնարհ գիշերվա մեջ հանկարծ վայելեցին Աստվածային հրաշալի տեսիլքը: Երկնքի դռները բացվեցին հանկարծ նրանց աչքերի առջև, և հրեշտակներ քուն թե արթուն երկնքից երկիր իջան, բյուր շեփորներ հնչեցին և քաղցր ձայնը հրեշտակների լցվեց սրտերը մարդկանց, դաշտերը բոլոր: Աստվածային հրաշալի պատգամով, հավիտենական պատգամով, որ ինչքան այդ օրերին այժմեական էր մարդկության համար, նույնքան այսօր, և կհավատանք, որ վաղը այժմեական պիտի լինի հանուր մարդկության համար:

Այդ հրեշտակները երկնքից իջնող ավետում էին հովիվներին հետևյալ բառերով. Փառք բարձունքներում Աստուծո, երկրի վրա խաղաղություն, մարդկանց մեջ՝ հաճություն: Հին աշխարհի մարդիկ Քրիստոսի ծնունդից առաջ չգիտեին ճշմարտությունը: Այս կամ այն կրոնի ճամփով իրենց տրվում էր մի նշույլ ճշմարտության: Բայց նրանք չէին կարող իրենց հոգիները բացել և ամբողջությամբ տեսնել և ըմբռնել Աստվածային գթասրտությունը, Աստուծո սերը և Աստուծո ողորմությունը իր ստեղծած մարդկանց հանդեպ: Այդ սերը, այդ ողորմածությունը և այդ հայրական զգացումն է, որ տվեց աշխարհին մեծագույն պարգևը աշխարհի պատմության մեջ՝ Աստվածորդին: Եվ Աստվածորդին իսկապես մարդ դարձավ, ծնունդ առավ Սուրբ Մարիամ կույսից և որպես մարդ ապրեց այս աշխարհի մեջ 33 տարիներ: Բայց նրա ապրած կյանքը մեր կյանքին չէր նմանվում, որովհետև մենք հողեղեն արարածներ ենք, նա՝ հոգեղեն: Բերավ Աստուծո հաշտությունը մարդկության և նույնիսկ Քրիստոս ուսույց մեզ բոլոր կրոնների մեջ ամենա-

վեմագույնը՝ նույնիսկ կարողանալ սիրել մեր թշնամին:

Սիրելի հավատացյալներ, այս երեկո, որ մենք Ծրագալույցի այս պատարագի առթիվ հաղորդվում ենք մեր Եկեղեցու, մեր անցյալի, ինչպես նաև Քրիստոնեական ավանդությանց և պատմության հետ, ինչքան լավ է, որ մենք անդրադառնանք և մի անգամ ևս տեսնենք, թե Քրիստոսի ծընունդը ինչպիսի հրաշալի բարիքների, երջանկության, եղբայրսիրության և ընդհանրապես սիրո առիթ հանդիսացավ մարդկության համար անցյալին և հանդիսանում է մինչև այսօր: Եվ այդ պատգամը ամեն գիտակից մարդու սրտի մեջ կրկին անգամ հնչում է, ժամանակ առ ժամանակ անդրադառնալ տալու համար նրան, թե նա առանձին մի էակ չէ, ամբողջության մեկ մասնիկն է, և այդ իսկ պատճառով անհատը պարտավոր է իր նմանները սիրել, բերել խաղաղություն՝ իր շրջապատին. և՛ համերաշխություն, և՛ սեր, և՛ եղբայրություն: Ներկա ժամանակներում մենք բոլորս շատ լավ գիտենք՝ քաղաքական ասպարեզի վրա ինչպիսի դժվարին, ինչպիսի փոթորկոտ վիճակ է տիրում: Եվ անհրաժեշտ է, որ մարդիկ կարողանան հասկանալ միմյանց: Ինչքան անհրաժեշտ է, որ պետությունների ղեկավարները իրար կարողանան հասկանալ: Կարծեք թե Բաբելոնի աշտարակի շինության շրջանն է. մեկը խաղաղության մասին է խոսում, մյուսը ատելություն է հասկանում, որովհետև կասկածը տիրել է հոգիներին, արդարությունը և սերը միանգամընդմիշտ փախել են մարդկանց մեջից, և մարդկանց հոգիները կարծեք թե սնանկացել են, վստահությունը կորցրել են իրար հանդեպ: Ինչքան անհրաժեշտ է, որ մենք՝ քրիստոնյաներս, ավելի սրտեռանդ աղոթենք, որպեսզի Աստված մեր ձայնը լսի, մեր աղերսը լսի և փափկացնի այն մարդկանց սրտերը, որոնք չեն զգում Աստվածային խոսքի քաղցրությունը, թեև իրենք իրենց երբեմն քրիստոնյա կամ հասկացող, ըմբռնող են կոչում: Թող Տերը մեր աղոթքների միջոցով նրանց սրտի դռները բախի՝ զգալ տալու համար նրանց, որ այս աշխարհը Աստուծո ստեղծած աշխարհն է, և այս աշխարհը և մարդիկ կապրեն՝ ինչպես Աստված կկամենա:

Սիրելի հավատացյալներ, Ծննդյան այս երեկոյան բոլորիդ շնորհավորում եմ, «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ասելով ձեզ: Նաև մեր բոլորիս սրտի պարտքն է, որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, շնորհավորել մեր Վեհափառ Հայրապետին, մաղթելով, որ մարդացյալ Փրկիչը պարգևի մեր Հայրապետին այն, ինչ որ կցանկանա նա: Նրա ցանկությունը աշխարհի խաղաղությունն է, մեր Եկեղեցվո խաղաղությունը, մեր ժողովուրդի բարությունն է և, ընդհանրապես, համայն մարդկության եղբայրությունը: Թող ծնվող Փրկիչը երջանկություն, խաղաղություն և եղբայրություն բերի այս աշխարհին այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:





ՆԱՐԵԿ ՔՀՆ. ՄԱՏԱՐՅԱՆ

# ՔԱՐՈԶ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալներ, վաղը Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին տոնելու է հիշատակը Ս. Վահան Գողթնեցու:

Վահան Գողթնեցին ծնվել է 700 թվականին, Գողթն գավառում: Նա որդին էր Խոսրով նախարարի: Ինչպես գիտեք, այդ ժամանակ Հայաստանը թատերաբեմ էր և կռվախնձոր արևելքի և արևմուտքի հզոր պետությունների միջև: 630—640 թվականներին մի նոր պետություն թատերաբեմ իջավ և, որոշ տարիներ հետո, այլ երկրների հետ, գրավեց և Հայաստանը: Դա Արաբական օրավուր հզորացող խալիֆայությունն էր:

700 թվականին, երբ ծնվել էր փոքրիկ Վահանը, արաբական պետության գլուխ էր կանգնած Մրվան ամիրապետը: Այդ ամիրապետը ուզեց նորից արշավել Հայաստանի վրա, և իր զորավարներից մեկին ուղարկեց Հայոց աշխարհ: Բայց ժամանակի կաթողիկոս Սահակ Ձորափորեցու թախանձագին խնդրանքով և միջնորդությամբ հայ ժողովուրդը փրկվեց վերահաս աղետից: Չորս տարի անց՝ 704 թվականին մեռավ Մրվան ամիրապետը, և նրան փոխարինեց որդին՝ Աբդլմելեքը՝ դաժան ու չար մի մարդ: Սա որոշեց երեսանց սիրաշահել հայերին, բայց գաղտնի կերպով /հրամայեց ոչնչացնել բոլոր հայ նախարարներին: Արաբները նախարարներին կանչում են՝ հպատակության երդում տալու պատրվակով, և եկեղեցում փակելով բոլորին այրում են: Այսպիսով, մոտ 600 իշխաններ ու նախարարներ նահատակվում են, զոհ գնալով չարի խաբկանքին:

Հայ ժողովուրդը, չունենալով իր նախարարները և իշխանները, մնում է առանց ղեկավարների, ինչպես ոչխարի հոտը՝ առանց հովվի, սված գայլերով շրջապատված: Թշնամու զինվորները ջարդում են ժողովրդին և կողոպտում նրանց ունեցվածքը, իսկ երեխաներին և կանանց գերեվարում են: Այդ գերիների մեջ էր և չորս տարեկան Վահանը: Նրան տանում են Դամասկոս և հանձնում ամիրապետին: Ամիրապետը զարմանում է Վահանի գեղեցկության ու ուշիմության վրա, և թլպատել տալով երեխային, անունը դնում են Վահապ: Վահապը սովորում էր արաբական դպրոցում և խորանում նրանց կրոնի գիտելիքների մեջ: Սակայն Վահանը աղոտ կերպով հիշում էր իրենց տունը, հորն ու մորը, գիտեր, որ ինքը քրիստոնյա է և ազգությամբ՝ հայ: Իսկ ինչ է քրիստոնեությունը կամ նրա ուսմունքը՝ նա չգիտեր:

717 թվականին ամիրապետ է լինում Օմար երկրորդը: Այս ամիրապետը բարի էր հոգով և սիրում էր արդարությունը, և իր իշխանության տարիներին երկիրը խաղաղության մեջ էր գտնվում: Ահա այդ բարի ամիրապետին դիմում են հայերը, որ իրենց թույլ տրվի վերադառնալ Հայաստան: Օմարը համաձայնվում է: Առիթից օգտվելով, Վահանը ևս մոտենում է Օմարին և խնդրում նրան՝ թույլ տալ իրեն մեկնելու Գողթն գավառ և տիրելու իր հայրական կալվածքներին: Օմարը թույլ է տալիս մի պայմա-

նով. որ նա Հայաստանում իր գործերը կարգավորելուց հետո նորից վերադառնա Դամասկոս՝ իր մոտ: Եվ ահա, Վահանը վերադառնում է հայրենիք: Ժողովուրդը, լսելով նրա վերադարձը, ցնծությամբ դիմավորում է նրան և խնդրում, որ նա մնա իրենց հետ և ապրի իր հայրական օջախում: Վահանը սքանչանում է Գողթն գավառի տեսարաններով, նրա ջինջ ջրերով և մաքուր օդով: Նա սկսում է ուսումնասիրել իր հայրերի պաշտած կրոնը և որքան խորանում է քրիստոնեական կրոնի ուսմունքի մեջ, այնքան ավելի պայծառանում է իր միտքը, տեսնում ճշմարիտ լույսը, զգում իր ապրած տարիների կորուստը խավարի մեջ և վերջնականապես որոշում է հրաժարվել իսլամից: Նա լացելով պաղատում է Աստծուն, որ ների իր մեղքերը, հակառակ որ նա անգիտակցաբար էր ընկել օտարություն: Եվ ինչպես մի ծարավ մարդ, երբ տեսնում է ջրի աղբյուրը, վազում է ջուր խմելու, այնպես էլ Վահանը հափշտակությամբ կարդում էր Սուրբ Գիրքը: Նա ամեն օր աղոթում էր Աստծուն և իր օրերը պահեցողությամբ անցկացնում: Ժողովուրդը ուրախության արցունքներով է ընդունում Վահանի քրիստոնյա դառնալը՝ տեսնելով նրա հոգու ամրությունն ու բարի վարքը: Նրանք որոշում են ամուսնացնել Վահանին: Վահանն ընդդիմանում է, նպատակ ունենալով հետևել Քրիստոսի և Նրա առաքյալների կյանքի օրինակին: Բայց ժողովրդի խնդրանքին անսալով, նա ամուսնանում է Սյունյաց Բաբկեն իշխանի աղջկա հետ: Սակայն ամուսնությունը չի խանգարում, որ նա շարունակի սրբակյաց կյանք վարել: Առավել հաճախակի է դարձնում աղոթքները, պահեցողության օրերը: Այդ օրերին վախճանվում է Օմարը և Վահանը ազատվում է այն երդումից, որ տվել էր Օմարին, այսինքն՝ ետ վերադառնալ Դամասկոս: Հակառակ իր խղճի հանգստության, նա անհանգստանում էր, որ այլազգի իշխանները կարող են իր քրիստոնյա դառնալու լուրը հասցնել նոր ամիրապետին: Եվ այդպես էլ լինում է: Երբ Վահանը լսում է, որ ամիրապետը գիտի իր քրիստոնյա լինելը, պատրաստվում է մեկնել Հունաստան, սակայն կինը չի համաձայնվում նրա հետ մեկնել օտարություն և վերադառնում է իր հոր մոտ: Վահանն ապավինում է Աստծուն, Նրա օգնությանն է դիմում և հոգով ամրապնդված, սկսում է շրջագայել Հայաստանի վանքերն ու ճգնարանները: Որտեղ որ լինում է, սիրում և հարգում են նրա անձը, որ նվիրված էր Տիրոջը: Իր վրա եղած իշխանական հագուստները փոխում է մազից պատրաստված պարեգոտով և ոտաբոբիկ սկսում է մաս գալ: Ճիշտ է, ժողովուրդը նրան սիրում էր, բայց բոլորն էլ վախենում են ամիրապետի զայրույթից: Եվ շատերն սկսում են խուսափել Վահանի հետ հանդիպելուց: Վահանը, գիտակցելով, որ հասել է նահատակվելու և իր ժամը, հայացքն ուղղում է դեպի հարավ՝ ամիրապետի մոտ: Նա մտածում էր և հայ ժողովրդի մասին, որովհետև եթե նա չգնար ամիրապետի մոտ, ապա կարող էր նրա զայրույթը թափվել ժողովրդի գլխին: Ամիրապետի պալատականները փորձում են համոզել նրան թողնելու քրիստոնեությունը, սակայն Վահանը ամուր է մնում իր հավատքին: Այն ժամանակ նրան ներկայացնում են ամիրապետին: Վերջինս, տեսնելով Վահանի խղճուկ վիճակը, սկսում է հորդորել, որ նա «դարձի» գա: Վահանը պատասխանում է. «Թույլ տվեք ինձ իմ հավատքին մնալ և ես ավելի լավ կծառայեմ ձեզ»: Իսկ ամիրապետը պնդում է իրենը: Այն ժամանակ Վահանը պատասխանում է. «Ինչպե՞ս կարող եմ թողնել լույսը և գալ դեպի խավարը: Լույսը տեսնողը խավարը չի սիրի, եթե նա բարի է և հոգին՝ խաղաղ»: Այդ ժամանակ ամիրապետը զայրանում է Վահանի վրա և նրան ուղարկում կառափնարան, ուր և գլխատվում է:

Այսպիսով, 738 թվականին Վահան Գողթնեցին ազատվում է երկրային տառապալից կյանքից և սկսվում է նրա երկնային հոգևոր երանավետ կյանքը:

Մեր Եկեղեցին և մեր Սուրբ Հայրերը սրբացրեցին նրան: Ամեն տարի հիշվում է այդ տառապակիր և սրբակյաց երիտասարդի նահատակության հիշատակը:

Սիրելի հավատացյալներ, Սուրբ Վահան Գողթնեցու հավատքի զորության մի նշույլը թող լինի և մեր սրտերում, և մենք էլ, նրա նման, ընտրենք Աստվածային լույսի ճշմարիտ ճանապարհը: Եվ թող մեր ժողովրդի այս մեծանուն նահատակ Սուրբը բարեխոս լինի բոլորիս համար և թողություն խնդրի մեր բազում մեղքերի համար:

Աստծու շնորհքը և սերը թող լինի մեզ բոլորիս, ամեն:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹԵՈԿՏԻՍՏ

Академия наук Армянской ССР
Центральная библиотека



## ՌՈՒՄԵՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՀՈՎՎԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի նոյեմբերի 16-ին Ռումեն Պատրիարքանիստ Մայր տաճարին մեջ տեղի ունեցավ Ռումեն Ուղղափառ Եկեղեցու նոր հովվապետի գահակալությունը, հանձին Մոլտավիո և Սուչավայի միտրապոլիտ Թեոկտիստ Արըբաշու Սրբազանի:

Նոր հովվապետը 5-րդ պատրիարքն է Ռումեն Եկեղեցու, որ հաստատվում էր Ռումանիո Հանրապետության նախագահի հրամանագրով, հետ Ազգային Եկեղեցական և Սուրբ Սինոտի միաձայն ընտրության:

Գահակալության հանդիսության ներկա էին Ռումեն Եկեղեցու Սինոտի անդամները, կրոնական դավանանքների պետերը, ազգային, պետական, մշակութային ու գիտության ներկայացուցիչներ:

Սույն հանդիսության իրենց ներկայությունն են բերել նաև արտասահմանի ուղղափառ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես են Պուլկարիո Մաքսիմ Պատրիարքը, Երուսաղեմի Հունաց Պատրիարք Տիտորոսը, Բելորուսիո միտրոպոլիտ Ֆիլարետը, ինչպես նաև Վատիկանի ներկայացուցիչ Վիլլեպրանն կարտինալը:

Ներկա էին նաև Եվրոպայի եկեղեցական զանազան կազմակերպությունների պատվիրակներ:

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Վազգեն Ա-ի մասնակցում էր թեմական առաջնորդ Տ. Տիրայր Ս. արքեպիսկոպոս Մարտիկյանը:

Ս. պատարագի և գահակալության հանդիսությունից հետո, տրվեց պաշտոնական ճաշկերույթ: Ճաշկերույթին ներկա էին նաև Ռումեն պետական անձնավորություններ:

Գահակալության հանդիսությունը ընթացավ եղբայրական, քրիստոնեական ջերմ մթնոլորտում:

ԹՂԹԱԿԻՑ



# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԿԻՊՐՈՍՈՒՄ

1986 թ. նոյեմբերի 17—26 օրերին Կիպրոսի Լառնաքա քաղաքում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջեկեղեցական տիեզերական օժանդակության համագումար: Համագումարին մասնակցում էին 102 երկրներից հրավիրված 300-ից ավելի կրոնական գործիչներ, մասնագետներ, բազմաթիվ հյուրեր:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Միջեկեղեցական Տիեզերական Հանձնախմբի հրավերով և Ամենայն Հայոց Հայրապետի համաձայնությամբ սույն ժողովին իր գործոն մասնակցությունը բերեց նաև Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:

Համագումարի նշանաբանն էր՝ «Կոչ՝ հարևանությունը ապրելու»:

Նոյեմբերի 18-ին համագումարի բացումը կատարեց հյուրընկալ Կիպրոսի հոգևոր պետ, Նորին Ամենապատվություն Խրիսոստոմոս արքեպիսկոպոսը: Բացման արարողությանը հաջորդեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի օգնականի՝ դոկտոր Ադեապետ Էդեդիճիի ուղերձը՝ «Դեպի երկրորդ հազարամյակի արշալույսը և 21-րդ դարի սկզբնավորությունը» խորագրով: Այս ուղերձում քննարկված հարցերին անդրադարձան ժողովի ևս երկու մասնակիցներ:

Հաջորդ օրը համագումարն ունկնդրեց դոկտոր Վիթորիո Արաեայի ուղերձը՝ «Բարի սամարացու ծառայությունը. կյանքը ինչպես ապրելու մի ընտրություն» թեմայով, ուր բանախոսը ներկայացրեց Եկեղեցիների որդեգրելիք Աստվածաբանական պատասխանը՝ աշխարհի այժմյան կացության և հետագա զարգացման վերաբերյալ:

Երեքօրյա խորհրդակցությունից հետո 27 խմբերի բաժանված պատգամավորները ներկայացրին իրենց առաջարկներն ու կարծիքները, որոնց համադրմամբ և կազմվեց համագումարի օրակարգը: Օրակարգի ճշտումից հետո պատգամավորները՝ դարձյալ ժողովի նստելով, քննարկեցին արծարծված խնդիրները և ներկայացնելով վերջնական զեկուցագրեր, ջանացին սահմանել քրիստոնեական ծառայության բնույթն ու տարողությունը, ինչպես նաև նոր միջոցներ որոնել՝ ծառայությունը դարձնելու ավելի անմիջական, արդյունաբեր և հանրօգուտ:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Ավագ Սրբազանը Համագումարի Ընդհանուր նիստի կողմից ընտրվեց որպես անդամ թե՛ ժողովի գործարար հանձնախմբի և թե՛ եզրափակիչ հայտարարության հանձնախմբի: Սույն հայտարարության, որ կոչվեց Լառնաքայի հայտարարություն, 5-րդ հոդվածի մեջ ընդգծվեց հետևյալը.

«...Իրաքա-Իրանյան պատերազմը ազդարարում է մեզ՝ բոլոր զոհերի նկատմամբ կարեկցություն արտահայտելու նոր կերպեր զարգացնել, ինչպես նաև պահանջում է մեզնից՝ դիմելու պետական ուժերին, որոնք զենքերի վաճառումով այս պատերազմն են սնուցանում, ուշացնելով վայրագությունների լուծումը: Սույն վիճակը նույնպես պահանջում է մեզնից քաջալերելու բոլոր նրանց, որոնք նախաձեռնողներ են եղել խաղաղության ի նպաստ: Հայկական Ցեղասպանությունը, մեր դարի առաջիններից մեկը, պետք չէ մոռացվի և պիտի ճանաչում գտնի աշխարհի կողմից...»:

1986 թ. նոյեմբերի 28-ին համագումարն ավարտեց իր աշխատանքները:

ԹՂԹԱԿԻՑ



ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ

## ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ 1908—1955, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 1986

Կազմեց՝ Սուրեն Ծ. Վանեցի.
320 էջ, ներդիր 26 էջ նկարներ

Վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանից լույս տեսավ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կյանքի և գործունեությանը նվիրված համառոտ տարեգրության անդրանիկ գիրքը: Գիրքը կազմել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ավագ գիտական աշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Ծ. Վանեցին: Բազմաթիվ են այն գրքերը, որոնք լույս են տեսել նվիրված Վեհափառ Հայրապետի կենսագրությանն ու գործունեությանը և ուղևորություններին: Սակայն սույն գիրքը Ամենայն Հայոց Հայրապետների պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում, հատկապես այն առումով, որ ինչպես ասված է Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից գրված «Երկու խոսք»-ում. «Ներկա տարեգրությունը, որն իր նախորդը չունի հայ ժողովրդի 130 կաթողիկոսներից և ոչ մեկի կյանքում, արդյունավետ սկիզբ կհանդիսանա այդ բնույթի հետագա է՛լ ավելի խորանիստ աշխատությունների համար»:

Կազմողը, որ հարուստ փորձ ունի նման տարեգրությունների կազմման աշխատանքներում, իր ներկա գործը բաժանել է ոչ միայն ըստ տարիների, այլև ամիսների և օրերի և Հայաստանում գտնվող նյութերի հիման վրա ներկայացրել է Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության հետ կապված իրադարձությունները: Տարեգրության սույն հիմնադիր գիրքը ընդգրկում է Վեհափառի Ռումինիայում ապրած




ժամանակահատվածը (1908—1955): Բովանդակ նյութը հաջող կերպով խմբավորված է հետևյալ վեց գլուխների ներքո. 1.—Մեծ ճանապարհի սկիզբը, 2.—Կրթական-մշակութային գործիչը, 3.—Դեպի հոգևոր բարձունքներ, 4.—Առաջնորդական տեղապահի իրավասության սահմաններում, 5.—Ռու-

միանահայ թեմի բազմախոստում առաջնորդը և 6.—Լուսավորչի սուրբ գահի 130-րդ թեկնածուն:

Գիրքը բացվում է 1908 թ. սեպտեմբերի 20-ով, երբ Ռումինիայի քաղաքամայր Բուխարեստում իր աչքերն է բացում աշխարհին Կարապետ-Լևոն Պալճյանը, ապագա Ամենայն Հայոց Հայրապետը՝ իբրև բարեպաշտ և ազգասեր ծնողների միակ զավակ: Սույն գիրքն ավարտվում է 1955 թ. զարմանալիորեն խորհրդավոր զուգադիպությամբ դարձյալ սեպտեմբերի 20-ով, երբ Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստում իբրև 130-րդ կաթողիկոս է ընտրվում Ռումինիայի և Բուլղարիայի հոգևոր թեմերի առաջնորդ Գեր. Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը:

Սույն տարեգրությունը խարսխված է Վեհափառ Հայրապետի կողմից կազմողի հետ ունեցած հարցազրույցների, Մաշտոցյան Մատենադարանի, Էջմիածնի կաթողիկոսական և Հայաստանի պետական պատմական դիվաններում պահվող փաստաթղթերի, Վեհափառի հեղինակած գրքերի, հոդվածների, նամակների և գրագրությունների, ինչպես նաև Հայրապետի կյանքի և գործունեությանը նվիրված հատորների ընձեռած նյութերի հիման վրա: Կազմողը օգտագործել է նաև Հայաստանում եղած ռումինահայ մամուլը, բազմավաստակ հայագետ Հ. Ճ. Սիրունիի, անվանի մանկավարժ Արտաշես Տիրացյանի և այլոց երկերը: Օգտագործվել է նաև հայերեն և ռուսերեն անհրաժեշտ գրականություն՝ ժամանակի իրադարձությունները ներկայացնելու համար:

Համառոտ տարեգրության մեջ հատկապես ուշագրավ են այն էջերը, որոնք նվիրված են Վեհափառի մանկությանը, ուսումնառությանը, հասարակական և ազգային գործունեությանը և մանավանդ նրա նվիրումին՝ սերունդներ դաստիարակելու աշխատանքում:

Գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ և ունի մի շարք առավելություններ: Այն սկզբից մինչև վերջ փաստալից է, ցույց են տրված օգտագործված աղբյուրները և գրականությունը: Նրանում հիմնականում նյութերի միջոցով պահպանված է Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության հաջորդականությունը: Գիրքը ավելի քան փաստացի են դարձնում մեջ բերված լուսանկարները և զանազան փաստաթղթերից, նամակներից, մամուլից կատարված նմանահանությունները:

Գրքի առավելություններից մեկն էլ այն է, որ կազմողը քննարկվող ժամանակաշրջանի վերաբերյալ օգտագործել է նաև քաղաքական իրադարձությունը բացահայտող հարուստ գրականություն: Այս առումով էլ, երբ գրքում խոսք է լինում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռումինահայության ստվար մասի, այդ թվում նաև Վեհափառի ընտանիքի արտագաղթի մասին, այստեղ հնարավոր չէ մեջ չբերել Թուրքիայի ռազմական նախարար տխրահռչակ Էնվեր փաշայի գաղտնի հուշագիրը Դանուբյան բանակի գերմանացի հրամանատար գեներալ Մակենզենին, Ռումինիայում նրա գրավելիք տարածքներում հայերի նկատմամբ «խստական միջոցառումներ» գործադրելու մասին: Էնվերը իր այդ գաղտնագրում գերմանացի զորահրամանատարին գրում էր հետևյալը. «...Հատկապես, գեներալ, Ձեր բարձր ուշադրությունն եմ հրավիրում Ռումինական Թագավորության տարածքում ապրող հայազգի բնակչության վրա, որոնք մեր վարած վերջին քաղաքականության հետևանքով (ակնարկում է 1915 թ. հայկական կոտորածները. **ծանոթ. կազմողի**) կարողացան ճողոպրել Թուրքիայից և վերաբնակվել այնտեղ: Նրանց նկատմամբ **պետք է կիրառվեն խստություններ ամենամեծ չափերով, անպայմանորեն ներառյալ մասսայական տեղահանությունն ու զանգվածային ոչնչացումը»** (Համառոտ տարեգրություն, էջ 14, հմմտ. Международные отношения 1870—1918 г. (Сборник документов) Москва, 1940 г. стр. 124. ընդգծումը մերն է, Ս. Ք.): Սույն մեջբերումը, եթե մի կողմից բացահայտում է ռումինահայերի 1916 թ. շուրջ 80 տոկոսի արտագաղթի պատճառները դեպի Ռուսաստան և ի մասնավորի Օդեսա, միաժամանակ այն այժմեական խիստ կարևոր արժեք է ներկայացնում մանավանդ ներկա օրերին, երբ Թուրքիայի ղեկավարները կեղծելով փաստերը աշխատում են մերժել հայաջինջ ջարդերի կազմակերպումը անգամ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Թուրքիայում, քողարկում են դահճապետ Թալեաթի հայերին ոչնչացնելու գաղտնագիր գրությունները: Ահա մեկ այլ հրեշի՝ Էնվեր փաշայի գաղտնի հուշագիրը հաստատում է, որ թուրքերը չբավականանալով հայերի բնիկ երկրում իրենց կազմակերպած ջարդերով, պետք է որ նոր ջարդեր կազմակերպեին այս անգամ թուրքական յաթաղանից հրաշքով մազապուրծ և արտասահման ապաստանած հայերի նկատմամբ:

Վեհափառ Հայրապետի կյանքին ու գործունեությանը նվիրված համառոտ Տարեգրության լույն առաջին գիրքը ոչ միայն

արժեքավոր է Նորին Վեհափառության կենսագրության ստեղծման համար, այլև կարևոր ատաղձ ռումինահայ գաղութի նորագույն շրջանի պատմության ուրվագծման առումով, քանի որ Վեհափառ Հայրապետը իր իմաստալից կյանքով անձնավորում է տվյալ ժամանակի ռումինահայ պատմության կարևոր մասը:

Ավարտելով գրքի ընթերցումը, մեր առաջ կոթողանում է ժամանակի տեսիլք ունեցող ազգային-եկեղեցական անխոնջ գործչի ու նվիրյալի անբասիր կերպարը: Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետը, սկսած ռումինահայ գաղութի անմոռանալի ղեկավարումից մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոսության աստվածատուր գահակալության անցնող երեսուն տարիները, դիմեց ազգանվեր ու հայրենանվեր բազում սխրանքների և որոնց արձանագրումը իբրև նորագույն Վարք Հայոց Մեծաց, միանգամայն արժանի է նորանոր հավերժացման մատյանների ստեղծման:

*
* *

Ինչպես ամեն մի աշխատություն, այս գիրքը ևս զերծ չէ բացթողումներից, լրացման և ճշգրտման կարոտ հատվածներից: Հավելումները, որ ցանկանում ենք անել այստեղ, բխում են Վեհափառ Հայրապետի կյանքն ու գործունեությունը ավելի ամբողջական դարձնելու ցանկությունից: Օգտվելով մեր ձեռքի տակ կուտակված ռումինահայ գաղութի նորագույն պատմությանը վերաբերող նյութերից և ի մասնավորի նկարագրվող իրադարձությունների մեկ մասի ականատես վկան և մասամբ համեստագույն մասնակիցը լինելու հանգամանքից, հուսով ենք, որ ստորև մեր կատարելիք լրացումները կնպաստեն սույն կարևոր գրքի ընթերցողներին՝ Վեհափառի Ռումինիայում անցկացրած ժամանակաշրջանը ավելի ամբողջական ձևով ընկալելու համար:

**1932 թ. փետրվար.**—«Հայ Մշակույթի Բարեկամներու Ընկերակցության» կողմից Բուխարեստի «Աթենեուլ Ռոմըն» հոյակապ սրահում կազմակերպված Հայ արվեստի երեկոյին, որին նախագահում էր Նիկոլայե Յորգան, հայ մշակույթի զանազան փուլերի մասին զեկուցեց Փարիզից հատկապես հրավիրված Արշակ Չոպանյանը: Գեղարվեստական մասում հանդես եկան «Կոմիտաս» երգչախումբը և երգչուհի Արաքս Սվաճյանը: Հայ բանաստեղծների գործեր ռումիներեն թարգմանությամբ արտասանեց ռումին պետական թատրոնից Մարիետա Սադովան, իսկ **Կարապետ-Լևոն Պալճյանը** արտասանեց մեծանուն բանաստեղծ Միհայլ Էմինեսկուից՝ հայերեն:

«Արազ» տարեգիրք, Ա. տարի, 1933, Բուխարեստ, էջ 246:

**1935—1938 թթ.** վերաբերյալ Տարեգրության մեջ չեն հիշատակված **Կարապետ Պալճյանի** հայերենից ռումիներեն կատարած հայագիտական թարգմանությունների մասին: Հայագետ Հ. Ճ. Սիրունիի կողմից խմբագրված և հրատարակված «Անի» ռումիներեն հայագիտական եռամսյա հանդեսը, որը լույս էր տեսնում մեծանուն գիտնական և հայասեր Նիկոլայե Յորգայի հովանավորությամբ 1935—1938 թթ., գրեթե բոլոր համարներին ռումինահայ այլ երիտասարդների հետ իր մասնակցությունն է բերել նաև **Կարապետ Պալճյանը:** Ինչպես «Անի» եռամսյա հանդեսի 8 պրակները, այնպես էլ երկու ստվարածավալ տարեգրքերը մեծ նշանակություն ունեցան հայ և ռումին բարեկամական կապերի ավելի սերտացման գործում:

Տեսնել „Ani" Revistă de cultură armeană, Bucureşti. 1935 դեկտ., 1936 հուլիս, 1936 նոյեմբեր, 1937 հունվար, ապրիլ, 1938 թ. մարտ, ապրիլ:

**1938 թ. փետրվարի 20.**—«Հայ Մշակույթի Բարեկամներու Ընկերակցության» նախաձեռնությամբ և Ն. Յորգայի նախագահությամբ «Լիկա կուլտուրալը» թատրոնում տեղի ունեցավ Հայ արվեստին նվիրված տոնակատարությունը, ուր բանախոսեց Գր. Զամպաքճյանը, գեղարվեստական բաժնին մասնակցեցին Արաքս Սվաճյանը, «Կոմիտաս» երգչախումբը և **Կ. Պալճյանը,** որ ռումիներենով արտասանեց Մեսրոպ Մաշտոցի, Ներսես Շնորհալու, Նահապետ Քուչակի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Միսաք Մեծարենցի և Դանիել Վարուժանի բանաստեղծություններից:

"Ani", Revistă...1938 թ. մարտ, էջ 90:

**1941 թ. դեկտեմբեր.**—Բուխարեստի «Հայ մամուլ» անկախ շաբաթաթերթի (հիմնադիր՝ Հ. Մ. Պոտուրյան) խմբագիրներ Հ. Գ. Աթանասյանի և Վ. Պահատրյանի կողմից **Կ. Պալճյանը** հրավիրվեց գործակցել թերթի խմբագրությանը: Կ. Պալճյանը ստորագրեց ոգեշունչ խմբագրականներ և նշմարներ:

Ահա Կ. Պալճյանի «Հայ մամուլ» թերթում գրած խմբագրականը, որը օտարության մեջ գրված Սփյուռք-Հայրենիք կապերի լավագույն արտահայտություններից մեկը կարելի է համարել.

## ՀՈ՞Ն, ՀԵՌՈՒՆ...

Հոն, հեռուն տուն մը ունինք մենք:
Մեզի համար ամեն ինչ է ան:
Ամբողջ աշխարհ մըն է կենդանի:
Ան քար է, լույս և արյուն:
Ու տեսիլքը Մեսրոպին:
Այդ տեսիլքին մեջ քարը դարձավ տաճար, լույնը՝ ծիածան, արյունը հոգի, իսկ ժամանակը պատմություն:
Ու այսպես ահա, Արարատյան Աշխարհը Հայոց մարմին առած դարեր երազեց...
Քանի քանի անգամներ ուզեցին անոր քարը փշրել:
Քանի քանի անգամներ ուզեցին անոր լույսը մարել:
Քանի քանի անգամներ ուզեցին անոր արյունը ցամքեցնել:
Ամեն անգամ սակայն, Մեսրոպին տեսիլքը հաղթահարեց:
Ան եղավ և՛ քար, և՛ լույս և՛ արյուն ու մեր տունը մնաց կանգուն, լուսավոր և կենդանի:
Մեր նախնիքներեն մնացած հսկա ժառանգություն մըն է ասիկա, որուն մեծությունը ճանչնալու և չափելու իսկ անկարող է մեր սերունդը:
Ժառանգություն մը՝ զոր կրելու համար, մեր ուսերը և՛ տկար են, և՛ անարժան:...
Եվ սակայն մեր սերունդին ալ վիճակված է գեթ հպատակիլ անոր և խոնարհիլ գիտնալ անոր առաջ:
Մեր ժողովուրդի պատմության և մշակույթին առաջ:
Մեր ցեղի բարոյականին և իտեալիզմին առաջ:
Ու այսօր երբ մեր շուրջը ամեն ինչ խարխուլ է, անորոշ և երերուն դավանինք այդ արժեքները
Ինչքան վտանգը ավելի մեծ ըլլա, մենք ավելի քան երբեք հավատանք մեր վերջնական հաղթանակին ու փրկության:
Ինչքան խավար դառնա աշխարհը, մենք ավելի մոտենանք Մեսրոպյան լուսեղեն տեսիլքին ու արտանց ապրինք անոր բոլոր ստեղծագործությունները՝ մեր մշակույթն ու մեր պատմությունը:
Ինչքան ավելի առատ հոսի մեր եղբայրներուն արյունը, այնքան ավելի զորացնենք մեր մկանները:
Զորացնենք մանավանդ մեր երիտասարդության հայու գիտակցությունը: Այս ճամբուն վրա բոլորը արբազան պարտականություններ ունին, մանավանդ հին սերունդը և մեր ազգային հաստատությունները:
Մեր նոր սերունդին հոգիին մեջ ալ ճառագայթ մը ցաթեցնենք Հայոց Աշխարհի Տեսիլքեն ու հայ հոգիներու իտեալիզմեն:
Միայն այսպեսով պիտի կարենանք կենդանի ու կորովի մնալ:
Ու պետք է մնանք, մինչև մեր փակ բախտին դուռը բացվի: Որովհետև, հո՞ն հեռո՞ւն, տուն մը ունինք որ անձկալի մեզ կը սպասե:
Հե՜յ, դո՛ւն, Հայոց Աշխարհ, մեր այս կորսված անկյունեն մեր ողջույնը ընդունե...

Հո՞ն, հեռուն» հոդվածը ապագա Հայոց Հայրապետը տպել էր Բուխարեստում հրատարակվող անկուսակցական «Հայ մամուլ» շաբաթաթերթում 1941 թ. դեկտեմբերին, այսինքն Սովետական Միության վրա կատարված հիտլերյան բանակների հարձակումից մի քանի ամիս անց: Այդ օրերին համարձակ սխրանք է եղել գերմանական կրնկի տակ գտնվող Ռումինիայից ողջույն առաքել Հայաստանին, որի զավակների «արյունը առատ հոսում էր» ի խնդիր Հայրենիքի պաշտպանության:

**1944 թ. հունվարի 30-ի** իր համարում ռումինական **«Ունիվերսուլ»** մեծ օրաթերթը հրատարակել է կարևոր մի առաջնորդող **«Ռումին հանդուրժող ոգին»** խորագրով, որը նվիրված էր Վազգեն վարդապետ Պալճյանի աթոռակալության հանդեսին:

«Նորընտիր Վազգեն վարդապետ Պալճյանի նկատմամբ, կիմանանք, գոհունակության զգացումով մը, որ մեր երկրին զավակներեն մեկն է, և որ այս երիտասարդ ու կրթված հոգևորականը հոս ստացած է իր մտային պատրաստությունը, հոգևոր կերպով ուռճացած է միջավայրին մեջ ռումեն ժողովուրդին՝ որուն բաղձանքներուն հետ նույնացած է անթերի կերպով: Ուրեմն լուսավորված և գիտակից պետ մը պիտի հանդիսանա եկեղեցվույն և համայնքին համար, որ առաջնորդության կոչված է, ըլլալով միանգամայն շատ լավ ռումանացի մը:

Բայց Ռումանիո հայ լուսավորչական եկեղեցվույն նոր առաջնորդին հաստատությունը պատճառ եղավ, որ երևան գան ռումանական այն մեծ և անվիճելի հանդուրժողական ոգին, միևնույն ատեն ցուցնելու թե որքան լավ և կատարյալ կերպով հայ տարրը նույնացավ ռումեն ժողովուրդի քաղաքական և պետական կյանքին հետ:

...Կը հիշենք որ հայերը որ իրենց բնիկ երկրին մեջ կը ներկայացնեին քրիստոնեական մշակույթը և քաղաքակրթությունը,

հալածվեցան ճի՛շտ այս պատճառով և բռնադատվեցան իրենց կյանքը ապահովելու համար, ձգելու հինավուրց հաստատությունները իրենց բնաշխարհին:

Անոնք բռնեցին գաղթականի փշոտ ճանապարհը և ապաստան փնտռեցին օտար երկիրներու մեջ, օտար ժողովուրդներու մոտ:

Շատերը, շատ շատերը հաստատվեցան —և ասիկա դարեր առաջ—նախկին ռումեն իշխանությանց մեջ, մանավանդ ի Մոլտովա. քիչ չեղավ սակայն թիվը այն հայերուն՝ որոնք հաստատվեցան ռումեն հողերեն տարբեր ուրիշ երկիրներու մեջ: Գիտենք զոր օրինակ, որ Հունգարիո քաղաքներեն մին—անշուշտ հունգարական բարբառով—Հայոց քաղաք (Ծ. Խ. Կեռլա քաղաքը, որ կը կոչվեր նաև Արմենոփոլիս) անունը կը կրե: Այսուհանդերձ միակ երկիրը աշխարհիս մեջ, ուր հայերը ինքզինքին լավագույն զգացին և վայելեցին բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ հանդիսացավ Ռումանիան:

Այսպես ուրեմն, առաջին առթիվ հայերը իրե՛նք իսկ պիտի հաստատեն հետևյալ ճշմարտությունները՝ ընդգծված դավանությանց և Ազգային Մշակույթի նախարար պրոֆ. Յոն Փեթրովիչի կողմե.

«Ոչ մեկ ատեն անցյալին մեջ, հալածանքի մի նշույլն իսկ, ինչպես և ոչ այսօր ալ ոևիցե սահմանափակում կամ կասկածանք՝ հայ ժողովուրդին հետ մեր ունեցած հարաբերությանց մեջ: Մեր երկրին մեջ հայկական ծագումով նախարարներ և գրագետներ ունեցած ենք: Ո՛չ մեկ ատեն սակայն անոնց հայկական ծագումը թերի մը կամ անպատեհություն մը նկատված է»:

Իսկ ինչ կը վերաբերի հայ տարրին ռումեն մշակույթին բերած նպաստը, աշխատասեր տարր մը, լավագույնս օժտված գեղեցիկ ընդունակություններով և մշակութային հնամենի ավանդություններով, այս նպաստը երևան կուգա բազմաթիվ հրաշակերտ եկեղեցիներու և արվեստի ուրիշ շքեղ գործերու մեջ: Հայ ծագումով գրագետներու և փրոֆեսորներու թիվին մեջ, դպրոցներու և բարենպատակ հաստատություններու մեջ, հիմնված ռումանահպատակ հայերու կողմե, որուն պետք է ավելցընենք նաև անձնվիրությունն ու գիտակցությունը որով շատեր անոնցմե, իբրև հանրային գործերու նվիրված պաշտոնյաներ, ծառայած են և կը շարունակեն ծառայել ռումեն պետության»:

„Universul", 30 ianuarie 1944.

Թարգմանությունը **«Արազ»**, 1944 թ. փետրվարի 6, № 1063:

Ռումինիայի ռադիոկայանը հաղորդեց **«Ունիվերսուլ»** օրաթերթի այս կարևոր առաջնորդողը և անդրադարձավ նաև աթոռակալության հանդիսությանը:

**1944 թ. փետրվարի 6-ին** «Արազ» թերթում Վազգեն վարդապետ Պալճյանի աթոռակալության հանդիսության առթիվ Հ. Ծ. Սիրունին գրեց հատուկ առաջնորդող «Նիքոլա Յորգայի ոգին» խորագրով, ուր ի միջի այլոց ասված էր.

«...Գոյ էր հոն, որովհետև միշտ գոյ է արդեն անոր հոգին մշակույթի այդ հարկին տակ, մարդոց միտքն իյնա թե ոչ: Գաղտնիք մը չէ որ ինք եղավ առաջինը որ այնքան արտանց խրախուսեց նախաձեռնողները Ռումանահայ Կեդրոնական Մատենադարանին երբ ան կը հիմնվեր 1927-ին ու ինք եղավ առաջին այցելուներեն մեկը անոր ու ինք եղավ որ առաջինը տողերը արձանագրեց անոր ոսկեմատյանին մեջ. «Ի հիշատակ այցելությանս այս հարկին ուր պարփակված է մտածումը դժբախտ ու փառավոր ժողովուրդի մը»: Ու որքա՜ն պիտի հրճվեր մեծ հայասերը եթե իրեն տրվեր նաև բացումը ևս տեսնել Հայ Մշակույթի այս Տան՝ որ մարմին պիտի առներ իր եղերական վախճանեն քիչ հետո Տուտյան առատաձեռնության շնորհիվ և ուր եկավ տեղ գրավել մատենադարանը փոխադրվելով իր նախկին համեստ հարկեն՝ հայ արվեստի ու հայ անցյալի այնքան թանկագին նշխարներուն և նմուշներու հետ:

Գոյ էր անոր ոգին հոտ, ինչպես որ ներկա է ամեն տեղ ուր փառաբանությունը կըլլա հայ տարրին ստեղծագործ դարերուն այս ասպնջական երկնքին տակ ու հայ ժողովուրդի մեծ ու սգավոր պատմության, որովհետև իրեն չափ շատ քիչերը միայն գիտեին արժեքը սերմերուն զորս հայ ժողովուրդը բուռ բուռ դարերուն ցանեց, ու այս ափերուն վրա անոր թափած քրտինքին:

Գոյ էր անոր ոգին հոտ, որովհետև ոչ ոք իրմե ավելի իրավունք ուներ ներկա ըլլալ այդ օրը: Ինք էր որ հայ թեմին օրինական կերպարանք էր տվեր, ինք էր որ նվիրագործեր էր այդ թեմին կանոնադրությունը, ինք էր որ օրինապես ամրապնդեր էր նախկին առաջնորդին պաշտոնը՝ որ հազիվ թե հանդուրժված էր մինչև այն ատեն իրմե առջի դահլիճներուն օրով: Ու հանցանքը երբեք Նիքոլա Յորգայինը չէր եթե երբեք մենք մեր թեմին հարգը չգիտցանք, ու ամբողջ տասը տարի վատնեցինք հումպետս: Տարբեր կըլլար հունձքը այդ տասը թանկագին տարիներուն եթե տարբեր մարդոց հանձնված ըլլար ճակատագիրը թեմին:

Գոյ էր անոր ոգին հոտ, որովհետև ոչ ոք իրմե ավելի իրավունք ուներ հրճվելու՝ տեսնելով որ կը վերընձյուղի թեմը կրկին, շնորհիվ տարիե մը ի վեր թափված ճիգերու ավիշ ներարկելու համար թմրած օրգանիզմի մը, հրճվելու՝ տեսնելով որ սքեմ առեր է, հայ եկեղեցվո ծառայելու և ապահովելու համար թեմին հաջորդությունը, երիտասարդ հայ մտավորական մը, որուն ևս տրվեր էր աշակերտելու իրեն երբեմն համալսարանի գրասեղաններուն վրա, խորհրդավոր զուգադիպություն՝ զոր իր հոգին մեջ անշուշտ ինքն ալ կը զգար թեմին վաղվան աթոռակալը հանդիսավոր այդ պահուն...

Նիքոլա Յոռկայի ոգին մեր մեջն էր այդ օրը, ու մեր մեջը պիտի ըլլա ամեն անգամ երբ առիթ տրվի մեզ ոգեկոչել մեր սրտի կապը հյուրընկալ այս ժողովուրդին հետ: Դարավոր է մեր տքնությունը այս հողին վրա, ու դարավոր՝ մեր գտած սերը, փոխարեն: Բայց Նիկոլա Յոռկան եղավ որ համադրեց տքնության ու սիրո այդ յոթը երկար դարերը: Արդար է որ անոր ոգին միշտ մեր մեջը տնե»:

**«Արազ» 1944 թ. փետրվարի 6. № 1066:**

**1944 թ. կիրակի փետրվարի 27.**—Ժողովրդական հանդիսություն Բուխարեստի «Հայ Մշակույթի Տան» բացման առթիվ: Նախագահում է Վազգեն վարդ. Պալճյանը և միաժամանակ բացման խոսք է ասում՝ նշելով հետևյալը. «Վերջին երեսուն տարիներու ընթացքին Պուքրեշի հայ համայնքը չորս շինարարական գործ կատարեց: 1913-ին եկեղեցին, 1926-ին Ազգ. վարժարանը, 1939-ին Ազգ. թիվ 2 վարժարանը և այժմ ահա սա Մշակույթի տունը: Ասիկա անանխընթաց երևույթ մըն է ոչ միայն մեր գաղութին այլ նաև բոլոր հայ գաղութներու համար:

Այս շինարարությունը, ինչպես նաև մեր գաղութի ի հայտ բերած կրթական, մշակութային գործունեությունը իր բոլոր միություններով կու գան ապացուցանել թե Ռումանահայ գաղութը և հատկապես Պուքրեշը արժանավոր տեղ մը կը գրավեն մեր քույր գաղութներու շարքին մեջ»: Ապա իր երախտագիտական խոսքը ռումին ժողովրդին և շենքի նվիրատու Տուտյան ընտանիքին ուղղելուց հետո Առաջն. Տեղապահը ավելացրեց. «Հուսահատներուն և թերահավատներուն Հիսուս ըսավ. «Մի վախնաք, այն Աստվածը որ Աբրահամու ցեղը ստեղծեց, քարերեն անգամ նոր Աբրահամներ կրնա ծնցնել:

«Ես կը հավատամ, թե այդպիսի օրհնություն մը կա նաև մեր ժողովուրդի վրա: Այն հողը որ ծնունդ տվավ մեր բոլոր արժեքներուն՝ այսօր ալ կա. այդ մայր երկրի հողն է: Եվ ինչքան ատեն կենդանի են մայր հողը, մեր մշակույթը և մեր եկեղեցին՝ ապահով է մեր ներկան ու ապագան:

«Հող, մշակույթ և եկեղեցի, ահա հայ ժողովուրդի սուրբ երրորդությունը որով ան պիտի ապրի հավիտյան:

Օրհնյալ ըլլա այդ սրբազան երրորդությունը»:

**«Արազ»**, 1944 թ. մարտի 5, № 1067, էջ 3:

**1945 թ. նոյեմբերի 29**, ավելացնել Տարեգրությանը.—«Փայլուն ընդունելություն» Հայ Մշակույթի Տան մեջ» խորագրի տակ նշված է հետևյալը. Ներկայությամբ ռումինական գրեթե ամբողջ կառավարությանը, ռումին ակադեմիկոսների, սովետական ռազմական բարձր աստիճանավորների, Բուլղարիայի դեսպանի և ուրիշների ճառերով հանդես եկան գեներալ Սուսայկովը, Ռումինիայի վարչապետ դոկտ. Պետրու Գրոզան և ուրիշներ: Վազգեն վարդապետ ռոման լեզվով և զգայուն խոսքերով կը դրվատե ռոմանո-սովետ բարեկամությունը, վեր հանելով հայ ժողովրդի նվիրումը հանդեպ ռուս և ռոման ժողովուրդին:

«Պահակ», 9 դեկտ. 1945 թ., № 46 (347) էջ 3:

**1945 թ. կիրակի դեկտեմբերի 23-ին** «Հայ Մշակույթի Տան» հանդիսասրահում, նույն տան երիտասարդական ինքնազարգացման շրջանակի կողմից կազմակերպվում է հայկական միջավայրում առաջին հիշատակի հանդիսությունը նվիրված Նիկոլայե Յորգայի ողբերգական սպանության 5-րդ տարելիցին: Բացման խոսք արեց Առաջն. Տեղապահ Վազգեն վարդապետ Պալճյանը, բանախոսեցին Ս. Քոլանջյանը, Աքս. Թրայանը, որին հաջորդեց գեղարվեստական ճոխ ծրագիր: Փակման խոսքը ասաց «Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահ դոկտ. Արամ Մ. Սարբին:

«Պահակ», 1945 թ. կիր. 23 դեկտեմբերի էջ 1. Զարեհ Արկյան (իմա՝ Ներսես Պալյան), Հիշատակի հանդես փրոֆ. Ն. Յորգայի մահվան 5-րդ տարելիցին:

**1946 թ. փետրվարի 28.**—Բուխարեստի «Աշխատավորական թատրոն»-ում «Հայաստանյան ճակատ»-ը կազմակերպեց 1495-րդ տարեդարձը Ավարայրի ճակատամարտին: Այդ առթիվ բանախոսեցին **Վազգեն վարդապետ Պալճյան** և ընկ. Զարեհ Պլպուլ: Հ. Ճ.-ի ուսանողական բաժինը բեմադրեց պատմական «Գրե Եղիշե» 4 տեսարաններե բաղկացած կենդանի պատ-

կեր մը կազմված ըն. Եդ. Գոլանճյանե, բեմավարությունը Արմանտ Կուրտիկյանի և մասնակցությամբ Հ. Ճ.-ի նորակազմ երգչախմբի՝ ղեկավարությամբ ընկ. Վարդգես Հայրիկյանի:

**1947 թվականից** Վազգեն վարդապետ Պալճյանը դարձավ «Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահ: Նա հետագայում կարևոր մասնակցություն ունեցավ տեղվույն Մատենադարանի ձեռագրերի, հնատիպ գրականության և այլ արժեքների ապահով տեղափոխմանը՝ Թեմական խորհրդի դիվանատունը: Վազգեն վարդապետ Պալճյանի նախագահության օրոք է, որ նույն Հայ Մշակույթի տնից ներգաղթի ռումինահայերի երկրորդ կարավանով իբրև նվեր Հայաստան բերվեցին 1948 թ. յոթ արկղ ռումինահայ հրատարակություններ և հազվագյուտ այլ գրքեր, որոնք անցան Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարանին, իսկ 1954 թ. դարձյալ «Հայ Մշակույթի Տան» սեփականությունը եղող 42 արժեքավոր ձեռագրեր նվիրվեցին Մաշտոցյան Մատենադարանին:

**Էջ 9.**—Բուխարեստի հայոց Սրբոց Հրեշտակապետաց հին եկեղեցին կառուցվել է ոչ թե 1743 թ. այլ՝ 1742 թ.՝ Տեսնել Վալաքիայի իշխան Միհայիլ Ռակովիցցի հրովարտակը՝ 1742 թ. փետրվարի 15-ի (Հ. Ճ. Սիրունի, Հայ եկեղեցին ռումեն հողին վրա, Նիկոլա Յորգա, Էջմիածին, 1966, էջ 52):

**Էջ 13.**—Գրված է, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան միասին կազմում էին «Անտանտա»-ն: Իրականում նրանք վերջինիս հակառակ «Եռյակ միության» անդամներ էին, իսկ Անտանտայի մեջ մտնում էին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և այլն:

**Էջ 17.**—Նշված է, որ 1401 թ. Մոլդովայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը վերջին առաջնորդն էր: Իրականում նա առաջին առաջնորդն էր, որ հատուկ իշխանական հրովարտակով վավերացվել էր իշխան Ալեքսանդրու Բարի կողմից 1401 թվականին:

**Էջ 17.**—Նշված է, որ 1812 թ. Քիշնևում ծնունդ առած հայոց հոգևոր առաջնորդական աթոռի առաջնորդները իբր «Չկարողացան քիչ թե շատ նշանակալից գործերով դրսևորել իրենց»: Այդ կարծիքը քննադատության չի կարող դիմանալ, քանի որ անգամ այդ թեմի հիմնադիր Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի մասին կարելի է ասել, որ նա թեմը օժտեց առաջնորդարանով և հարակից հայկական մեծ թվով կալվածներով: Զաքարյանը ղեկավարելով 150 կամավորների՝ մասնակցեց 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմին, բուլղարական քաղաքների ազատագրմանը, կոիվներում վիրավորվեց, իսկ Ռուսաստանի կայսրից արժանացավ շքանշանների: Այստեղ արդյունավից գործունեություն են ծավալել տարիներ շարունակ Ներսես Աշտարակեցին և Մակար եպիսկոպոսը, որոնք հետագայում դարձան Ամենայն Հայոց կաթողիկոսներ:

**Էջ 23.**—Ֆրանսիացի հայագետ Ֆր. Մակլերը Բուխարեստում իր կարդացած երեք զեկուցումներից և ոչ մեկը չի նվիրել Կիլիկյան Հայաստանին, այլ Հայաստանին և հայերին, հայ արվեստին և հայ թատրոնին:

„Ararat", București, 1927, № 37.

**Էջ 148-ին** հաջորդող ներդիր նկարի տակ.—Վազգեն վարդապետ և ներգաղթի լիազոր դոկտոր Բաբգեն Ատվածատրյան —1947 թ.: Դոկտ. Բաբգեն Ատվածատրյանը Բուխարեստում էր ոչ թե 1947 թ. այլ՝ 1945 թ.:

**Էջ 156.** Հանդիպած լուսանկարի մասին նշված է. «Ներգաղթողների մեկնումը Հայաստան, Կոնստանցա 1947 թ.»: 1947 թ. հայրենադարձություն չի կազմակերպվել Ռումինիայից, այլ 1946 թ., երբ մեկնեց առաջին կարավանը, նկարը այդ խմբին է վերաբերում:

Գրքում կան նաև տեղանունների, անձնանունների, ազգանունների, հաստատությունների անունների և թվականների մեջ վրիպումներ:

Հատորի տպագրությունը և թուղթը շատ ընտիր են, նույնպես և ներդիր նկարները:

Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեությանը նվիրված նաև կաթողիկոսական շրջանի տարեգրության հատորների կազմումը և հրատարակումը կարևորագույն ավանդ կլինի թե Վեհափառ Հայրապետի կենսագրության ամբողջացման և թե միաժամանակ համահայկական չափանիշով կունենա խոշոր այժմեական նշանակություն, քանի որ այն կոչված կլինի դառնալու կարևորագույն աղբյուր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ինչպես նաև Սփյուռք —Հայրենիք կապերի և մասնավորապես սփյուռքահայության, այնպես էլ հայ և այլ ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության համար:



ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

# ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

## ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

### 71. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆ (Մարկ. ԺԱ 27—33)

ԺԱ 27 **Դարձյալ Երուսաղեմ եկան: Եվ մինչ նա այնտեղ, տաճարում շրջում էր, նրա մոտ եկան քահանայապետները, դպիրներն ու ծերերը**
28 **և ասացին նրան. «Ի՞նչ իշխանությամբ ես դու այդ անում, և ո՞վ տվեց քեզ այդ իշխանությունը»:**
29 **Հիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «Ես էլ ձե՛զ մի բան հարցնեմ, պատասխանեցե՛ք ինձ, և ես ձեզ կասեմ, թե ինչ իշխանությամբ եմ այս անում.**
30 **Հովհաննեսի մկրտությունը երկնքի՞ց էր, թե՞ մարդկանցից. պատասխանեցե՛ք ինձ»:**
31 **Նրանք իրար մեջ խորհում էին ու ասում. «Եթե ասենք՝ երկնքից, մեզ կասի՝ իսկ ինչո՞ւ նրան չհավատացիք.**
32 **Իսկ եթե ասենք մարդկանցից, ժողովրդից ենք վախենում». որովհետև բոլորը գիտեին, թե Հովհաննեսը մարգարե էր:**
33 **Պատասխան տվեցին և ասացին Հիսուսին. «Չգիտենք»: Եվ Հիսուս պատասխանեց նրանց. ու ասաց. «Ես էլ ձե՛զ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ այս անում»:**

Տաճարում Հիսուս բազմիցս պատասխանատվության պիտի կանչվի Երուսաղեմի կրոնական իշխանությունների կողմից: Մարդկանց խմբեր իրար ետևից պիտի գան մեղադրելու կամ ծուղակը գցելու նրան: Այս ամբողջ հարձակումները հիշեցնում են այն հինգ հակաճառությունները, որ տեղի էին ունեցել Կապառնայումում Հիսուսի քարոզության սկզբին և հանգել էին փարիսեցիների և հերովդեսականների դավերին, որոնք պատրաստվում էին մեջտեղից վերացնել իրենց նեղություն պատճառողին:

Այժմ նույնպես, տաճարի շրջափակում, Հիսուս ենթարկվում է բազում հարցաքննությունների, որոնք արդեն նման են դատավարության, թեև պաշտոնապես այն դեռ չի սկսվել: Բայց խաղերն արդեն նախապատրաստվել են:

Առաջինը մեջ են մտնում քահանայապետներն ու նրանց մրցակիցները: Դա միանգամայն բնական է: Ամենից բացահայտ մեղադրանքը, որ կարելի էր անել Հիսուսին, նրա նախորդ օրվա քմահաճույքներն էին, երբ նա վեր ի վայր էր արել ամբողջ տաճարը: Քահանաները պաշտոնապես պատասխանատուներն են բոլոր շենքերի և այն ամենի, ինչ տեղի է ունենում այնտեղ: Նրանք իրավունք ունեն հաշիվ պահանջելու մի մարդուց, որը վարվել էր այնպես, ասես տերը լիներ այդ սուրբ վայրերի:

Այսուհանդերձ, նրանց հարցը ենթամտորեն քողարկված մի հարց է: Նրանք հարցնում են Հիսուսին, թե որևէ հանձնարարագիր ստացե՞լ է այդպես վարվելու հա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № Բ—ԺԲ-ից:

մար՝ շատ լավ իմանալով հանդերձ, որ իրե՛նք միայն կարող են տալ նման մի հանձնարարագիր: Հետևաբար նա չի կարող հավակնել, թե որևէ մարդկային իշխանությամբ է արել այդ: Ինչ վերաբերում է Աստծուց եկող իշխանությանը, նրանք մտածում են, թե հենց իրենք են դրա ավանդապահները. և եթե Հիսուս կասկածի տակ առներ դա, ապա հեշտությամբ ինքն իրեն մեղադրած կլիներ Աստծուն հայհոյելու մեջ:

Ուստի Հիսուս ուղղակիորեն չի պատասխանում, այլ իր կողմից նրանց ուղղում է մի ուրիշ հարց, որով նրանք իրենց հերթին պապանձվում են: Ներկա ամբոխը, որն ընդունում էր Հովհաննես Մկրտչի աստվածային առաքելությունը, այնտեղ պատրաստ է հսկայական մի ցույց սարքելու, եթե երբեք նրանք համարձակվեն թշնամական թեկուզ մի խոսք արտաբերել մարգարեի դեմ, որին արդեն իրենց վախկոտությամբ թույլ էին տվել, որ բանտարկեն և ապա սպանեն: Նրանք չեն համարձակվում ո՛չ իրենց կարծիքը փոխել և ո՛չ էլ դիմագրավել ամբոխի խիստ կշտամբանքին: Նրանց խարդախությունն ակնհայտ է: Նրանք նախընտրում են տգետ ձևանալ:

Հիսուսի կողմից դա դիպուկ մի հարված էր: Միևնույն ժամանակ, սակայն, ներդրված գրավն ավելի մեծ էր, քան բանակրովի գեղեցկությունը: Հովհաննես Մկրտչի մահով քահանայական շրջանակները դիտվում են որպես մարգարեների սպանությունը թույլատրող մարդիկ: Իսկ Հիսուսի պարագային շատ ավելի վատ պիտի լինի, քանի որ նրանք նախաձեռնողները պիտի լինեն նրա մահվան:

Իսկապես, տաճարը և նրա պատասխանատու մարմինները արժանի չեն գոյություն ունենալու:

## 72. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԱՅԳԵՊԱՆՆԵՐԻ ԱՌԱԿԸ (Մարկ. ԺԲ 1—12)

ԺԲ 1 **Եվ սկսեց նրանց հետ առակներով խոսել և ասել. «Մի մարդ այգի տնկեց և նրա շուրջը ցանկապատ քաշեց, փոսհնձան փորեց և աշտարակ շինեց. ու այն վարձու տվեց մշակներին և գնաց օտար աշխարհ:**

2 **Երբ ժամանակը հասավ, մշակների մոտ մի ծառա ուղարկեց, որ այդ մշակներից վերցնի այգու պտղից:**

3 **Եվ մշակները նրան բռնելով՝ ծեծեցին ու ձեռնունայն արձակեցին:**

4 **Դարձյալ նա մի ուրիշ ծառա ուղարկեց նրանց մոտ, և նրա էլ գլուխը ջարդեցին ու անարգելով արձակեցին:**

5 **Եվ վերստին մեկ ուրիշին ուղարկեց. սրան էլ՝ սպանեցին. և ուրիշ շատերին ուղարկեց. ոմանց ծեծում էին, ոմանց՝ սպանում:**

6 **Դեռևս նա մի սիրելի որդի ուներ. վերջում նրան ուղարկեց նրանց մոտ՝ ասելով. «Թերևս իմ այս որդուց ամաչեն»:**

7 **Իսկ մշակները երբ տեսան, որ նա գալիս է, իրար ասացին. «Ժառանգը սա է, եկեք սպանենք սրան, և ժառանգությունը մերը կլինի»:**

8 **Եվ բռնելով նրան՝ սպանեցին ու հանեցին-գցեցին այգուց դուրս:**

9 **Արդ, այգու տերը ի՞նչ կանի. կգա և կոչնչացնի մշակներին ու այգին ուրիշների ձեռքը կհանձնի:**

10 **Դուք չե՞ք կարդացել Գրքի այն խոսքը, թե՝ այն քարը, որ կառուցողները անարգեցին, նա՛ եղավ անկյունաքար:**

11 **Տիրոջ կողմից եղավ այս մեկը, և մեր աչքին սքանչելի է»:**

12 **Եվ նրանք հնար էին փնտրում՝ նրան բռնելու, բայց ժողովրդից վախեցան, որովհետև հասկացան, թե նա առակը իրենց վրա ասաց: Եվ թողեցին նրան ու գնացին:**

Քահանայապետների, դպիրների և ծերերի հետ ունեցած վեճից հետո Հիսուս նրանց պատմում է մի առակ, որ նրանք չէին կարող չհասկանալ: Այդ առակը համապատասխանն է թզենուն ուղղված անեծքի, որը մի նշան էր աշակերտների համար (Մարկ. ԺԱ 12—14 և 20—25):

Այգին ներկայացնում է հրեա ժողովրդին. դա գիտեն բոլորը՝ սկսած դեռևս Քրիստոսից առաջ ութերորդ դարում ապրած Եսայի մարգարեի ժամանակաշրջանից, երբ հրեա ազգը բաժանված էր երկու թագավորությունների. Իսրայելի թագավորությունը՝ հյուսիսում, Հուդայի թագավորությունը՝ հարավում: Եսայի մարգարեի գրքում կա այգուն նվիրված շատ ծանոթ և շատ գեղեցիկ մի երգ, որով մարգարեն ամբաստանում է անհավատարիմ ժողովրդին և գուշակում անխուսափելի մի պատիժ: Հիսուս հիշատակում է այդ երգը իր պատմած առակում.

**Պիտի երգեմ իմ սիրեցյալին**
**Իմ սիրելի երգը նրա այգու մասին:**
**Իմ սիրեցյալն ուներ մի այգի**
**Զքնաղ մի անկյունում,**
**Բերրի հողակտորի վրա:**
**Ցանկապատեցի այն,**
**Զարդարեցի ձողերով**
**Եվ տնկեցի ընտիր որթատունկ:**

**Նրա մեջ շինեցի աշտարակ,**
**Փոս փորեցի հնձանի,**
**Սպասեցի, որ կտար բերք խաղողի,**
**Բայց նա տվեց փուշ:**
**Եվ այժմ, բնակիչնե՛ր Հուդայի երկրի,**
**Բնակիչնե՛ր Երուսաղեմի,**
**Դա՛տ արեք իմ**
**Եվ իմ այգու միջև:**
**Էլ ի՞նչ պետք էր անել իմ այգուն,**
**Որ ես չարեցի.**
**Սպասեցի, որ կտար բերք խաղողի,**
**Բայց նա տվեց փուշ:**
**Եվ արդ՝ ինքս կպատմեմ,**
**Թե ինչ պիտի անեմ իմ այգուն.**
**Պիտի քանդեմ ցանկը նրա,**
**Որ նա դառնա արոտավայր.**
**Պիտ կործանեմ պարիսպները նրա,**
**Որ նա դառնա ոտքի կոխան:**
**Պիտի լքեմ ես իմ այգին,**
**Նա չպիտի էտվի, չպիտի փորվի,**
**Ու նրա մեջ, ինչպես խոպան,**
**Պիտի բուսնի փուշ ու տատասկ:**
**Եվ հրաման պիտի տամ ես իմ ամպերին,**
**Որ անձրև չթափեն իմ այգու վրա:**
**Քանզի զորությունների Տիրոջ այգին**
**Տունն է Իսրայելի,**
**Իսկ Հուդայի բնակիչը՝**
**Ախորժելի տունկը նրա:**
**Սպասեցի, որ նա արդար դատաստան անի,**
**Բայց նա արեց անիրավություն,**
**Ո՛չ արդարություն, այլ՝ աղմուկ-աղաղակ:**
(Եսայի Ե 1—7)

Իր տիրոջ անսահման սիրո նկատմամբ անհավատարմություն ցուցաբերած այգու այս թեման Հիսուս վերամշակել է՝ թեթևակի փոփոխության ենթարկելով այն: Մարկոսի ավետարանում անհավատարիմ գլուխը ընողը այնքան այգին չէ, որքան այն մշակելու կոչված այգեպանները, այսինքն՝ ժողովրդի ղեկավարները: Քահանայապետները լավ չեն գիտակցում այդ: Գրվածքն էլ արդեն պարզ ասում է. «Նրանք հասկացան, թե նա առակը իրենց վրա ասաց» (համար 12):

Մեկը մյուսի ետևից ուղարկված ծառաները մարգարեներն են, որոնց հետ միշտ վատ են վերաբերվել հրեական իշխանությունները: Ինչ վերաբերում է «սիրելի որդուն», ապա նա, անտարակույս, Հիսուսն է, որը Մարկոսի ավետարանում արդեն երկու անգամ մատնանշվել է այդ նույն արտահայտությամբ, մկրտության և այլակերպության ժամանակ (Մարկ. Ա 11 և Թ 7): Առակում որդու սպանությունը Իսրայելի ժողովրդի կրոնական պետերի կողմից Հիսուսի դեմ նախապատրաստվող ոճրի մասին արված հայտնության վերհիշեցումն է:

Անհավատարմությունը ոչ թե այգու, այլ այգեպանների կողմից լինելով՝ այգին, ի տարբերություն Եսայու գրվածքի, չի ավերվում: Այգեպաններն իրե՛նք պիտի ոչնչացվեն, իսկ այգին պարզապես պիտի վերտահվի «ուրիշներին» (համար 9), այսինքն՝ ոչ-հրեաներին, հեթանոսներին, որոնց վրա Աստված այսուհետև դնում է իր հույսը, որպեսզի իր սերը հայտնի դառնա մարդկանց:

Առակում Հիսուս մեջ է բերում 118-րդ սաղմոսից մի հատված, որ Մարկոսն իր ավետարանում արդեն դրել էր նրանց բերանը, ովքեր ուղեկցում էին Մեսիային Երուսաղեմ նրա առաջին գալստյան ժամանակ (Մարկ. ԺԱ 1—11).

**Այն քարը, որ շինարարներն անարգեցին,**
**Նա՛ եղավ անկյունագլուխ.**
**Տիրոջից եղավ այդ,**
**Եվ սքանչելի է մեր աչքերին:**
(Սաղմոս ՃԺԸ 22—23)

«Անկյունագլուխը» կամ «անկյունաքարը» մի գեղեցիկ խոշոր քարի կտոր է, որ որմնադիրներն ընտրում-առանձնացնում են՝ այն տեղադրելու համար երկու պատերի խաչաձևող մասում, այնտեղ, որտեղ շենքի ամրությունն առավել խոցելի է, և որտեղ կարիք կա ավելի դիմացկուն շինանյութերի: Սաղմոսն արդեն ասում է, որ Աստված ընդհանրապես իր հույսը չի դնում այն բանի վրա, որ լավագույնն է երևում մարդկանց աչքին: Այսպես, Աստված ընտրել էր Իսրայելի՛ ժողովրդին, թեև նա անզոր և անփառունակ մի ժողովուրդ էր: Հիսուս անդրադառնում է սաղմոսի այս տողերին, բայց նա այլ կերպ է կարդում դրանք: Նրա խոսքերից կարելի է անել երկու մեկնություն: Շինարարներից անարգված և անկյունաքար դարձած քարը կարող է լինել՝

— կա՛մ ինքը Հիսուս, որ իրավազրկված ու մեկուսացված էր հրեա ղեկավարների կողմից և իր հարությամբ դառնալու էր հավատի հիմք.

— կա՛մ հեթանոս ազգերը, որոնք, իսրայելական նեղմիտ մի օրենսդրությամբ, մերժված էին հրեա հասարակությունից, բայց որոնք կոչված էին վճռական մի դեր կատարելու Աստուծո նոր ժողովրդի ծոցում:

Այս վերջին մեկնաբանությունը, թեև մի քիչ անսովոր է ավետարանի ընթերցողնե-

րի համար, սակայն ավելի ներդաշնակ է թվում անհավատարիմ այգեպանների առակի հետ այնպես, ինչպես այն վերարտադրված է Մարկոսի կողմից: Այս մեկնաբանությամբ հայտնություն է արվում բոլո՛ր մարդկանց համար հաստատվելիք մի Եկեղեցու, որտեղ հրեա լինելու հանգամանքը ոչ մի մասնավոր իրավունք կամ առանձնաշնորհում չի տալու բնավ:

Քահանայապետների համար սա անհանդուրժելի մի հայտնություն էր:

## 73. ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ ԵՎ ՓՈՂԸ (Մարկ. ԺԲ 13—17)

ԺԲ 13 **Եվ նրա մոտ ուղարկեցին փարիսեցիներից և հերովդեսականներից ոմանց, որպեսզի նրան իր խոսքով որսան:**

14 **Եվ նրանք եկան ու նենգությամբ հարց էին տալիս և ասում. «Վարդապե՛տ, գիտենք, որ դու ճշմարտասեր ես և չես քաշվում ոչ ոքից, որովհետև մարդկանց արտաքինին չես նայում, այլ ճշմարտությամբ Աստուծո ճանապարհն ես ուսուցանում. արդ. ասա՛ մեզ, օրինավո՞ր է հարկ տալ կայսրին, թե՞ ոչ. տա՞նք, թե՞ չտանք»:**

15 **Հիսուս իմացավ նրանց կեղծավորությունը և ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորնե՛ր. ինձ մի դահեկան բերեք, որ տեսնեմ»:**

16 **Եվ նրանք բերեցին: Եվ նրանց ասաց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը»: Եվ նրանք ասացին նրան՝ կայսրինը:**

17 **Հիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը կայսեր և Աստծունը՝ Աստծուն»: Եվ զարմացան նրա վրա:**

Հիսուս քահանայապետներին ու նրանց շրջապատին մի լավ դաս էր տվել (Մարկ. ԺԱ 27—33), իսկ այնուհետև առակի ձևով նրանց հայտնել էր իրենց իշխանության վախճանը (Մարկ. ԺԲ 1—12): Այժմ նրանք ուղարկում են հաջորդ պատվիրակությունը՝ միշտ Հիսուսին ծուղակը գցելու հանձնարարությամբ: Փարիսեցիները և հերովդեսականները այն երկու խմբակցություններն են, որոնք, դեռևս Կափառնայումում, միասին խորհուրդ էին արել, թե ինչպես կկարողանան լավագույն ձևով դավադրություն կազմակերպել նրա դեմ (Մարկ. Գ 1—6): Նրանց գաղտնի համաձայնությունը նոր բան չէ:

Յուրաքանչյուրը Հիսուսին ուղղում է մի հարց, որ ամենից ավելի է հետաքրքրում իրեն: Քահանայապետները մտահոգված էին, որ տաճարը տակնուվրա էր արված: Փարիսեցիներին ու հերովդեսականներին հետաքրքրում էր ավելի շուտ վճարվելիք հարկը: Նոր Կտակարանը փարիսեցիներին հաճախ ներկայացնում է որպես բարեկեցիկ մարդկանց, որոնք բավականաչափ կապված են փողին:

Հռոմայեցի իշխողներին հարկ վճարելու կամ չվճարելու հարցը վեճի առարկա էր հրեա մտավորականության գլխավոր հոսանքների միջև: Որոշ ընդդիմադիր խմբեր այդ հարցում բացահայտորեն թշնամական դիրք էին բռնել: Փարիսեցիների մեծամասնությունը ավելի շուտ վերապահ էր, բայց չէր համարձակվում անհնազանդությամբ վտանգի ենթարկել այն խախուտ հավասարակշռությունը, որ գոյություն ուներ կայսերական իշխանության և հարաբերական ինքնավարություն վայելող հրեական նահանգների միջև: Ուստի նրանք մեծ մասամբ վճարում էին:

Հիսուսին տրված հարցը, որն ի դեպ ուղեկցվում էր ճարտասանական մեծ զգուշություններով, շփոթեցուցիչ էր: Ըստ նրա պատասխանի, կարող էին նրան մեղադրել հռոմեական իշխանությանը գործակից լինելու կամ ժողովրդի ըմբոստացմանը նպաստելու մեջ, ինչ որ, երկու դեպքում էլ, նրան կդներ փափուկ կացության առջև:

Իր սովորության համաձայն, Հիսուս մարդկանց ցույց է տալիս իրենց պատասխանատվությունները և նրանց մղում մինչև վերջ կատարելու իրենց գործերը: Այն փողը, որ նրանք սովորաբար գործածում են առևտրական գործառույթների համար, որից օգտվում են և որով, հավանական է, նաև հարստանում, հռոմեական փող է: «Դե՛, պարոնա՛յք, իմացեք, որ այդ փողը Հռոմից է գալիս և ըստ այնմ վերաբերվեցեք»: Սա հայտնապես նշանակում է՝ «այո» պատասխանել հարկ վճարելու մասին տրված հարցին: Բայց այդ պատասխանը Հիսուսից չի գալիս: Տրամաբանորեն այդ պատասխանը առկա է այն բանի մեջ, ինչ արդեն անում են փարիսեցիներն ու հերովդեսականները իրենց գործածած փողով. հենց իրե՛նք են տալիս այդ պատասխանը:

Օգտվելով իրեն ներկայացած առիթից՝ Հիսուս իր խոսակիցներին դնում է մեկ այլ պատասխանատվության առաջ, որ հայտնապես քիչ է մտահոգում նրանց. ի՞նչ են անում նրանք որպես կրոնական և հոգևոր մի կարևոր հոսանքի անդամներ: Այս դեպքում նույնպես իրե՛նց է մնում պատասխան տալ...

Այսպիսին է Կեսարին տրվելիք հարկի դրվագը, որը լայնորեն մեկնաբանվել է քրիստոնյաների կողմից, որոնք ամենատարբեր մեկնություններ են արել, ինչպես, օրինակ, այն, որ Հիսուս իբր մտադրություն է ունեցել արդարացնելու նյութականի և հոգևորի բաժանումը... Նման մեկնություն իրոք հեռու է թվում գրվածքից...

Առճակատման հետևանքով նոր թափ է ստանում այն պայքարը, որը Հիսուսին հակադրում է իր ժամանակաշրջանի կրոնական իշխանություններին: Նա ի դերև է հանում իր հակառակորդների բոլոր դավերը՝ նրանց դնելով իրենց իրական պատասխանատվությունների առաջ, և ցույց է տալիս, թե ո՛ր աստիճանի նրանք սովոր են խուսափելու այդ պատասխանատվություններից: Արդ, ի՞նչ արժե կրոնական մի իշխանություն, որ Աստծուն չի տալիս այն, ինչ նրան է պատկանում:

## 74. ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐԸ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. ԺԲ 18—27)

ԺԲ 18 **Նրա մոտ եկան սադուկեցիները, որոնք ասում են, թե հարություն չկա. հարց էին տալիս և ասում.**

19 **«Վարդապե՛տ, Մովսեսը մեզ համար գրել է. «Եթե մեկի եղբայրը մեռնի և կին թողնի ու որդի չթողնի, թող նրա եղբայրը առնի նրա կնոջը և իր եղբոր համար զավակ հասցնի»:**

20 **Արդ, մեզ մոտ յոթ եղբայրներ կային. առաջինը կին առավ և մեռավ ու զավակ չթողեց.**

21 **և երկրորդը նույն կնոջն առավ ու մեռավ. և նա էլ զավակ չթողեց: Նույն ձևով նաև երրորդը առավ նույն կնոջը:**

22 **Եվ բոլոր յոթն էլ զավակ չթողեցին. ամենից հետո մեռավ նաև կինը:**

23 **Արդ, հարության ժամանակ երբ հառնեն, նրանցից ո՞ւմ կինը կլինի. քանի որ բոլոր յոթն էլ նրան կին առան»:**

24 **Հիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «Հենց դրա համար չէ՞, որ մոլորված եք, քանի որ չգիտեք Գրքերը և ոչ էլ՝ Աստուծո զորությունը.**

25 **որովհետև երբ մեռելներից հարություն առնեն, ո՛չ տղամարդիկ կին կառնեն և ո՛չ էլ կանայք մարդու կգնան, այլ կլինեն հրեշտակների նման, որ երկնքում են:**

26 **Իսկ գալով մեռելներին, թե հառնում են, դուք չե՞ք կարդացել Մովսեսի գրքում, մորենու հատվածում, թե ինչպես Աստված ասաց նրան. «Ե՛ս եմ,—ասում է,—Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»:**

27 **Իսկ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի. ուստի դուք խիստ մոլորված եք»:**

Գաղափարական որևէ դիրք ծիծաղելի դարձնելու համար չկա ավելի հեշտ միջոց, քան այն հասցնել անհեթեթության: Երրորդ խումբը, որը գալիս է Հիսուսի մոտ վեճի բռնվելու համար նրա հետ, բաղկացած է սադուկեցիներից: Դա մի շարժում էր, որի անդամները հավաքագրված էին քահանայական ամենաերևելի ընտանիքներից և որի աստվածաբանական դիրքերը խիստ պահպանողական էին: Մեռելների հարությունը հաստատված չի Աստվածաշնչի առաջին հինգ գրքերում, որոնք կազմում են մովսիսական Օրենքը կամ Թորան (Հընգամատյան): Արդ, դա միակ գրվածքն է, որը բացարձակ հեղինակություն էր վայելում սադուկեցիների շրջանակում: Ահա թե ինչու նրանք այդ հարցի շուրջ բանավիճելու էին եկել Հիսուսի մոտ, որը ծանոթ էր որպես մի անձնավորություն, որի համոզմունքները մոտիկ էին փարիսեցիների համոզմունքներին, համոզմունքներ, որոնց մաս էր կազմում հավատը մեռելների հարության նկատմամբ: Հրեական հավատը, մեր թվագրության առաջին դարում, հեռու էր միատեսակ լինելուց:

Աստվածաշնչական այն գրվածքը, որ օգտագործում էին սադուկեցիները հակաճառելու համար Հիսուսին, գալիս է Երկրորդումն Օրինաց գրքից: Դա մեկն է հրեական Օրենքի այն տրամադրություններից, որը ծանոթ է «տագրոջ օրենք» անվամբ, որի համաձայն, երբ մեկը մեռնում էր առանց արու ժառանգ թողնելու, նրա եղբայրներից ամենամեծը պարտավոր էր ամուսնանալ այրիացած կնոջ հետ (բազմակնությունը այդ շրջանում սովորական էր) և զավակներ տալ նրան, որպեսզի ապահովվեր հանգուցյալի սերունդը (տես Երկրորդումն Օրինաց ԻԵ 5—6): Այսպիսով ապահովված էր լինում անվան և ժառանգության տևականությունը:

Այս օրենքը, որ գոյություն ուներ նաև հին քաղաքակրթություն ունեցող Իսրայելի հարևան ժողովուրդների մոտ, դարերի ընթացքում փոփոխությունների էր ենթարկվել իր գործադրության ձևերի մեջ, սակայն ընդհանուր առմամբ դեռ ի զորու էր Հիսուսի ժամանակաշրջանում: Սադուկեցիների համար դա առիթ է ծառայում սարքելու իսկ և իսկ ռոկամբոլյան* բնույթի մի

* Ռոկամբոլ—Ֆրանսիացի գրող Պոնսոն դյու Տե-

ենթադրություն, որ թվում է, թե դժվարին դրության մեջ է դնում Աստծուն՝ անդենականում կողմնորոշվելու համար:

Սակայն Հիսուս լուրջ է ընդունում իր խոսակիցների փաստարկումը: Նրա պատասխանի առաջին մասը՝ «...կլինեն հրեշտակների նման, որ երկնքում են» (հմմտ. 25), բոլորովին չի համոզում նրանց, որովհետև նրանք չէին հավատում նույնքան հրեշտակներին, որքան և հարությանը: «Գործք Առաքելոց»-ում հստակ կերպով ասված է այդ մասին.

**Սադուկեցիներն ասում էին՝ հարություն չկա.**
**Ո՛չ էլ հրեշտակ և ո՛չ Հոգի.**
**Իսկ փարիսեցիները խոստովանում էին երկուսն էլ:**
(Գործք ԻԳ 8)

Այդպես փաստարկելով՝ Հիսուս հարցականի տակ է դնում սադուկեցիների համոզմունքների ամբողջությունը: Իր փաստարկման երկրորդ մասում նա շատ ավելի առաջ է գնում՝ շեշտելով էականը. եթե մարդկանց հետ Աստուծո կնքած դաշինքը այս կյանքի համար է, ապա դա շատ անցողիկ է: Աստված ինքը այլ կերպ է արտահայտվում, այդ թվում նաև Աստվածաշնչի առաջին հինգ գրքերում: Եվ Հիսուս դիտավորյալ կերպով մեջ է բերում Ելից գրքից մի հատված՝ քաղված անկեզ մորենու դրվագից.

**Ես եմ քո հոր Աստվածը, Աբրահամի Աստվածը,**
**Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը:**
(Ելից Գ 6)

Մովսեսի ժամանակաշրջանում այս երեք անձինք արդեն վաղուց մեռած էին: Ինչպե՞ս կարող էր ողջերի Աստվածը այդպես արտահայտվել, եթե ընդմիշտ ոչնչացած լինեին նրանք: Աստվածաշնչական տեքստերի ձևակերպումներն իսկ ենթադրել են տալիս, որ Աբրահամը, Իսահակը և Հակոբը, այս երկրից բաժանվելուց հետո, մտել են ոչ թե մահվան, այլ մի նոր կյանքի մեջ:

Սադուկեցիները, ուրեմն, մեղադրվում են, որ ամբողջապես մոլորված են: Եվ այն մեղադրանքները, որ Հիսուս ուղղում է նրանց, ի զորու են բոլորի՛ համար. երբ մարդ քարոզում է մեռելների մասին մի կրոն, նա փաստորեն պաշտպանում է մեռյալ մի կրոն:

---

բայի արկածային վեպերի գլխավոր հերոսը: **Ռոկամբոլյան ենթադրություն՝** տարօրինակ, անհեթեթ ենթադրություն (Ծ. Թ.):

## 75. ԴՊԻՐԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ
(Մարկ. ԺԲ 28—34)

ԺԲ 28 **Դպիրներից մեկը, մոտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին. երբ նա տեսավ, թե Հիսուս նրանց պատասխանը լավ տվեց, հարցրեց նրան և ասաց. «Ո՞ր պատվիրանն է առաջինը»:**

29 **Եվ Հիսուս ասաց նրան. «Ամենից առաջինն է՝ լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը միակ Տերն է.**

30 **և դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ. սա է առաջին պատվիրանը:**

31 **Եվ երկրորդը նման է սրան. դու պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ. չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք»:**

32 **Եվ դպիրը նրան ասաց. «Լավ է, Վարդապե՛տ, ճշմարտությամբ ասացիր, թե Աստված մեկ է, և բացի նրանից ուրիշ Աստված չկա.**

33 **և նրան ամբողջ սրտով, ամբողջ զորությամբ, ամբողջ մտքով սիրելը, ինչպես և ընկերոջն իր անձի պես սիրելը ավելի է, քան ողջակեզները և զոհերը»:**

34 **Եվ Հիսուս տեսնելով, թե նա իմաստությամբ պատասխան տվեց, նրան ասաց. «Հեռու չես Աստուծո արքայությունից»: Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում նրան բան հարցնել:**

Նախորդ երեք խմբերին հակառակ, այս չորրորդը, միջամտելով, հարց է տալիս Հիսուսին առանց հետին մտածումի: Նա նույնիսկ մոտենում է նրան, որովհետև շատ լավ է տպավորվել նրա պատասխաններից: Սրա միջամտությամբ էլ ավարտվում է տաճարում տեղի ունեցած վիճաբանությունների շարքը Հիսուսի և հրեա հասարակության կրոնական գլխավոր խմբերի միջև: Մարկոսը եզրակացնում է. «Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում նրան բան հարցնել»:

Դպրի տված հարցը արդարացի էր. ի պաշտոնե լինելով Օրենքի մասնագետ՝ նա պետք է այդ մասին հստակ գաղափար ունենար: Արդարև, ռաբբիները Հին Կտակարանից քաղել էին վեց հարյուր տասներեք պատվիրաններ, որոնք հարկավոր էր կատարել՝ սխալի մեջ չընկնելու համար: Մարդ կարող էր պարզապես գլուխը կորցնել: Արդար և բարեպաշտ մեկը կարող էր մտածել, թե Հին Կտակարանի Աստծու

ինչի՞ն էր պետք այդքան մանրախնդիր մի բարոյականություն: Այստեղից էլ հիմնական պատվիրանը որոշելու կարևորությունը:

Սպասվածին հակառակ, Հիսուս չի պատասխանում տասնաբանյա պատվիրանով: Նախապես նա մեջ է բերում «Լսի՛ր, Իսրայե՛լ»-ի սկզբի մասը՝ հրեական ավանդությամբ նախապատվություն ստացած աստվածաշնչական հատվածներից մեկը. ժողովարաններում դրանով են սկսվում ժամասացությունները: Եվ բարեպաշտ ամեն իսրայելացի պարտավոր է այն արտասանել օրական երեք անգամ՝ դեմքը դեպի Երուսաղեմ դարձրած: Հրեա մարդու համար այդ հատվածն ունի այն կարևորությունը, ինչ որ «Հայր մեր»-ը՝ քրիստոնյայի համար.

**Լսի՛ր, Իսրայե՛լ,**
**Մեր Տեր Աստվածը միակ Տերն է:**
**Դու պիտի սիրես քո Տեր Աստծուն**
**Քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով,**
**Քո ամբողջ զորությամբ:**
(Երկրորդումն Զ 4—5)

Այս բանաձևն այսպես շարունակվում է, բայց Հիսուս մեջբերում է միայն դրա առաջին բառերը, որոնցով տրվում է Աստծու սիրո պատվիրանը: Նա դրան միացնում է մի երկրորդ պատվիրան՝ քաղված Ղևտացվոց գրքից և կենտրոնացված եղբայրական սիրո վրա, որը առաջինի անհրաժեշտ լրացումն է: Ահա այն հատվածը, որից քաղված է այդ պատվիրանը.

**Վրեժխնդիր մի՛ լինիր և ոխ մի՛ պահիր**
**Որդիների դեմ քո ժողովրդի,**
**Այլ սիրի՛ր քո ընկերոջն, ինչպես ինքդ՝ քեզ,**
**Քանզի ես եմ Տերը:**
(Ղևտացվոց ԺԹ 18)

Դպիրը, հայտնապես բավարարված, իր խոր համաձայնությունն է հայտնում Հիսուսին: Նա «Լսի՛ր, Իսրայել»-ից վերցնում է Հիսուսի կատարած մեջբերումը՝ զուգադրելով դրան նույնիմաստ մի այլ հատված Երկրորդումն Օրինաց գրքից.

**Քե՛զ է, որ ցույց տվեց սա,**
**Որպեսզի դու գիտենաս,**
**Թե ինքը՝ Տե՛րն է Աստված,**
**Եվ չկա մեկ ուրիշը, բացի նրանից:**
(Երկրորդումն Դ 35)

Բացի այդ, նա նաև մի դիտողություն ունի ողջակեզներից գերիվեր սիրո մասին, որը արձագանքն է բոլոր մարգարեների քարոզության: Ահա մի մարդ, որի աստվածաշնչական հմտությունը բացահայտ է և միաժամանակ պարտավորեցնող: Հանձին նրա Հիսուս ճանաչում է մի եղբոր (հմար 34):

Ակնհայտորեն այս դպիրն առանձնանում է իր խմբի մյուս մարդկանցից, որոնք քահանայապետների հետ միասին եկել էին գտնելու Հիսուսին՝ մեղադրանքներ ուղղելու համար նրան (Մարկ. ԺԱ 27—33): Ավետարանիչը, մեջբերելով այստեղ դպրի միջամտության այս դրվագը, ուզում է ցույց տալ, որ եթե հրեական իշխանությունները, ամբողջությամբ վերցրած, կազմակերպեցին Հիսուսի սպանությունը, հրեաներից յուրաքանչյուրը անհրաժեշտաբար մեղավոր չէ դրանում: Ընդհանուր առմամբ թշնամաբար տրամադրված դպիրների խմբի մեջ իսկ գտնվում են մարդիկ, որոնք հաստատապես գնում են դեպի Աստուծո Թագավորություն:

## 76. ԴՊԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵՍԻԱՆ
(Մարկ. ԺԲ 35—37)

ԺԲ 35 **Մինչ Հիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տվեց ու ասաց. «Ինչպե՞ս են ասում դպիրները, թե Քրիստոս Դավթի որդի է,**
36 **մինչ Դավիթն ինքը Սուրբ Հոգով ասում է՝ Տերն իմ Տիրոջն ասաց. Նըստի՛ր իմ աջում, մինչև որ քո թշնամիներին քո ոտքերի համար պատվանդան դնեմ:**
37 **Արդ, եթե Դավիթն ինքն իսկ նրան Տեր է կոչում, ինչպե՞ս նրա որդին կլինի»:**
**Եվ շատ ժողովուրդ նրան լսում էր սիրով:**

Այն դպիրը, որի հետ Հիսուս մտերմաբար մտքերի փոխանակություն ունեցավ առաջին պատվիրանի մասին, իսկապես որ բացառություն է կազմում իր խմբում (Մարկ. ԺԲ 28—34). որովհետև Երուսաղեմի կրոնական իշխանությունների հարցապնդումները հազիվ վերջացած՝ Հիսուս սկսում է արտահայտվել դպիրների դեմ: Նախ նա մերժում է այն ձևը, որով նրանք դատում ու գնահատում էին Մեսիային. այնուհետև դատապարտում է մեծարանքի ու պատիվների արժանանալու նրանց տենչը (Մարկ. ԺԲ 38—40):

Մեսիայի «Դավթի որդի» լինելը միայն դպիրները չէ, որ հաստատում էին: Հրեաստանում դա նրա ավանդական տիտղոսներից մեկն էր, ինչպես այդ ապացուցում են

Բարտիմեոսի աղաղակները, այն կույր մարդու, որն ուզում էր լսելի դառնալ Հիսուսից, երբ նա դուրս էր գալիս Երիքոնից.

**Դավթի՛ որդի, ողորմի՛ր ինձ:**

Հետագայում քրիստոնյաները սիրով ընդունեցին այս հորջորջումը: Մատթեոսը, օրինակ, իր ավետարանն սկսում է հետևյալ ձևով.

**Գիրք Ծննդյան Հիսուս Քրիստոսի՝**
**Դավթի որդու,**
**Աբրահամի որդու:**

Սակայն Հիսուս, նրանից հետո նաև ավետարանիչները, երևի մտածել են, որ «Դավթի որդի» արտահայտությունը շատ սահմանափակ մի ձև է՝ բացահայտելու համար Մեսիայի ինքնությունը: Մատնանշել նրան սոսկ այն իրողությամբ, որ նա հին ժամանակների մեծ թագավորի սերընդից է, կարող էր սահմանափակել նրան լոկ քաղաքական դերի մեջ և փոքրացնել նրա համայնապարփակ հեղինակությունը: Եթե նա միա՛յն Դավթի որդի է, ապա ուրեմն, երբ որ գա, թող զբաղվի հռոմայեցիներին դուրս վտարելով երկրից և թույլ տա, որ դպիրները հեղինակավոր կերպով մեկնաբանեն օրենքը՝ հանգիստ նստած պատվո տեղերում: Այն շրջանում, երբ գոյություն ուներ այդ բանը, հրեա որևէ թագավոր, թեկուզ և Դավիթը, պետք է հաշվի նստեր կրոնական իշխանության հետ:

Իրենց բնագավառում դպիրները ոչ մի տիրոջ չեն ճանաչում: Նրանք իրենք իրենց վերագրում են մի այնպիսի իշխանություն, որ ոչ ոք իրավունք չունի վերահսկելու, ոչ իսկ Մեսիան, որի դերը նրանք փորձում են նվազեցնել: Ահա դրա դեմ է, որ դուրս է գալիս Հիսուս:

Ուժեղացնելու համար իր դիրքը՝ նա մի փաստարկում է օգտագործում, որ մոտ է իր ժամանակի ռաբբիների փաստարկմանը: Սաղմոսից նա մեջ է բերում մի հատված, որը, ըստ ավանդության, վերագրվում է Դավթին, և որտեղ «Տեր» բառը վերաբերում է երկու տարբեր անձերի.

**Տերն ասաց իմ Տիրոջը.**
**«Նստի՛ր իմ աջ կողմը...»:**
(Սաղմոս ՃԺ 1)

Այս դժվար և անկասկած շատ հին սաղմոսը լայնորեն մեկնաբանվել է պատմության ընթացքում: Գրվածքում առաջին «Տերը» մատնանշում է Աստծուն: Երկրորդը, ում Աստված ուղղում է իր խոսքը, Հիսուսի ժամանակաշրջանում այնպես էր մեկնաբանվում, թե Մեսիան է: Աստված նրան է ասում՝ «Նստի՛ր իմ աջ կողմը...»:

Դուրս է գալիս, որ Դավիթը «Տեր» բառն օգտագործում է՝ խոսելու համար Մեսիայի մասին, ինչ որ շատ անսովոր մի ձև է՝ անվանելու համար իր սեփական որդուն: Հիսուսի դատողությունը, հետևաբար, հանգում է հետևյալին. Մեսիան շատ ավելին է, քան «Դավթի որդի» հասկացողությունը: Թագավորը ինքն է ընդունում այդ: Եվ Սուրբ Հոգին արտահայտվում է նրա բերանով:

Այս փաստարկումը կարող է թվալ շատ բարդ, և Մարկոսը կարծես թե մի առանձին կարևորությամբ չի հիշատակում այն: Սակայն դա իր առանձին տեղն է գրավում այն ընդհարումների ֆոնի վրա, որոնք տեղի ունեցան Հիսուսի և իր ժամանակի կրոնական իշխանությունների միջև: Դա նաև Հռոմի և այլ վայրերի քրիստոնյաներին հիշեցնում է, որ Քրիստոս վեր է մնում իր ինքնությունը նվազեցնող ամեն կարգի սահմանումից, և որ նա Տերն է բոլորի:

## 77. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԴՊԻՐՆԵՐԻՑ
(Մարկ. ԺԲ 38—40)

ԺԲ 38 **Եվ սովորեցնելով՝ նա իր ուսուցման ընթացքում ասում էր. «Զգո՛ւշ եղեք այդ դպիրներից, որոնք ուզում են աչքի զարնող զգեստներով ման գալ, հրապարակներում հարգանքի ողջույններ որոնել,**
39 **ժողովարաններում՝ առաջին աթոռները և ընթրիքների ժամանակ՝ առաջին տեղերը:**
40 **Նրանք ուտում են այրիների տները, ցուցադրաբար երկարացնում են աղոթքները, որպեսզի ավելի խիստ դատապարտան ընդունեն»:**

Մեծ թվով ժողովուրդ լսում է Հիսուսին (Մարկ. ԺԲ 37): Նա շարունակում է մնալ տաճարի շրջափակում՝ գուցե նստած մի ցածր պատի եզրին, ստվերոտ մի տեղ: Մի քանի տասնյակ մարդիկ կախված են նրա շրթներից: Ուրիշներ վստահաբար անցնում են նրա մոտով, մի պահ լսում նրան, ապա հեռանում: Այդպես է լինում միշտ, երբ մարդ խոսում է հասարակական մի վայրում:

Մի քիչ ավելի հեռու, տաճարի առաջամասի հարթ տարածությունը զարդարող այուևաշարերի տակ, ստվերի և արևալույսի

մանր շերտերի միջից ուրվագծվում են տաճարի տերերի՝ քահանայապետների, ծերերի և դպիրների հանդիսավոր դիմագծերը՝ իրենց կարևորության և արժանավորության գիտակցությամբ աղեցուն: Նրանց գոռոզ կեցվածքը զզվածք է պատճառում առանձնապես ա՛յս վայրում, որտեղ մարդ փոքրացնում է իրեն՝ պաշտելու համար մեծությունը Աստուծո: Հիսուս մատնացույց է անում նրանց և զգուշացնում: Այդպիսի տերեր չեն կարող օգնել մարդկանց՝ ոգեշընչվելու ճշմարտապես կրոնական ապրումներով: Կեղծավորությունը նրանց օրենքն է: Հարկավոր է զգուշանալ նրանցից, ինչպես ապականությունից:

Այն լեզուն, որ Հիսուս գործածում է դպիրների դեմ, հաստատապես շատ խիստ է: Բայց երբեք անհրաժեշտ չափով կանգ չի առնվել դրա վրա: Եվ Մարկոսը, հոգուտ Հռոմի քրիստոնյաների, հետևյալն է հիշեցնում. հավատացյալ ամեն համայնք կարող է իր միջից ծնունդ տալ երևելի մարդկանց դասակարգերի, որոնք իրենց են ծառայեցնում Աստծուն, փոխանակ ծառայելու նրան: Պետք է անընդհատ պաշտպանվել նրանցից՝ չենթարկվելու համար ծաղրանկարային մի կրոնի հանգելու վտանգին:

## 78. ԱՅՐԻ ԿՆՈՋ ՕՐԻՆԱԿԸ (Մարկ. ԺԲ 41—44)

ԺԲ 41 **Հիսուս կանգնած էր գանձանակի դիմաց. դիտում էր, թե ինչպես ժողովուրդը պղինձ դրամ էր գցում գանձանակի մեջ: Եվ շատ մեծահարուստներ շատ բան գցեցին:**

42 **Մի այրի կին եկավ և երկու լումա գըցեց, որ մի գրոշ էր:**

43 **Եվ Հիսուս իր մոտ կանչելով իր աշակերտներին՝ ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները.**

44 **քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա՝ իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ, իր ապրուստը՝ եղած չափով»:**

Աղքատ մի կնոջ արարքը, ինչպես նաև այն ուսուցումը, որին առիթ է հանդիսանում այդ արարքը, կազմում են Հիսուսի կյանքի վերջին դրվագը, որ Մարկոսը զետեղում է Երուսաղեմի տաճարում տեղի ունեցած իրադարձությունների շրջանակում: Այդ համեստ ընծան գերազանց պաշտամունքի արարք է: Այս դրվագից անմիջապես հետո հանդիսավոր կերպով պիտի հայտարարվի տաճարի և նրա հարակից մասերի կործանումը:

Նախորդ գլխում Հիսուս խոսում էր այն դպիրների մասին, որոնք «ուտում են այրիների տները» (Մարկ. ԺԲ 40): Այժմ ավետարանիչը հիշատակում է ծածուկ մեկ արարքը այրի մի կնոջ, որ մանր դրամի երկու կտոր է գցում տաճարի գանձանակի մեջ: Այս երկու դրվագները կապված են մեկը մյուսի հետ «այրի» բառի միջոցով, որը «ճարմանդ-բառի» դեր է կատարում: Շահագործված կինը ավելի առատաձեռն է դուրս գալիս, քան իր ժամանակակիցներից շատերը:

Այսպիսի կանանց դրությունը շատ ծանր էր այնպիսի մի հասարակության մեջ, որտեղ իրավունքը գերազանցապես վերապահված էր տղամարդկանց: Զրկված լինելով ամուսիններից՝ այդ կանայք բոլորովին անպաշտպան էին: Նրանցից շատերը ապրուստի համար օրական մեկ կամ երկու հռոմեական գրոշ ունեին միայն: Կարելի է, հետևաբար, չափել կարևորությունը տրված ընծայի, մինչ գանձանակի մեջ ինչուն դրամներ գցող մեծահարուստները իրականում մեծ բան չեն տալիս:

Ունեզրկված՝ առավել ևս կողոպտված (ինչպես իր նմանները) և երեսի վրա թողնված դպիրների կողմից, որոնք գիտեին օգուտ քաղել անպաշտպան մարդկանցից, այրի կինը, որի մասին խոսում է Մարկոսը, շատ բան է տալիս այն քչից, որ մընում է իրեն. նա իր ամբողջ կյանքն է նվիրաբերում Աստծուն՝ կանգնելով այդպիսով ավետարանական պատգամի գծի վրա, որի մասին, սակայն, նա չի լսել բնավ:

Ինչպես կույր Բարտիմեոսը, որին Հիսուս հանդիպել էր Երիքովից դուրս գալու ժամանակ (Մարկ. Ժ 46—52), սա ևս հանդիսանում է ճշմարիտ աշակերտի տիպարը:

(Շարունակելի)



## «ЭЧМИАДЗИН»
## ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (ЯНВАРЬ 1987 Г.)


1. Редакционная—Во имя порядка и канона (стр. 3—7).

2. Проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I в Первопрестоле на Святое Рождество, 6 января 1987 г. (стр. 8—10).

3. Обмен приветственными телеграммами и посланиями по случаю Нового Года и Святого Рождества Спасителя между Его Святейшеством Верховным Патриархом и Католикосом Всех Армян Вазгеном I и главами сестер-Церквей (стр. 11—13).

4. Новогодние и Святорождественские поздравления Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I трем первосвященным Престолам Армянской Церкви, всем епархиальным предводителям и церковным общинам (стр. 14).

5. Обмен новогодними телеграммами между Его Святейшеством Вазгеном I и высокопоставленными государственными деятелями (стр. 15—18).

6. Визит Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I председателю Совета Министров Арм. ССР Ф. Саркисяну, 5 января 1987 г. (стр. 19).

7. Святорождественские торжества в Первопрестоле, 5—6 января 1987 г. (стр. 20).

8. Новый Год в Первопрестоле, 31 декабря 1986 г. (стр. 21—25).

9. Праздник святого Стефана Первомученика и рукоположение во дьяконы в Первопрестоле, 25 декабря 1986 г. (стр. 26—28).

10. Признание Его Святейшеством Вазгеном I заслуг ряда священников и присвоение им почетного сана протоиерея (о патриаршей энциклике благословения и присвоения)—(стр. 29).

11. Пребывание армянского хора кипрского учебного заведения Мелконян в Первопрестоле, 26 октября 1986 г. (стр. 30—36).

12. Церковная хроника. Новости. Описание торжеств, литургий и проповедей в Первопрестоле за январь месяц (стр. 37—38).

13. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Первопрестоле, 5 января 1987 г. (стр. 39—40).

14. Проповедь священника Нарека Матаряна в Первопрестоле, 4 января 1987 г. (стр. 41—42).

15. Интронизация нового главы Румынской Православной Церкви, 16 ноября 1986 г. (стр. 43).

16. Межцерковный вселенский вспомогательный съезд Всемирного Совета Церквей на Кипре, 17—26 ноября 1986 г. (стр. 44).

17. *Сурен Коланджян*—Вазген Первый Верховный Патриарх-Католикос Всех Армян, краткая хронология, 1908—1955, Первопрестольный Святой Эчмиадзин, 1986 г. (рецензия)—(стр. 45—51).

18. *Отец Мишель Кенел*—Как читать Евангелие (перевод с французского)—(стр. 52—60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1987)


1. **Editorial**—On the name of order and canon (pp. 3—7).

2. The sermon of Holy Christmas of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etehmiadzin, 6-th January 1987 (pp. 8—10).

3. The congratulatory cables and letters exchanged between His Holiness Vasken I, the supreme Patriarch end Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister Churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pp. 11—13).

4. The congratulatory letter of His Holiness written to the ihree hierarchical Sees of the Armenian Church, all diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (p. 14).

5. Cables exchanged between His Holiness and state high personalities of Armenian S.S.R. on the occasion of the New Year (pp. 15—18).

6. The visit of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, to Mr. Fadey Sarkesian, the Prime Minister of the Armenian S.S.R. 5-th January 1987 (p. 19).

7. The solemnities of Holy Christmas in the Mother See, 5—6th January 1987 (p. 20).

8. The New Year feast in the Holy See, 31st December 1986 (pp. 20—24).

9. The St. Stephen celebration and deaconal ordination in the Holy See, 25-th December 1986 (pp. 25—28).

10. With His encyclical of 31st December 1986 His Holiness granted the title of archpriest to four clergymen of the churches of Etchmiadzin (p. 29).

11. The choir of Melkonian Educasional Institute of Cyprus in the Holy See, 26-th October 1986 (pp. 30—36).

12. Description of the Divine liturgy services sermons delivered in the Holy Cathedral and feasts which have taken place in the Mother See during the month of January 1987 (pp. 37—38).

13. The congratulatory allocution of Archbishop Nerses Bozabalian in the Patriarchal Residency on the occasion of the New Year, 1st January 1987 (pp. 39—40).

14. The sermon of Father Narek Madarian in the Holy Cathedral, 25-th Jauuary 1987 (pp. 41—42).

15. The enthronement ceremony of the new Patriarch of the Rumanian Orthodox Church, 16-th November 1986 (p. 43).

16. The conference of the Commission of W.C.C.'s World consultation on interchurch aid, Refugee and World service in Cyprus, 17—26-th November 1986 (p. 44).

17. **Sooren Kolandjian**—Vasken I, the Catholicos of All Armenians, brief chronology of His life, from 1908 until 1955, Holy See of Etchmiadzin, 1986 (pp. 45—51).

18. **Father Michel Quesnel**—„How to read a gospel" (Armenian translation from French)—(pp. 52—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1987)


1. **Editorial:** „Au nom du maintien de l'ordre et du réglement" (pp. 3—7).

2. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 Janvier 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la naissance de notre Seigneur Jésus-Christ (pp. 8—10).

3. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 11—13).

4. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An (p. 14).

5. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la R.S.S. d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pp. 15—18).

6. Visite de Sa Sainteté à M. Fadey Sarksian, président du Conseil des Ministres de la R.S.S. d'Arménie, le 5 Janvier 1987 (p. 19).

7. Solennités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête de la Sainte Nativité (5—6 janvier 1987)—(p. 20).

8. Description des festivités organisées au Saint-Siège d'Etchmiadzine la nuit du 31 décembre 1986 (pp. 21—25).

9. Célébration de la fête de Saint Etienne et ordination de diacres dans la cathédrale de Saint-Etchmiadzine (25 décembre 1986)—(pp. 26—28).

10. Par son encyclique du 31 décembre 1986 Sa Sainteté a conféré le titre d'archiprêtre aux 4 curés des églises de la ville d'Etchmiadzine (p. 29).

11. La chorale du Collège arménien Melkonnian de Chypres au Saint-Siège d'Etchmiadzine (26 octobre 1986)—(pp. 30—36).

12. Brèves information concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1987 (pp. 37—38).

13. Allocution de l'archevêque Nersès Bozabalian prononcée le 1er janvier 1987 dans la résidence patriarcale à l'occasion du Nouvel An (pp. 39—40).

14. Sermon du Père Narek Matarian prononcé le 25 janvier 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 41—42).

15. Cérémonie d'intronisation du nouveau chef de l'Eglise orthodoxe roumaine (16 novembre 1986)—(p. 43).

16. Consultation mondiale de la Commission d'Entraide des Eglises et d'Assistance aux Réfugiés du COE tenue à Chypres du 17 au 26 novembre 1986 (p. 44).

17. **Souren Kolandjian**—„Vasken Ier, catholicos de tous les Arméniens". Chronologie abrégée de sa vie, de 1908 à 1955, St.-Siège d'Etchmiadzine, 1986 (compte rendu)—(pp. 45—51).

18. **Père Michel Quesnel**—„Comment lire un évangile" (traduction du français en arménien)—(pp. 52—60).



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ի՛ սեր կարգ ու կանոնի . . . . . 3
Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի Սուրբ Ծննդյան քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում . . . 8
Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . 11
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին . . . . . 14
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ . . . 15
Ընդունելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդում . . . . 19
Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում . . . . . 20
Ամանորը Մայր Աթոռում . . . . . 21
Սուրբ Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում . 26
Հայրապետական գնահատություն . . . . . 29
Մելքոնյան կրթական հաստատության երգչախումբը Մայր տաճարում . . . 30
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . 37
Վճիռ Հայրապետական . . . . . 38
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ—Քարոզ . . . . . 39
ՆԱՐԵԿ ՔՀՆ. ՄԱՏԱՐՅԱՆ—Քարոզ . . . . . 41
Ռումեն ուղղափառ Եկեղեցու նոր հովվապետի գահակալությունը . . . 43
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջեկեղեցական տիեզերական օժանդակության համագումար Կիպրոսում . . . . . 44
ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ—Վազգեն Առաջին կաթողիկոս Ամենայն Հայոց, համառոտ տարեգրություն 1908—1955, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986 . . . 45
ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ—Ինչպես կարդալ Ավետարանը . . . . . 52
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата. . 61
«Etchmiadzin» official monthli of Holy Etchmiadzin . . . . . 62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 63



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**
**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 15.01.1987 թ.: Ստորագրված է տպագրության 20.01.1987 թ.:
Տպագրական 4 մամուլ+5 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 77

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.**



Библиотека Армянского Ц.Р.
Центральная библиотека